# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԳ

Ժ. ՏԱՐԻ

Նոյեմբեր - դեկտեմբեր

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

XI - XII

1953

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Էջ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական գրությունը Մայր Հայրենիքի և Սփյուռքի բոլոր բեմերին . . . . . . . . . 3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Հայ ժողովրդի ազատության և անկախության փառապանծ տոնը . . . . . . . . . . . . 4
Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի սպանության քսանամյակը . . . 8
ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ.— Մեր Հայրենիքի տոնը . . . . 11
Թ․ԼԹԱԿԻՑ.— Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի պատասխանները մեր հարցումներուն . . . . . . . . . . 13
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ.— Հայոց դերը բյուզանդական կայսրության մեջ 15
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.— Հայոց անձնանունները . . . . . . 25
Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Մանրանկարիչ Սարգիս Պիծակ . . . . . . 30
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Հուշարձանների պահպանությունը և վերանորոգությունը Սովետական Հայաստանում . . . . . . . . 41
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ . . . . . . . . . . . . 51
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ . . . . . . . . . 55
Ա. ՄԱՐՏՈՒՆԻ.— Նոր համալսարում Միութենական ակադեմիայում . . 60
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տասնամյակը . . . 69
ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ . . 73
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ . . . . . . 81
Տպավորություններ Սովետական Հայաստանի մասին . . . . . 84
Հայ գաղութը Իսրայելի մեջ . . . . . . . . . . . 86
Ռ. Ս.— Կ. Սիտալ, «Պայքարի երգեր» . . . . . . . . 88
Ռուսաստանից ստացված արժեքավոր վավերագրեր և ձեռագրեր . . . 90
Դիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ . . . . 91
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1953 թվականի ընթացքում տպագրված նյութերի . . . . . . . . . . . . . 92



ԳՐԱԴԱՐԱՆ



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1953 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ ՁԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ

Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի նախկին առաջնորդ գերաշնորհ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը հրահանգել է թեմի եկեղեցիներին՝ Հայ Եկեղեցու պատմական տիտղոսի վերա հավելու «ՕՐԹՈԴՈՔՍ» մակդիրը, որի դեմ բազմաթիվ բողոքներ ենք ստացել: «Օրթոդոքս» մակդիրը Հույն և Ռուս եկեղեցիների և վերջինիս ավտոկեֆալ (ինքնանկախ) ճյուղերի արտահայտիչ մակդիրն է: Այսու հայտարարում ենք Հայ Եկեղեցու աթոռակալներին, առաջնորդներին և հայ ժողովրդին, որ Հայ Եկեղեցու պաշտոնական անունը կամ տիտղոսն է «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ», որ և՛ պատմական է և՛ դարերի գործածությամբ սրբագործված Հայ Եկեղեցու և ժողովրդի կողմից, և ո՛չ ոք իրավատեր է հիշյալ պատմական տիտղոսի վերա հավելում կամ հապավում կատարել:

Հայ Եկեղեցու օրենսդիր մարմինը— Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ գումարված ազգային-եկեղեցական ժողովն է, որի որոշումները միայն օրենք են, երբ նախ հայտարարվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակով:

Հայտարարելով վերոհիշյալը, այսու հորդորում ենք բոլոր հոգևորականության և եկեղեցական մարմիններին՝ նախանձախնդիր լինել վերոհիշյալ սկզբունքին, հեռի մնալ ինքնովի կարգադրություններից և ազատ մնալ պատասխանատվությունից: Ազատ է ամեն ոք գիտական ուսումնասիրություններ կատարել, սակայն ո՛չ գործադրել ուսումնասիրությանց արդյունքը, առանց իրավատեր մարմնի թույլտվության:

Վազգեն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին,
10 դեկտեմբերի 1959 թ.

# Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ ՏՈՆԸ

Ամեն տարի, հայ հայրենասեր ժողովուրդը, մեծ շուքով և արժանավայել հանդիսությամբ, նորանոր հաղթանակներով ու նվաճումներով է դիմավորում իր Հայրենիքի ազատության և անկախության փառապանծ տոնը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմական մեծ իրադարձությունը:

1920 թվականի Նոյեմբերի 29-ը...:

Այդ թվականը հայ ժողովրդի պատմության մեջ և հայ կյանքում տեղի ունեցած ամենաանջնջելի պատմական իրադարձությունն է, հայ ժողովրդի պատմության խոշորագույն շրջադարձային հանգրվանը, երբ մահվան վիհի եզերքին հասած, անօգնական ու հյուծված, դարերով տրորված հայ ժողովուրդը, վիրավոր սրտով ու արյունաքամ, բայց ապրելու և հաղթանակելու արի ու հերոսական վճռականությամբ, ոտքի կանգնեց, ռուս մեծ ու ազնիվ ժողովրդի եղբայրական օգնությամբ, մի անգամ ընդմիշտ թոթափելու դարերի ստրկության փոշին, փշրելու դարավոր ազատազրկության շղթան և արևի տակ իրեն համար նվաճելու ազատ ու անկախ ապրելու իրավունք, պետականություն ու Հայրենիք:

Նոյեմբերի 29-ը— այդ հաղթանակի օր է հայ ժողովրդի համար՝ նրա մղած կյանքի ու մահվան ահավոր պայքարում:

Նոյեմբերի 29-ը— այդ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենափառավոր ու հերոսական մի էջն է՝ ոսկի տառերով գրված հայ ժողովրդի պատմության մեջ և հայ ժողովրդի սրտում:

Նոյեմբերի 29-ը— այդ փառքն է հայ ժողովրդի և պանծացումը նրա կենսունակության, ուժի և ազատասիրության:

Հարուստ է հայ ժողովրդի հերոսական պատմությունը ազգային-ազատագրական պայքարի անմոռանալի դրվագներով: Բայց մենք մեր ողջ պատմության մեջ չունենք մի երկրորդ Նոյեմբերի 29:— Այդ համաքական հերոսությունն է հայ ժողովրդի, երբ նա իր սեփական ձեռքերի մեջ վերցրեց իր բախտն ու կյանքը տնօրինելու իրավունքը:

Նոյեմբերի 29-ը— այդ հայ ժողովրդի հասարակական-քաղաքական մտքի հասունության, քաղաքական զգոնության ու հեռատեսության, ազգային ինքնագիտակցության, մարդկային արժանապատվության մեծ զարթոնքի օրն էր, երբ նա իր և իր երկրի հակատագիրը ընդմիշտ կապեց ռուս ժողովրդի բախտի ու պատմության հետ ու սկիզբ դրեց իր պատմության մեջ նմանը չտեսնված ազգային, պետական, տնտեսական, կուլտուրական մի փառավոր դարաշրջանի:

Հազարամյակներ չեն տվել հայ ժողովրդին ա՛յն, ինչ տվեց վերջին մի երեսնամյակը:

Նոյեմբերի 29-ը է՛, ավելի համախմբեց հայ ժողովրդին իր Հայրենիքի և նրա ազատության ու անկախության գաղափարի շուրջ: Նա կռեց ու կոփեց հայ ժողովրդի անքակտելի միասնությունը:

1920 թվականին անդնդի եզրին էր հասել հայ ժողովուրդը: Աղքատության, սովի, մահվան մռայլ ուրվականը սավառնում էր ողջ երկրի վրա: Թշնամին խուժում էր դեպի երկրի սիրտը: Սովն ու աղքատությունը լրացնում էին պակասը: Ընդհանուր աղետը, հայ ժողովրդի գոյության սպառնացող մեծ վտանգը առաջ էր բերել ընդհանուր վրդովմունք և զայրույթ ամբողջ երկրում: Հայ ժողովուրդը բարձրացրեց ապստամբության ազատաբեր դրոշը՝ հաղթելու և ապրելու վճռականությամբ: Նա իր պայծառ աչքերով տեսել էր իր գլխին կախված օրհասական վտանգը, և իր փրկությունը տեսնում էր սովետական կարգերի հաստատման մեջ: Հայ ժողովրդի համար մռայլ ու ճգնաժամային այդ րոպեներում օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդի բարեկամ և ազատարար ռուս ազնիվ ժողովուրդը՝ իր բախտին տեր դարձած մեծ Հոկտեմբերով:

Հնչել էր հայ ժողովրդի ազատության ու փրկության ժամը: Նոյեմբերի 29-ը ոտքի կանգնեցրեց հայ ժողովրդին, օր, արև, կյանք ու ճանապարհ տվեց նրան, երգ ու երազ՝ նրա հոգուն, նրա պատմության և կյանքի համար ստեղծված մռայլ ու ծանր օրերին, ու մոխիրների և ցավի տակից հառնե՜լ ոգին հայ որբ ժողովրդի ու վերածընվեց: Արյունաքամ հայ հոգու և հայ հողի վրա ծագեց մի նոր ու պայծառ առավոտ: Հոկտեմբերի ազատարար շնչի տակ միայն հայ ժողովուրդը տեսավ իր դարավոր երազների, բաղձանքների շքեղ իրականացումը, իր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը, որի համար հերոսական սերունդներ պայքարեցին ու մեռան անհավասար մարտերում զեն ի ձեռին, Հայրենիքի սերն ու ազատության գաղափարը իրենց հոգում:

Ինչի՞ է ձգտել հայ ժողովուրդը — ունենալ ազատ հող, խաղաղություն ու Հայրենիք, որից նա դարերով զուրկ է մնացել:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շնչով ու գաղափարով վերածնված հայ ժողովուրդը տիրացավ քաղաքական ու տնտեսական այդ ազատության, խաղաղության ու իր փառավոր նախնյաց արյունով ողողված իր պատմական Հայրենիքին:

Հայրենի այդ նվիրական հողերի վրա հայ ժողովուրդն այսօր իր արդար ու ստեղծագործ աշխատանքով ու հանճարով ժայռերից վարդեր է քաղում, քարերը վերափոխում հացի, լույսի, կյանքի, և կյանքը դարձնում՝ ներկա ու գալիք հայ սերունդների համար անսահման բարիքների մի անսպառ աղբյուր: Դարերի անլուր ցավերից, հուսահատություններից, հերոսական պայքարից հետո, այսօր հայ ժողովուրդը մի գեղեցիկ Հայրենիք ունի, Արևելքի դռների առաջ, կապույտ և երկնամերձ լեռների ծոցում, հայրենի պատմական գետերի կարկաչի ու ծաղիկների բույրի մեջ, մի Հայրենիք՝ ազատ ու անկախ՝ ուր հայ ժողովուրդը բուժում է իր անցյալի արյունոտ վերքերը:

Հայ ժողովուրդը տեր դարձավ իր հողին, հացին, պատվին, կյանքին ու ճակատագրին: Երեսուն դարեր շարունակ տառապել է նա: Իր կյանքի և պատմության վերջին երեսուն բախտավոր ու խաղաղավետ տարիներին է, որ վերջ ի վերջո գտել է նա խաղաղության և ազգային վերածնության ուղին:

Սովետական Հայաստանն է հայ ժողովրդի երազների, դարավոր տառապանքների վերջնական ու լուսավոր հանգրվանը, նրա Ավետյաց երկիրը:

«Հայր բացի Սովետական Հայաստանից, չունի այլ Հայրենիք»,— պատգամում է Ազգիս հայրենասեր ու մեծազործ Հայրապետը՝ Գևորգ Զ-ը: Այդպե՛ս է մտածում յուրաքանչյուր ճշմարտապես հայրենասեր հայ:

Հայրենասիրությունը ժողովուրդների կյանքում, այդ թվում և հայ ժողովրդի կյանքում, մարդկային ամենախոր զգացմունքներից մեկն է, ամրացված դարերով և հազարամյակներով. հոսել է մեր պատմության ողջ ընթացքում ազատասեր հայ ժողովրդի երակներից հայրենասիրության ոգին՝ մեր գետերի պես վարար ու անսպառ: Մեր անցյալի և ներկա գրականության հիմնական մոտիվը՝ Հայրենիքի գաղափարն է. և դա միանգամայն բնական է. դարեր շարունակ մեր ժողովուրդը կորցրել է իր քաղաքական ազատությունն ու անկախությունը և ընկել օտարի դաժան ու ծանր լծի տակ՝ զրկված մարդկային տարրական ազատությունից, կյանքի ապահովությունից. բայց միշտ երազել է նորից ունենալ ազատ մի կտոր հող ու ազատություն, իր հայրենի տան ապահովություն: «Հայրենիքի երգը հընչել է մեզանում առավել կամ պակաս ուժով Եղիշեից ու Խորենացուց սկսած մինչև մեր օրերը: Հայրենասիրության բոցավառ զգացումն ու գաղափարը կարմիր թելի նման անցնում են հայ ժողովրդի պատմության և գրականության միջով մինչև այսօր»: Եվ հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի հոգում չի հանգել երբեք և՛ ազատության անշեջ ծարավը և՛ հայրենասիրության բոցավառ զգացումը: Եվ Նոյեմբերի 29-ը այդ երկու զգացմունքների ամենաշքեղ արտահայտությունն էր: Ամեն անգամ, երբ օտարը սուր է բարձրացրել հայ ժողովրդի ազատության և անկախության վրա, նրա հոգու վրա, հայ ժողովուրդը ազատագրական պայքարի է դուրս եկել:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը սերտորեն կապված է եղել ռուս մեծ ժողովրդի անվան ու հերոսական պատմության հետ, մանավանդ նոր ժամանակներում, Իսրայել Օրու և Դավիթ-Բեկի օրերից:

Հայ ժողովրդի մեծ ու հայրենասեր զավակ, մեր նոր գրականության ու լեզվի հիմնադիր անմոռանալի Աբովյանն իր «Վերք Հայաստանի» պատմական երկում ցույց է տվել հայ ժողովրդի համակրանքն ու վստահությունը ռուս մեծ ու ազնիվ ժողովրդի նկատմամբ, որի շնորհիվ նա փրկվեց օսմանյան ու պարսկական դաժան բռնակալություններից:

«Ռուս անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես նրա արյունը, որով մենք ազատվել ենք ընդմիշտ... ռուսի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն»:

Աբովյանի այս քաղաքական հեռատես ուղղությունը բխում էր հայ ժողովրդի արմատական շահերից և խորը համոզմունքից: Ու «Վերք Հայաստանի»ն բաց էր անում ո՛չ միայն հայ ժողովրդի դարավոր վերքի արյունոտ պատմությունը, այլ նաև դա մի «հզոր ջատագովություն և օրհներգ էր ռուս ազգին, նրա ուժին, բարերարվածի ու փրկվածի ներբող՝ ողողված ուրախության արտասուքներով»:

Ռուսական օրիենտացիան ամրապնդվեց ո՛չ միայն Արևելյան Հայաստանում, այլ նաև հեռավոր հայ գաղութներում: Հայ ժողովուրդը իր հայացքը ռուս ժողովրդին էր հառել և նրա մեջ էր տեսնում իր ազնիվ ու անխարդախ բարեկամին:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով հայ և ռուս ժողովուրդների պատմական հարաբերությունը վերածվեց սրտառուչ ու անքակտելի բարեկամության:

Հայ ժողովրդի համակրանքն ու մերձեցումը դեպի ռուս ժողովուրդը երբե՛ք պատահականություն չի եղել: Դա արդյունք էր ժամանակի շատ ճիշտ ու արդարացի գնահատման, հայ ժողովրդի կենսական շահերի: Հայ ժողովուրդը, կորցրած իր երկրի միասնականությունն ու քաղաքական ազատությունը, շատ լավ էր հասկանում, որ իր սեփական ուժերով չի կարող ազատվել և գտնել իր անկախությունը: Հայաստանի միացումը Ռուսաստանին անցյալ դարի 20-ական թվականներին սկիզբ դրեց հայ և ռուս ժողովուրդների պատմական բարեկամության:

Ո՞վ ծանոթ չէ հայ ժողովրդի և նրա երկրի ողբերգական անցյալին: Դժոխք է եղել նրա կյանքը, ավելի իրական ու ահավոր դժոխք քան Դանտեի «Դժոխք»ը: Անցյալում հայ ժողովրդի ապրած տառապանքն ու ողբերգությունը ո՛չ մի ժողովուրդ չի տեսել ու ապրել ո՛չ մի աշխարհում: Այնուամենայնիվ ո՛չ մի բարբարոս, ո՛չ մի բռնակալ երբե՛ք չեն կարողացել նվաճել ու ընկճել հայ ժողովրդի հայրենասիրական անընկճելի ոգին: Դիմացել է, կուրծք է տվել նա մեծ աղետների, աշխարհավեր հեղեղների և հասել այսօրվա լուսապայծառ հանգրվանին: Դարերի ծանրությունը չի ընկճել հայ ժողովրդի կենսունակությունը, այլ կռել ու կոփել է նրա ոգին ու դարձրել նրան քաջարի մարտիկ իր գոյության, իր Հայրենիքի պաշտպանության: Նրա գլխով են անցել դարերի փորձությունները ու դառնությունները. նա իր հողի վրա տխուր ականատեսն է եղել արևելյան բռնակալությունների բարձրացման ու փոշիացման, որոնք իբրև մրրիկ ու փոթորիկ եկել ու անցել են նրա հոգու ու երկրի վրայով. բայց կանգուն է մնացել նա, հոգով աննվաճ, ազատատենչ ու լուսաբաղձ. «մի ձեռում թուր կայծակին» պաշտպանել է նա իր հայրենի տունն ու ապրելու իրավունքը, մյուսում՝ մշակույթի զենքերը, հերկել է իր հողը և կերել է իր արդար հացը, ստեղծել է իր հոյակապ մշակույթը, արվեստի հրաշալիքները և իր մեծասքանչ լեզուն:

Իր գոյության դարավոր և հերոսական պայքարում, հաճախ հայ ժողովուրդը, խաչակրաց օրերից սկսած, իր հավատավոր ու բարի աչքերը հառել է նաև Արևմուտքի մերթ այս, մերթ այն «քրիստոնյա» պետության և նրանցից սպասել իր փրկությունը: Դարերի դառն փորձը, պատմության ընթացքը և հանգամանքները ցույց են տվել հայ ժողովրդին, որ նրա միակ բարեկամը ռուս ժողովուրդն է: Արևմտյան «քրիստոնյա» պետությունների հավիտյան հանցավոր քաղաքականությունը Համաշխարհային առաջին պատերազմի օրերին՝ մեծ ու ահավոր աղետի առաջ կանգնեցրեց հայ ժողովրդին:

Ի՞նչ տվեց «քրիստոնյա» Արևմտյան Եվրոպան հայ ժողովրդին — տարիներով շահարկում «Հայկական հարց»ի, շահագործում՝ ժողովուրդների՝ այդ թվում և հայ ժողովրդի ազգային ինքնորոշման, մյուս կողմից սանձարձակում՝ Համիդների ջարդարար և արյունոտ ձեռքերի: ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՆՑ ՀԱՅԻ — ահա՛ Արևմուտքի «հայասիրության» արգասիքը: Եվ այդ բոլորի արդյունքն այն եղավ, որ բնաջնջեցին աշխարհի ամենահին ու քաղաքակիրթ մի ազգի՝ հայ ժողովրդի զգալի մի հատվածը, քշեցին նրան իր բազմադարյան Հայրենիքից, և ուզեցին ջնջել նրա անցյալը, ներկան ու ապագան:

Հայ ժողովուրդը երբե՛ք չի մոռանա «քրիստոնյա» Արևմուտքից ստացած իր խոր վերքն ու անարգանքը... հայ ժողովրդի հիշողության մեջ միշտ թարմ կմնան իր մեկ միլիոն

եղբայրների և քույրերի գաղութային կոտորածների արյունոտ պատկերները...

Բյուր երազներ են ծաղկում այսօր հայ ժողովրդի սրտում: Ամեն օր իր լուսավոր երազներին շքեղ մարմին է տալիս հայ ժողովուրդն իր աշխատանքով ու տաղանդով:

Ցնծություն է այսօր ամեն հայ հայրենասեր մարդու հոգում, ամեն հայ ընտանիքում: Անցնող յուրաքանչյուր տարի երջանկության, հաղթության նոր զարուններ է բերում մեր երկրին և մեր ժողովրդին:

«Բնաշխարհի հայությունը իր ազգային պետության հիմքերն է կերտում ու ամրապնդում և հրաշագործում ու պայծառազարդում հայրենական սուրբ օջախը, որի լույսի և ջերմության ուժով այսօրվա սերունդը անօրինակ թափով ու հանճարով դարձնում է ո՛չ միայն իր, այլև գալոց սերունդների երջանկությունը» (Գևորգ Զ. Կաթողիկոս):

Այսօր պայծառ է հայ ժողովրդի ներկան, է՛լ ավելի հուսալից՝ նրա ապագան: Այսօր ստեղծագործում, երգում և ուրախանում է հայ ժողովուրդը և օրհներգում այն փրկարար նախախնամական ձեռքը, որ ճանապարհ է բացել նրա համար դեպի նոր կյանք ու արևաշող ապագա:

ՓԱ՛ՌՔ ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ:

## ՂԵՎՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԸ

*Լրացավ ամենից սիրված ու հարգված Հոգելույս և հավետ ողբացյալ բարձրաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի խուժդուժ և գազանային սպանության քսան տարին։*

*Հայ հավատացյալ ու հայրենասեր ժողովուրդը, մեծից մինչև փոքրը, ողբաց անդարմանելի կորուստը իր հայրենասեր ու հավատավոր մեծ զավակին, որը իր ողջ գիտակցական կյանքը, առանց մնացորդի, նվիրել էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասին, հայ ժողովրդի դատին, նրա Հայրենիքին ու ապագային։*

*Ընկավ մեր օրերի նոր Զաքարիան՝ Դուրյան սրբազանը, հայրապետական գավազանը ձեռքին, Աստուծո տան մեջ, Աստուծո սեղանի առաջ, սուրբ պատարագի սրբազան պահին, երբ նրա շրթները խաղաղության, սիրո, հայրենասիրության և համերաշխության խոսքեր էին ասում իր ժողովրդին, իր հոտին...*

*«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, այս տխուր առթիվ, թարգմանը հանդիսանալով հայ հավատացյալ ժողովրդի սրտագին զգացմունքներին, քաղցր պարտականություն ունի, Դուրյան սրբազանի խուժդուժ սպանության քսանամյակի այս օրը, ոգեկոչելու սրբազանի պայծառ ու սրբասուրբ հիշատակը, որը զոհը հանդիսացավ իր պարտքի և կոչման, իր եկեղեցասիրության և հայրենասիրության և նահատակվեց քաջ մարտիկի նման իր պարտականության դիրքերում, աննահանջ, արի, մարտական։*

*Նպատակ չունենք նորից հրահրել կրքերը։ Բայց փաստը մնում է փաստ, որ Դուրյան սրբազանի սրտի դեմ ուղղված մահացու հարվածը, ամենից առաջ, ուղղված էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության և հայ ժողովրդի ազգային-եկեղեցական ցանկալի միասնության դեմ, հայ ժողովրդի ազգային շահերի դեմ։*

*Դուրյան սրբազանը զոհ գնաց Հայաստանյայց Եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնականության սրբազան գաղափարի թշնամիներին։*

*Այսօր էլ Սփյուռքում կան տխուր մարդիկ, որոնք իրենց նեղ, եսասիրական և հատվածային շահերի համար լարում են հայը հայի դեմ, եղբայրն եղբոր դեմ և ամեն օր հանուն 30 արծաթի վաճառում են ազգ ու Հայրենիք, Եկեղեցի և ժողովուրդ, և պատրաստ են իրենց ձեռքերը թաթախելու հայ ժողովրդի ազնվագույն և հայրենասեր որդիների անմեղ արյան մեջ։*

*— Կայե՛ն, ո՞ւր է քո եղբայրը...*

*Այսօր էլ կան Սփյուռքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի ազգային-եկեղեցական միասնականության դեմ ձեռք բարձրացնող, անիծապարտ, անճարակ Կայեններ... Հարազատ եղբոր անմեղ արյունը կա այդ կայենանման մարդկանց ձեռքերի, խղճի և սրտի վրա։ Ժամանակը չի կարող ջնջել այդ անմեղ արյան բողոքը. «Եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարիւնէն Աբելի արդարոյ մինչև ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ զոր սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ» (Մատթ., ԻԳ 35)։*

*Հայրենասիրության և եկեղեցասիրության զգացումը Դուրյան սրբազանի մեջ միաձուլվել և կազմել էր մի անսպառ աղբյուր հավատի, ներշնչման, կորովի, պայքարի։*

*Հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը սրբազանի նկարագրի ամենաբնորոշ գծերից մեկն էր հանդիսանում։ Հայրենիքի գաղափարն ու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սերը կարմիր թելի նման անցնում էին սրբազանի ողջ կյանքի ու գործունեության միջով։*

*Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ խաղաղության, հայրենասիրության, համերաշխության խոսք է ասել հայ ժողո-*

վրրդի զավակներին։ Այդ խոսքն էր ասում նաև Նահատակ սրբազանը։ Ու գտնվեցին մարդիկ՝ անպիտան ու հավատոս, որոնք ուզեցին արյան մեջ խեղդել համերաշխության, արդարության, օրենքի և սիրո ձայնը։

Դուրյան սրբազանը միշտ էլ հանդես է եկել ներքին պառակտողական ուժերի, իբր քաջ հովիվ հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնականության գաղափարների։

Հավատի, հայրենասիրության, գիտակից պարտաճանաչության մարմնացումն էր Դուրյան սրբազանը։ Նա մեր այն հազվագյուտ հայրենասեր և եկեղեցասեր հոգևորա-



Երջանկահիշատակ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյան

կենտրոնախույս և ազգավնաս տարրերի դեմ խաղաղության, համերաշխության քարոզով։ Նա համոզված է եղել, որ հայ ժողովրդի հզորությունը, ուժը, ապագան, իր ազգային-եկեղեցական միասնության մեջ են։ Հաճախ նա իր քարոզներով, կոչերով, իր կյանքի կենդանի օրինակով, հանդես է եկել

կաններից մեկն էր, որ իր ամբողջ կյանքը, հոգով ու սրբությամբ, նվիրել է իր ժողովրդին, իր Եկեղեցուն, և անձնվիրաբար ծառայել նրանց մինչև իր եղերական մահվան տխուր րոպեն. ավետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ, քարոզել գերեաց զթողութիւն։

Հայ բարձր հոգևորականության սրբազան պարտականությունն է վառ պահել հայ հավատացյալ ժողովրդի սրտում հայրենասիրության և եկեղեցասիրության վառ զգացմունքը, հայրենի ավանդությունների նախանձախնդրությունն ու ոգին։ Դուրյան սրբազանը հանդես եկավ իր պարտաճանաչության ողջ գիտակցությամբ, իր բնավորության ամուր և կայուն գծերով, իբր հոգևորական, իբր մարդ, իբր հայրենասեր։

Իր հոգեկան ու բարոյական այս բարեմասնություններով, Դուրյան սրբազանը բացառիկ տեղ էր գրավում մեր բարձրագույն հոգևորականության շարքերում։ Սրբազանը միշտ սիրվել ու հարգվել էր հայ ժողովրդի կողմից իր անկաշկանդ հայրենասիրության և եկեղեցասիրության համար։ Նա ձգտել է միշտ բարձր պահել հայ հոգևորականի կոչումը, ազգային ոգին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անկախությունն ու հայրենավանդ կարգն ու սարքը և պայքարել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վեհիրավության համար, սարկավագության օրերից մինչև բարձրագույն դիրքերը։

Անորոշություն, տարտամություն չկար ո՛չ նրա զգացմունքների և ո՛չ նրա խոսքերի մեջ, երբ նա խոսում էր իր Եկեղեցու և իր Հայրենիքի մասին։

Նահատակ սրբազանը համարձակ հանդես էր գալիս հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության սրբազան քարոզով։ Նա չէր սիրում մանվածապատ, ընդհանուր խոսքեր, երբ խոսում էր հայ Հայրենիքի և Ս. Էջմիածնի մասին։ Նրա «այո՛ն» այո՛ն էր և «ո՛չն» ո՛չ։

Այդպե՛ս էր Դուրյան սրբազանը։ Փոքրուց նա մեծացել ու դաստիարակվել էր հայ ազգային-եկեղեցական ավանդություններով Հարսուտ Արմաշի դպրեվանքում, Օրմանյան և Եղիշե Դուրյան սրբազանների մոտ, և ուխտել ծառայելու հայ ժողովրդին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, անմնահանջ սիրով և անձնվիրությամբ։

«Ի՞նչ է հոգևորականը առանց սիրո, կոչման և անձնվիրության, եթե ոչ մի ձևապաշտ պաշտոնյա, կոչված յուր որովայնին ծառայելու, փոխանակ մեր հոգու ազնվացման ճշմարիտ սպասավոր լինելու»,— գրում է իրավամբ Ազգիս մեծանուն Հայրապետ Գևորգ Զ.ը։

Սերն ու անձնվիրությունն է, որ ազնվացնում է հոգևորականին, և սրբացնելով նրան պաշտամունքի առարկա է դարձնում, ինչպիսին էր Դուրյան սրբազանը։

Մեծ է և գնահատության արժանի նաև Դուրյան սրբազանի ստեղծագործական վաստակը, մանավանդ նրա «Պարզ քարոզների շարքը բաղկացած 5 հատորից, գրված սրբազանի «խորունկ համոզումի և հավատի շնչով»։ «Սիրեցե՛ք ճշմարտությունը և ապրեցե՛ք ճշմարտության համար...— գրել է նա։— ...Դժբախտ է այն մարդը՝ որուն ներսիդին չկա սէր առ Աստված և առ ընկերն. վա՜յ անոր, որուն սիրտը ատելության բույն է և ոչ սիրո. վա՜յ այն սրտին՝ որ մաքուր չէ, վասնզի պիտի չտեսնե զԱստված. վա՜յ այն սրտին՝ որուն հրապը մարեր է, սիրո հրապը, վասնզի խավարի մեջ է ու խավարի մեջ պիտի մնա»։ Սրբազանի գրչին են պատկանում նաև «Ջորս Ավետարանները», «Մկրտության խորհուրդը», «Ջորս Ավետարանների ծագումը և վավերականությունը»։ Իր մեծանուն ուսուցչի՝ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի քահանայության 50-ամյա հոբելյանի առթիվ, նա հրատարակել է «Դպրեվանքյան քարոզները»։ Սրբազանի անտիպ մնացած գրական վաստակներից են «Ս. գրոց բնապատմությունը», «Քարոզի ծրագիրները», «Քարոզելու արվեստը» և «Բառարան Ս. Գրոց բնապատմության»։

Դուրյան սրբազանը կարճատև, բայց փառավոր ու արդյունաշատ կյանք ապրեց։ Նա սրբությամբ կատարեց իր պարտքը իր Աստծու, Եկեղեցու և ժողովրդի հանդեպ։

Ուխտե՛նք հավատարիմ մնալ այն կոչման ու ծառայության, այն գաղափարներին, որոնց նա նվիրեց իր կյանքն ու արյունը, և իր մահով մի անգամ ևս սրբագործեց նրանց։ Այդ կլինի սրբազանի պայծառ հիշատակը հարգելու և անմահացնելու առհավատչյան։

Հավե՜տ պատի՜վ և օրհնությո՜ւն Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի անթառամ հիշատակին։



# ՔԱՐՈԶ

ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ

## ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՈՆԸ

(Խոսված՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 33-ամյակի կապակցությամբ):

«Եթէ մոռացայց զՔեզ, Երուսաղէ՛մ, մոռասցի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեսցից զՔեզ, թէ ոչ նախ նուագեսցից զՔեզ, Երուսաղէ՛մ, ի սկիզբն ուրախութեան իմոյ»:

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ. 5—6:

Սաղմոսերգուի այս սրտագին զգացմունքը հայրենասիրության ու Հայրենիքին նվիրվածության մի արտահայտություն է։ Հայրենազուրկ բայց Հայրենիքի սիրով տոչորվող, Հայրենիքի կարոտով այրվող մի ժողովուրդ միայն կարող էր այդպիսի հայրենասիրական վառ զգացմունքներ արտահայտել։

Ո՞ւմ ավելի վայել է կրկնելու այս խոսքերը՝ եթե ոչ հայ հայրենասեր ժողովրդին, մանավանդ այսօր, երբ հայ ժողովուրդը իր վերածնության, Հայաստանում սովետական կարգերի հաստատման մեծ տոնն է տոնում։

Նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ու մեր Հայրենիքի պատմության մեջ իր նմանը չունեցող պատմական մեծ թվականն է. դա այն օրն է, երբ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց թոթափելու դարերի ստրկությունը և իրեն համար նվաճեց նոր կյանք, նոր պատմություն։

Հայ ժողովրդի Երուսաղեմը իր Հայրենիքն է, Հայաստանը։

Դարերով կորցրել էր հայ ժողովուրդը իր անկախությունը, նրա Հայրենիքը դժոխքի էր վերածվել, ուր նրա համար չկար կյանքի, ինչքի, պատվի ապահովություն, չկար հանգիստ. փախչում էր նա իր երկրից, իր վաթանից՝ օտար հորիզոնների տակ մի խաղաղ ու հյուրընկալ անկյուն փնտրելով, ու թափառում էր երկրից երկիր, քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, ողորմելի մուրացկան [illegible], մի ապահով անկյուն գտնելու համար, որպեսզի հանգչեցնի իր վիրավոր գլուխը։

Մյուս կողմից հայ ժողովրդի Հայրենիքը ավերակ էր դառնում ու իր ժողովրդից ամայանում. թափառական հայ ժողովուրդը դաղթականի ցուպը ձեռքին, դաղթականի անարգական տիտղոսը ճակատին, օտար հորիզոնների տակ, մազապուրծ փրկված, դռնեդուռ ընկած իր դառնություններն ու սուկումները պատմելով բախում էր օտարների սրտի ու հոգու դռները՝ նրանց գութը շարժելու, նրանցից ապաստան հայցելով։ Իսկ ովքեր չէին դաղթում, երկրում ապրում էին անտանելի և վշտալի մի կյանք, սարսափներով և տանջանքներով լցված։ Հայ գյուղացին չէր կարողանում ազատ դաշտ գնալ աշխատանքի՝ սրախողխող լինելու վտանգից. հայ կինը իր օջախից չէր համարձակվում դուրս գալ՝ սարսափելով առևանգումից, և առհասարակ հայ մարդը ապահովության, թալանի, կողոպուտի, բռնի ու անտանելի տուրքերի սարսափի տակ՝ արյուն արցունք էր թափում։

*Երկիրը դարձավ ավերակ, գյուղացու գութանն ու արորն՝ անգործ, դաշտերը՝ խոպան ու արնաներկ։*

*Հայ ժողովրդի ազգային ծանր դրությունը, ժողովրդական զանգվածների քայքայումն ու աղքատացումը, նրանց վիշտն ու տառապանքը լայն չափով իրենց արտահայտությունն են գտել մեր անցյալի գրականության մեջ։ Հայ բանաստեղծը սգում էր ժողովրդի վիշտը՝ «Հայի գիշեր, անհույս գիշեր, լի ահավոր խորհրդով...», իսկ Հայ Եկեղեցին, իր ժողովրդի ծով վշտերին վշտակից, տխուր ու սգավոր, օրհասական ճիգ էր թափում, ճիչ էր արձակում, ինչպես հավն ուրուրներից իր ձագերին պաշտպանելու տագնապալի ժամին. Նա բախում էր հզորների դռները հանուն քրիստոնեության ու Քրիստոսի սիրո, օգնություն էր խնդրում իր ժողովրդի համար։ Բայց Հայ Եկեղեցու այդ աղաչանքները միշտ էլ մնում էին ձայն բարբառոյ յանապատի։ Քրիստոնյա պետությունները միայն գեղեցիկ խոստումներ էին տալիս և ծիծաղում հայ ժողովրդի վշտերի վրա։*

*1920-ական թվականներին Արևելքից ու Արևմուտքից, իր իսկ հայրենի երկրում հայ ժողովուրդը երկու կրակի մեջ էր մնացել. վերջնականապես բնաջինջ լինելու սպառնալիքն էր սավառնում նրա գլխի վրա։ Եվ այդ տագնապի ժամին, որպես գարնան ավետաբեր ծիծեռնակ եկավ, օգնության հասավ և փրկության ձեռք մեկնեց հայ ժողովրդին՝ ազատարար ռուս ժողովուրդը։*

*Իր պատմության այդ ծանր օրերին հայ ժողովուրդը երբե՛ք չի կորցրել իր պայծառ հույսը իր ապագայի և վերջնական հաղթանակի մասին։ Բազմաչարչար, բզկտված, մահվան անդունդի եզրին հասած հայ ժողովուրդը իր աչքերը հառեց ռուս մեծ ժողովրդին։ Այդ օրվանից հայ ժողովուրդը իր կյանքը, պատմությունը, ապագան կապեց ռուս մեծ ժողովրդին։*

*Հայ ժողովուրդն իր անձնական կենսափորձով համոզվեց, որ իր միակ բարեկամն ու ազատարարը ռուս մեծ ժողովուրդն է։*

*Նոյեմբերի 29-ը դարերով տառապյալ Հայաստանին ազատություն և անկախություն բերեց, հարազատ պետություն ստեղծեց, որը դարձավ հայ ժողովրդի և Հայաստանի վերածնության խանձարուրը։ Իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազը՝ պետականություն, հող, ինքնուրույն կյանք ունենալու մասին։*

*Հայ ժողովուրդը ոտքի կանգնեց, ազատ ու լիաթոք շունչ քաշեց, իր Հայրենիքի ազատությունն ու խաղաղությունը ապահոված՝ խոպան դաշտերը մշակեց, շինեց, կառուցեց, ստեղծագործեց, խաղաղ ու հանգիստ կյանքով ապրել սկսեց։*

*Հայ ժողովուրդը չտեսնված արագությամբ, ստեղծագործ աշխատանքով, իր հարազատ պետության հոգատար հովանավորությամբ ու ղեկավարությամբ, այսօր դարմանում է իր անցյալի վերքերը և վառ հավատով է նայում իր ապագային։*

*Օր-օրի վրա հայ ժողովուրդը աճում, զարգանում, առաջադիմում է։ Նա իր ստեղծագործ աշխատանքով անբերրի դաշտերը պտղավետ ու կանաչավետ դարձրեց, պատմության գիրկն անցավ «Հայի գիշեր, անհույս գիշեր, լի ահավոր խորհրդով»։*

*Այժմ Հայաստանն ու հայ ժողովուրդը, սովետական բազմալեզու ժողովուրդների շարքում, առաջավոր դիրքերում, շինարարությամբ, կուլտուրայով՝ գիտության, գրականության, արվեստի լավագույն գործիչներով միշտ առաջադիմում, ծաղկում ու բարգավաճում են։*

*Այս մեծ ազգային տոնին Հայ Եկեղեցին սրտագին աղոթում է, որ անսասան, հզոր ու անպարտելի մնա մեր սիրելի Հայրենիքը։ Ինչպես Ազգիս Վեհափառ Հայրապետ Գևորգ Զ.ն է պատգամում իր ժողովրդին, արդարև, բացի Սովետական Հայաստանից, հայ ժողովուրդը չունի ուրիշ կռվան։*

*Անձնվիրաբար սիրե՛նք ու փայփայե՛նք անցյալում բազմաչարչար, այժմ շեն ու երջանիկ մեր Հայրենիքը, մեր հարազատ պետությունը։*

*Աղոթե՛նք ամենակարող Աստծուն, որ հաստատուն ու հարատև լինեն հայ ժողովուրդը, Սովետական Հայաստանն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ամեն։*

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՄԵՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ[1]

*ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչ տպավորություն թողած է Ձերդ Սրբազնության վրա Ամենայն Հայոց Ազգապետ և Կրոնապետ Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսը։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Ամենայն Հայոց Հայրապետը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոս մեր դարու հայ եկեղեցականության մեծագույն դեմքերեն մին է։ Հակառակ իր հառաջացած տարիքին, Նորին Սրբությունը անխոնջ կաշխատի, սրտեռանդն նվիրված Ս. Էջմիածնի ու Հայաստանյայց Եկեղեցվո պայծառության և հայ ժողովուրդի ու Հայրենիքի բարօրության։ Ան ամենայն ուշադրությամբ կհովվե իր հոտը թե՛ արտասահմանի, թե՛ Սովետական Միության մեջ և թե՛ Հայաստանի սահմաններեն ներս։ Ազգային և եկեղեցական բոլոր խնդիրներուն և գործերուն լավագույն լուծումը կգտնե ան ըստ պատշաճության փրաց և հանգամանաց, իրողություն մը, որ առանձնահատուկ է իր լայնախոհության, ներթափանցողության և խորունկ կշռադատության։ Իր մտածումն ու աշխատանքը կեդրոնացած են հանուր հայության ազգային և եկեղեցական միության վրա։ Հայաստանյայց Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով և հայ ժողովուրդը ցիրուցանված աշխարհի չորս կողմերը, կկազմեն ոգեղեն անքակտելի միություն մը, զոր պետք է ավելի զորացնել, ամրապնդել՝ ամբողջ հայության հավերժության համար։ Հայոց Սրբազնագույն Հայրապետը գերագույն հարացույցն է դժվարությանց հաղթահարելու, նեղությանց դիմակայելու, ղեկավարելու և առաջնորդելու, հոտը հովվելու, նվիրումի ու ծառայության, մեծության և խոնարհության. ան մարմնացումն է մեր պաշտելի նախնիքներու շունչին ու ոգիին։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչ է Ձեր կրած տպավորությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Լավ։ Հոգևին կցանկայինք սակայն տեսնել լավագույնը և առ այդ անհրաժեշտ է, որ Վեհափառ Հայրապետը իր շուրջն ունենա ավելի մեծ հույլ մը եկեղեցականներ գիտուն և հավատավոր, հռանդուն և գործունյա, հոգվով նվիրված Մայր Աթոռի ծառայության և պայծառության։ Այսպիսի փաղանգ մը հայ եկեղեցականության պիտի կարենա շեն, պայծառ ու անսասան պահել Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Ըլլալով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքի վերատեսուչ, ի՞նչ տպավորություն կրեցիք Էջմիածնի Հոգևոր Ճեմարանեն։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Հոգևոր Ճեմարանը սյունն է Մայր Աթոռին. պետք է անհրաժեշտորեն զորացնել տեսչական և ուսուցչական կազմերը և բազմացնել ուսանողության թիվը։ Այս գործին մեջ պետք է, որ արտասահմանի հայությունը իր նյութական և բարոյական միջոցներով զորավիգ կանգնի անոր։ Ծրագրված աշխատանքով, մասնավոր ղեկավարությամբ և լուրջ հսկողությամբ ներկա 31 ուսանողներեն կարելի է Ազգին ու Եկեղեցվույն ծառայության նվիրված լավ եկեղեցականներ ունենալ։ Ճեմարանը տկար է կրոնական և աստվածաբանական գիտության մեջ, իսկ զորավոր՝ հայագիտական ուսմանց մեջ։*

---

*1. Ամսից ավելի Մայր Հայրենիքում էր գտնվում Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքի վերատեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։ Իր մեկնելու նախօրյակին մեր խմբագրության թղթակիցը դիմեց սրբազանին՝ իր ստացած տպավորությունները մեր ընթերցողների հետ բաժանելու խնդրանքով և իր հարցումներին ստացավ գրավոր պատասխաններ, որոնք հրատարակության ենք հանձնում։— ԽՄԲ.։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Ինչպէ՞ս էք տպաւորուած Մայր Հայրենիքի եկեղեցիներէն, եկեղեցականներէն և այն պատարագներէն, զորս մատուցանեցիք Դուք անձամբ։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Մայր Հայրենիքին մէջ քիչ թիւով գործող եկեղեցիներ և վանքեր տեսայ։ Դիտելի է, որ հոն հայ եկեղեցականները նուիրուած են իրենց պաշտօնին և լաւագոյնս կկատարեն ծէսերն ու արարողութիւնները և խորհրդագործութիւնները։ Իմ այցելած եկեղեցիներէս տպաւորութիւնս այն եղաւ, որ հայ ժողովուրդը ջերմեռանդօրէն և սրտագին նուիրուած է իր Ս. Եկեղեցւոյն և իր նախնիքներու հաւատքին և թէ ան աւելի մեծ թիւով պատրաստուած եկեղեցականներու պէտք ունի՝ հոգևոր առաջնորդութեան համար։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Ձերդ Սրբազնութիւնը, վերջին տարիներս այցելած ըլլալով միջին արևելեան, ամերիկեան և եւրոպական կարգ մը երկիրներ, կը բարեհաճի՞ լուսաբանել, թէ ի՞նչ է Սփիւռքի հայութեան վերաբերմունքը դէպի Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և ի՞նչ կարելի է ընել՝ առաւել ևս սերտացնելու համար Մայր Աթոռի և Սփիւռքի կապը։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Սփիւռքի հայութիւնը խոր հաւատքով և ջերմ պաշտամունքով կապուած է Մայր Աթոռին՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան, քանզի համոզուած է, որ Ս. Էջմիածինը հայութեան և Հայաստանեայց Ս. Եկեղեցւո գոյատևման և պահպանման կորիզն ու պատուանդանն է։ Սփիւռքը կապրի այն ջերմ հաւատքով, թէ իր կրօնական և ազգային դիմագիծը՝ ինքնուրոյնութիւնը կպահէ և կհաւերժացնէ ինքզինքը երբ ճըշմարտապէս հոգւով կապուի Մայր Աթոռի հետ։ Ան կհաւատայ, թէ մի է Հայաստանեայց Եկեղեցին և ինք այդ միութեան անբաժանելի մի մասն է։*

*Սփիւռքի և Մայր Աթոռի միջև հարաբերութիւնները աւելի կսերտանան, երբ երկուստեք փոխադարձ այցելութիւններ ըլլան և զիրար աւելի մօտէն ճանչնան և ճշմարտօրէն հասկնան։*

*ՀԱՐՑՈՒՄ.— 1945-ին ալ այցելած էիք Սովետական Հայաստան։ Այդ այցելութենէն ութը տարի հետո ի՞նչ տարբերութիւն կտեսնէք Մայր Հայրենիքի և անոր մայրաքաղաք Երևանի նախկին և այժմեան վիճակի մէջ։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Տարբերութիւնը շատ մեծ է։ Մայր Հայրենիքը իր մայրաքաղաքով շինարարական, տնտեսական, կրթական և գիտական ասպարեզներու մէջ աչքառու նուաճումներ ունեցած է. նուաճումներ, որոնք քանի մը տարի առաջ մեր միտքէն իսկ չէին անցներ։ Կառուցուած են նոր գիւղեր, շէնքեր, գործարաններ, դպրոցներ, շուկաներ։ Կառուցողական և արդյունաբերական աշխատանքը մեծ թափով յառաջ կերթայ։ Ժողովուրդի տնտեսական կյանքը զգալիօրէն բարելաւուած է և աւելի բարելաւուելու բոլոր հնարաւորութիւնները կան։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Իմացած եմ, որ վերջին օրերս այցելած էք կարգ մը հնագիտական վայրեր. ինչպէ՞ս էք տպաւորուած այդ այցելութիւններէն։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Հնագիտական վայրերը թէ՛ ուրախութեամբ և թէ՛ տխրութեամբ համակեցին զիս։ Տխրութեամբ՝ որովհետև իմ պատկերացուցած եռուն և հաւատքով լի կյանքը չտեսին. գրեթէ բոլորն ալ առանց միաբանութեան են։ Ուրախութեամբ՝ որովհետև անոնք ամէնքն ալ Հայաստանի Ճարտարապետական հնութեանց պահպանութեան կոմիտէի կողմէ ամենայն աչալրջութեամբ հսկողութեան տակ առնուած են և վերանորոգման վիճակի մէջ են։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Ինչպէ՞ս գտաք հայրենադարձներու վիճակը։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Իմ ճանչցած ընտանիքներս, բարեկամներս և ազգականներս, որոնց հանդիպեցայ և որոնց տուները այցելեցի, գտայ բարւոք վիճակի մէջ։ Անոնք ունին իրենց տուները, փոքր կամ մեծ, սրտագին կաշխատին։ Աշխատողին համար հոն միշտ գործ կայ։ Մեր ներգաղթող հայրենակիցները գործունեայ են, աշխատասէր և հնարամիտ, որով կապրին գոհացուցիչ պայմաններու մէջ։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Մայր Հայրենիքի մէջ ի՞նչ փաստ կամ երևոյթ հատկապէս տպաւորած է Ձեզ։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Շինարարական և գիտական նուաճումները։ Ո՛չ միայն տպաւորուած եմ անոնցմով, այլ զարմացած՝ թէ չորս տարիներ պատերազմի անդոհանքով լեցուած փոքր ժողովուրդ մը, կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին, ի՛նչպէս կարողացած է այդպիսի շինարարական և գիտական նուաճումներ կատարել։*

*ՀԱՐՑՈՒՄ.— Ձերդ Սրբազնութիւնը ունի՞ որևէ պատգամ, Մայր Հայրենիքէն դէպի Անթիլիաս վերադարձի իր ճանապարհին վրայ։*

*ՊԱՏԱՍԽԱՆ.— Թելադրութիւնս այն պիտի ըլլար, որ Մայր Հայրենիքի մէջ շինարարական, տնտեսական, կրթական, արդյունաբերական և գիտական հառաջդիմութեան հետ կրօնական հոգևոր կյանքն ալ աւելի զարգանայ և ուռճանայ։ Հայաստանեայց Ս. Եկեղեցին հայ ժողովուրդի էութեան մի մասն է և այդպէս ալ պէտք է շարունակէ։*

ԹՂԹԱԿԻՑ

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

# ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

## I

Հռոմեական պետությունը երկուսի բաժանվեց Դ. դարի վերջերին, 395 թվին։ Արևելյան բաժինը բաղկացած էր Բալկանյան, Փոքր Ասիայի, Հայաստանի մի մասի՝ Սեբաստիայի և Կեսարիայի հետ՝ Սիրիայի և Եգիպտոսի երկրներից։ Արևմտյան բաժինը այնուհետև միայն յուր հոգևարքն ապրեց բարբարոս ազգերի արշավանքների և հարվածների տակ, ի վերջո շունչը փչելով 475 թվին։

Բայց այդպես չէր արևելյան բաժինը. նախ Կոստանդիանոս Մեծի և նորա հաջորդների ժամանակ Բյուզանդիոն որպես կենտրոն կենդանացման նոր հյութ էր ստացել արևելյան ազգերից. ապա քրիստոնեության տիրապետությունը կայսեր տիրապետության հաստատություն էր նշանակում նույն երկրների մեջ, որի հետևանքով և 1.000 տարի ես շարունակից յուր կյանքը, մինչև խորտակվեցավ օսմանյան թյուրքերի հարվածների տակ։

Այսօրվա մեր բանախոսության նյութն է, թե հայերը ինչ դեր կատարեցին բյուզանդական պետության մեջ, որի բաղկացուցիչ տարրերից մեկն էին կազմում արևելյան նահանգների մեջ։ Բնականաբար այստեղ խոսքը ամբողջ հայության մասին չէ, որովհետև Արևելյան Հայաստանը նախ Սասանյանների տիրապետության տակ էր, ապա արաբական և հուսկ հետո հայկական մանր թագավորությունների, որոնք իրենց փխանկախ կյանքն ունեին, մինչև ԺԱ. դարի կեսերը, երբ ընկան սելջուկյան հարվածների տակ, իբրև զոհ բյուզանդական նենգ և անհեռատես քաղաքականության։

Մինչև Հուստինիանոս Մեծ (527—565) բյուզանդական պետությունը դեռևս ուրույն դեմք չուներ, շարունակ ենթակա հոների և կովկասյան ազգերի արշավանքներին և կողոպուտներին, իսկ Արևելքից Սասանյանների սպառնալիքին։ Այս մեծ կայսեր ժամանակ է, որ կայսրությունն սկսում է բարձրացնել յուր հմայքը մեծամեծ հաղթություններով, ձգտելով վերականգնել հռոմեական կայսրության նախկին ամբողջությունն ու փառքը. արշավանքներ կազմա-

---

*. Հետզհետե հրատարակության պիտի տանք երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի անտիպ բոլոր գրությունները, թե՛ Հայագիտական տարեգիրքի և թե՛ պաշտոնաթերթ ՀԱՍԿի մեջ. ապա զանոնք պիտի ամփոփենք առանձին գիրքերու մեջ, դասավորելով ըստ նյութի։

Ներկա գրությունը պատրաստված է դասախոսության համար, զոր երանաշնորհ Հայրապետը կարդացած է Ամերիկայի մեջ, երբ այնտեղ առաջնորդ էր։

Այս գրությունը ունեի երկու ձեռագիրներ. մին նախնական սևագրություն մը, և մյուսը՝ համեմատաբար վերջնական ձեռագիրը, զորս իրարու հետ բաղդատած ենք և կատարած սրբագրումներ և ճշտումներ՝ այս դասախոսության աղբյուր ծառայող գիրքերու օգնությամբ։

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ
(Գիտական աշխատակից
Գարեգին կաթողիկոսի)

կերպելով դեպի Իտալիա՝ Ներսես պատրիկ նշանավոր հայ զորավարի և էկզարխի ղեկավարությամբ, Սիկիլիա, Հյուսիսային Աֆրիկա և Եգիպտոս։ Հուստինիանոսի ժամանակվա հայ մեծ զորապետներն էին Ներսեսից զատ՝ Արտավան և Ներսես Բասենցի։ Նա քաղաքական նահանգական բաժանումները վերածում է զինվորական վիճակների կամ բանակաթեմերի, որոնց զորապետները միևնույն ժամանակ երկրի կառավարիչներն են։ Արևմտյան Հայաստանի մի կարևոր մասը Արմենիակոն թեմն էր, հայ իշխանական տոհմերի ղեկավարությամբ, որ այնուհետև կարևոր դեր է կատարում բյուզանդական կյանքի մեջ։

Սակայն Հուստինիանոսից հետո՝ Հուստինոս Բ.ի ժամանակ 575 թվին Խոսրով Անուշիրվան (531—579) նվաճում է Հայաստանի մի կարևոր մասը, այրելով Սեբաստիան, Մելիտինեն և հասնում Կապադովկիա, թեև հետևյալ տարին ստիպված էր նահանջել։ Մորիկ Հայկազնի ժամանակ (582—602) բյուզանդացիք նորից հաջողության մեջ են։ Մորիկի հայ լինելը կասկածողներ կան (ծնած Կապադովկիայի Արաբիսոս քաղաքում[1], բայց այժմ գրեթե հաստատված է այդ իրողությունը ըստ Մորդանի։ Սակայն նրա հայությունը ի վնաս հայության էր, աշխատելով Հայ Եկեղեցին քայքայել, հակաթոռ կաթողիկոսություն հաստատելով հանձին Հոհան Կարնեցու ընդդեմ Մովսես Եղվարդեցու և հօգուտ քաղկեդոնականության։

Մորիկի սպանությունից հետո՝ նորա հաջորդ Փոկասի ժամանակ պարսիկները նվաճում են ոչ միայն Հայաստանը, այլև Միջագետքը, Սիրիան, Կապադովկիան, մինչև Քաղկեդոն, Պոլսի դիմացը։ Այս հաջողությունը շարունակվեց և Հերակլի ժամանակ (610—641), գրավվեցավ Երուսաղեմը (644 թ.) և գերվեցավ Քրիստոսի խաչափայտը ի նախատինս քրիստոնեության։ Պարսիկները իրենց ձեռքը պահեցին Անտիոքը, Ապամեան, Կեսարիան։ 622 թվից հետո միայն Հերակլը անցավ Հայաստան և ստիպեց պարսիկներին ձեռք քաշել հռոմեական նահանգներից։

Flavius Հերակլով սկսվեց մի նոր հարստություն, որ հինգ սերունդ, 85 տարի գրավեց բյուզանդական գահը և տվավ այնպիսի հզոր ներկայացուցիչներ՝ ինչպես Հերակլ և նորա թոռը Կոնստանդ։ Հերակլի հայրն էր նույնանուն պատրիկը, հայ ազնվական ընտանիքից, երբեմն Հայաստանի կառավարիչ (594 թ.), ապա Հյուսիսային Աֆրիկեի էկզարխ, որին հաջորդեց եղբայրը Գրիգոր մինչև արաբական արշավանքները՝ 640 թ.։ Բյուզանդացիք, զզված Փոկասի բռնապետական կառավարությունից և պարսից արշավանքներից նեղված, հրավիրեցին Հերակլ էկզարխին, որ յուր Գրիգոր եղբոր և սորա որդի Նիկիտայի հետ ցամաքային ճանապարհով, Եգիպտոսի, Պաղեստինի և Սիրիայի վերայով դեպի մայրաքաղաքն արշավեց, իսկ որդին՝ Flavius Հերակլը ծովով, և տապալեց Փոկասին (602—610)։ Հայրը հրաժարվում է գահից հօգուտ որդուն։

Հերակլը ոչ միայն քաջ և նշանավոր զորապետ էր, այլև քաղաքագետ կառավարիչ և քայքայված պետության կազմակերպիչը։ Նա վերակազմեց Հուստինիանոսի օրով սկսված զինվորական բանակաթեմերը, որոնցից մեկն էր Արմենիակոնը։ Սրանց գործակից հանդիսացան զինվորական և այլ բարձր աստիճաններով հայ իշխաններ։ Նա դեր կատարեց նաև բուն Հայաստանի եկեղեցական կյանքում, մի կամքի վարդապետությամբ, կամենալով հայերին, ասորիներին և եգիպտացիներին ավելի սերտ կապել պետության հետ, որ ուծացել էին նախընթաց կայսրների ժամանակ մի և երկու բնության վեճերով։ Մի կամքի վարդապետության ընդունելությունը (էկթեզիս) հօգուտ մի բնության վարդապետության էր։ Ավելի զորեղ կերպով այս քաղաքականության հետևեց Կոստանդին, ամուր սեղմելով պապականության հավակնությունները։

Բայց և նախարարական Հայաստանը ուռճացավ, կառավարվելով մի շարք նշանավոր իշխաններով, ինչպես Ներսես Կամսարական, Դավիթ և Գրիգոր Մամիկոնյան, Աշոտ պատրիկ, որոնց շրջանում ծաղկեց և բարձր աստիճանի զարգացման հասավ հայ ճարտարապետությունը, ինչպես Թալինի մայր եկեղեցին, Արուճի Ս. Գրիգորը, Բագրևանդի Ս. Հովհաննեսը՝ շինված Եզր կաթողիկոսի ձեռքով և Հերակլ կայսեր օժանդակությամբ, Զվարթնոցը՝ շինված Կոստանդին կայսեր ժամանակ Ներսես Գ. Շինողի ձեռքով։

Հազիվ պետությունն ազատվել էր պարսիկներից և սկսել էր շունչ քաշել, երևում է նոր, ահեղ թշնամի, հանձին մահմեդականության և արաբական նվաճողական շարժման։ Կարճ ժամանակի մեջ նրանք նվաճեցին Անտիոքը, Դամասկոսը, ամբողջ Սիրիան։ Այս հաջողության նպաստեցին միաբնակները, որոնք ծառացել էին բյուզանդական երբեմնի հալածանքների դեմ։ Հերակլի թոռը Կոնստանդ (641—668) զինվորական նահանգային բաժանմանց և ոչ բարեկամական տարրերի թշնամուն անցնելու հետևանքով, ուրեմն և ավելի ամփոփ սահմաններով, Փոքր Ասիայով և Թրակիայով, կարողացավ

1. Հայ ավանդությամբ՝ Օշական գյուղում։

*մասամբ կանգնեցնել գրոհը, Մուավիայի դեմ, հետ խլելով Հայաստանը և մինչև իսկ արաբացիներին ստիպելով հարկ վճարել։ Բայց այդ ժամանակավոր էր. 663 թվին արաբացիները նորից սկսում են իրենց պարբերական արշավանքները, մինչև որ 692 թվին Հուստինիանին պարտության ենթարկելով Կիլիկիայում, Հայաստանն էլ վերջնականապես անցավ արաբներին, ինչպես և Փոքր Ասիայի մեծագույն մասը։*

*Միջանկյալ կերպով ավելացնենք, որ Հերակլյան հարստության հաջորդը դարձյալ մի հայ էր՝ Փիլիպպիկոս Վարդանես (711—713 թ. թ.)։*

***

*Արաբների առաջ թումբ կազմել կարողացավ միայն Լևոն Իսավրացին (717—741), ըստ ոմանց հայ և ըստ ոմանց ասորի, մանավանդ 740 թվին Փռյուգիո մեջ տարած վճռական հաղթությամբ։ Բայց պատկերամարտական խռովությունները ջլատեցին պետության ուժերը։ Սորա փեսան էր յուր Աննա դստեր ամուսինը՝ Արմենիակոն թեմի Արտավազդ (Կամսարակա՞ն, թե Մամիկոնյան) զորավարը, որին կյուրապաղատության բարձր աստիճանը շնորհեց և թագաժառանգ նշանակեց։ Լևոն Իսավրացին յուր ուժը հենել էր գլխավորապես Արմենիակոն և Օփսիկիոն զորաբանակների վրա, իսկ երկրորդը կարևոր մասերով հայերից բաղկացած։ Ըստ Գելցերի, որ ամենայավ ուսումնասիրողներից մեկն է բյուզանդական պատմության և բանակաթեմերի կազմակերպության, սրանց մեջ կային զորավարական պաշտոնով բազմաթիվ հայ նախարարներ* (SATPAΠAI) *և ազատներ* (AZATOI), *հատկապես այրուձին, հայ և վրացի, ամենից ընտիրն էր։ Կայսրներն ստիպված էին հաշվի առնել զինվորական այս ուժը։ Ըստ Գելցերի կայսրների իշխանությունը գրեթե անվանական էր, և հայ զորքը շատ կարևոր դեր էր կատարում սորան կամ նորան գահ նստեցնելով կամ հակառակը, ինչպես հռոմեական կայսրության պրետորյանները։ Հայ զորքը կռվում էր ոչ միայն արաբների դեմ, այլև հեռավոր Կրետեի, Սիկիլիայի և Իտալիայի մեջ։ Այստեղ է հայոց գլխավոր ծառայությունը ընդդեմ արաբականության և քրիստոնեական քաղաքակրթության պահպանության։*

*Լևոնի մահից հետո կայսերական գահն անցավ որդուն Կոստանդին Ե. Կոպրոնիմոսին (741—775). սորա դեմ ապստամբեցավ յուր քեռայրը Արտավազդը, երբ կայսրը բացակա էր արաբների դեմ սկսած արշավանքով, և ինքը Պոլիս մտնելով կայսր հռչակվեցավ։ Արտավազդն օգտվեցավ պատկերապաշտների դժգոհությունից, յուր շուրջը հավաքելով նաև համակիրներին։ Զորաբանակների մեծ մասը սակայն Կոպրոնիմոսի կողմն էր, որ կարողացավ պարտության մատնել Արտավազդի որդի Նիկետին և Տըրդատ պատրիկին, որ հորեղբորորդին էր[2]։ Արտավազդին գործակից էր և Վասակ պատրիկ։ Արտավազդն ի վերջո ձերբակալվեցավ, որ կուրացվեց Կոստանդնի կողմից, իսկ Վասակը գլխատվեցավ։ Արտավազդի անունով դրամներ կան կտրված Կոստանդնի հետ 742 թվին, և ապա յուր որդուն Նիկեփորի հետ։ Ասել է, թե սկզբում կամեցել է թագավորել յուր աներձագի հետ, և ապստամբության ժամանակ միայն նոր դրամ է կտրել տվել որդու հետ։*

*Կոպրոնիմոս կարողացավ որոշ չափով հաջողություն ձեռք բերել, արաբական ներքին խլրտումների հետևանքով, հառաջանալով մինչև Կարին։ Բայց Աբասյանց տիրապետությամբ (750 թ.) զորացած արաբները, նորից սպառնալիք դարձան բյուզանդական պետության, Իրենե կայսրուհուն հարկադրելով 70.000 ոսկով եռամյա խաղաղություն ձեռք բերել։*

*Այստեղ հարկավոր է համառոտ մի քանի խոսք ասել երկու մեծ շարժման մասին, որ բնորոշում են այդ շրջանի և նույնիսկ հետագա դարերի բյուզանդական պատմությունը։ Առաջինը պատկերամարտական շարժումն էր, որ հուզեց մտքերը և բյուզանդական քաղաքականության ձև ու բովանդակություն տվավ գրեթե ամբողջ Ը. դարում։ Երկրորդը պավղիկյանց և թոնդրակեցվոց աղանդներն էին, որ նույնպես կարևոր նշանակություն ունեցան՝ որոշ չափով կապված պատկերամարտության հետ Ը., նաև հետագա դարերում։ Այս երկու շարժման մեջ էլ հայերը շատ կարևոր դեր կատարեցին։*

*Պատկերամարտությունը կամ «անձեռ» քրիստոնեությունը ծագմամբ արևելյան էր. առաջին փորձը Զենոնի ժամանակ, ապա Փիլիպպիկոս Վարդանես կայսեր, հուսկ հետո Լևոն Իսավրացու ժամանակ խիստ կերպարանք ստացավ։ Հայոց մեջ այդ երևույթի մասին տեղեկություն ունենք Զ. դարի վերջում կամ Է.ի սկզբում՝ Հովհան Մայրավանեցու ժամանակ։ Այնուհետև Հովհան Օձնեցու ժամանակ, Ը. դարի առաջին քառորդին, որ գրեց յուր «Ընդդէմ Պաւղիկեանց ճառը։*

*Լևոն Իսավրացին այս տարրերը և բյուզանդական պաշտոնական եկեղեցու հակառակորդ հայերի տրամադրությունը օգտագործեց, փոխարինելով մեկը հունականության։ Արաբական թարմ ուժերի դեմ պետք*

---

2. Արտավազդի— Ս. Ս.

էր արևելյան ազգերից, գլխավորապես հայերից և նաև պավլիկյաններից, որոնց մեջ մեծ թվով հայեր կային, նոր ուժ ստեղծել նրանց դեմ։ Լևոն Իսավրացին զորեղ կերպով այդ գործը կատարեց իբրև պատկերամարտ։

Այսպիսի լույսի տակ, հասկանալի է Արմենիակոն բանակի, նաև մասամբ կայսերական անձնապահ գնդի կարևոր դերը բյուզանդական պատմության մեջ։ Զինվորականությունն է երկրի բուն տերը, կայսրներից շատերը անվանական միայն։ Հետագայում հալածանքը պավլիկյանց և Հայ Ազգային Եկեղեցու դեմ, և դորա հետ կապված սխալ քաղաքականությունը հայ պետությունների դեմ, քանդեց այն մեծ պատվարը, որ պաշտպանում էր կայսրությունը արաբական և ապա սելջուկյան թյուրքերի հրոսակային հեղեղի դեմ։

Լևոն Դ. (775—780) յուր մեծ հաղթությունը արաբների դեմ 778 թվին պարտական էր հայ զորքին և զորապետներին։ Նորա 100.000-անոց բանակի չորս բաժինները հանձնված էին հայ զորապետների. Արտավազդ Մամիկոնյան՝ Անատոլյան, Տաճատ Անձևացի, որդի Գրիգորի՝ Բուկելլարիոնի, Վարազտիրոց Բագրատունի՝ Արմենիակոնի, և Գրիգոր Մամիկոնյան, որդի Մուշեղի[3] Ոփսիկիոնի։ Բացի Թրակեսյան փոքր բանակից, ուրեմն ամբողջ բանակի ղեկավարությունը Հայոց ձեռքն էր, զինվորների կարևոր մասն էլ հայերից կազմված։

Հիշյալ զորապետներից առաջին երկուսի մասին տեղեկություն ունենք և Ղևոնդ պատմիչի մեջ. Տաճատ՝ Գրիգորի որդի, հայրենիքից անցել էր Բյուզանդիոն և կռվել Թրակիայում բուլղարների դեմ։ Արտավազդ, Հմայեկա որդի, 771 թվին սպանելով արաբ հարկահանին, փախել էր Արևմուտք։ Վարազտիրոց՝ հավանորեն Սմբատ Կյուրապաղատի (+727 թ.), Վարդանակերտի հերոսի որդին։ Իսկ Մուշեղիկը Բյուզանդիայում բնակություն հաստատած Մամիկոնյաններից, որոնք առաջնակարգ դեր կատարեցին, ինչպես կտեսնենք հետզհետե։

Լևոն Դ.ի որդին Կոստանդին Զ. Պորփյուրոժենը[4] (780—797) գահ բարձրացավ Իրենե կայսրուհու խնամակալության տակ. մայրը կամեցավ յուրացնել որդու իրավունքները, բայց Կապադովկյան և Արմենիակոն բանակները պաշտպան հանդիսացան իսկական ժառանգին։ Կայսրուհին ստիպված միջնորդ ուղարկեց Մուշեղ իշխանին, որ պալատական զորքի դրունգարն էր. սակայն զորքը Մուշեղին զորավար ընտրեց, բանտարկելով յուր Նիկեփորոս հրամանատարին։ Իրենեն ստիպված էր տեղի տալ, կայսր ճանաչելով որդուն։ Նույն օրինակին հետևեցին և մյուս բանակաթեմերը։

Ավելի հասկանալի դարձնելու համար այս իրողությունները, պետք է հայտնենք, որ Իրենեն աթենացի հույն աղջիկ էր. կայսրուհի և մանավանդ խնամակալ դառնալով, կամենում էր չեզոքացնել հայերի ազդեցությունը և զորացնել հունականը, պաշտպան հանդիսանալով և պատկերապաշտության 787 թվին։ Հասկանալի է այս պարագաների մեջ հայերի բռնած դիրքը ընդդեմ կայսրուհու։

Իրենեն որդուն ամուսնացրեց Մարիամ անունով մի աղջկա հետ, Արմենիակոն թեմից, հավանորեն հայ ըստ Աղոնցի, կամենալով մեղմել յուր ընթացքը։ Կոստանդին՝ Ալեքս-Մուշեղին նշանակեց Արմենիակոն բանակի զորավար, սակայն փսփսուքների ազդեցության տակ, որպես թե թեկն է ածում գահին, կուրացրեց յուր բարերար իշխանին։ Այս տմարդի վարմունքին ի վրեժ հայերը ապստամբեցան կայսեր դեմ, սպանելով նրա նշանակած Թեոդոս զորավարին (792 թ.)։ Կայսրը նրանց դեմ ուղարկեց Արշավիր (հավանորեն Կամսարական) հայ իշխանը և պավլիկյանների պետ՝ Քրյուսոքերես, որ Բուկելլարիոն բանակի զորավարն էր Տաճատից հետո (790 թ.)։

Անսիրտ մայրը Իրենեն, որ նորից տիրացել էր կայսերական գահին, կուրացրեց և գահընկեց արավ որդուն (797 թ.), ինքն էլ յուր հերթին զրկվելով գահից հայ զինվորականների աշխատությամբ. կայսր նշանակվեց ելևմտից մինիստր Նիկեփորը (802—811)։

***

Իսավրյան տան վերջավորությամբ, բյուզանդական քաղաքական և զինվորական կյանքի իսկական ղեկավարն է հանդիսանում Մամիկոնյանց տոհմի մի ճյուղը, որը հաստատվել էր Կապադովկիայում և ապա Արմենիակոն թեմում, բուն հայրենիքում իրենց զորությունը կորցնելուց հետո։

Նիկեփորի դեմ դժգոհ տարրերը կայսր են հրատարակում Վարդան հայազն պատրիկին, որ արևելյան բանակների զորավարն էր, յուր իսկական թեմը՝ Անատոլիկյանը։ Ազնիվ, համակրելի և անշահասեր մի անձնավորություն։ Նորա գործակիցներն էին Լևոն, Միքայել և Թովմա անունով անձինք, որ ապա-

---

3. Երանաշնորհ Հայրապետը գրած էր. «Գրիգոր Մամիկոնյանի որդի Մուշեղին»: Ուղղեցինք ըստ Ղևոնդ պատմիչի (եր. 193) և Հ. Աճառյանի ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԻ (հտ. Ա., եր. 533, թիվ 54 և հտ. Դ., եր. 460, թիվ 21)։— Ս. Ս.

4. Կոստանդին Է.ը (913—959) կոչված է Պորփյուրոժեն և ոչ թե Կոստանդին Զ.ը։— Ս. Ս.

դայում դեր կատարեցին, թեկնածու դառնալով կայսերական թագին։ Բայց այս ձեռնարկը անհաջող անցավ, Արմենիակոն թեմի չեզոքությամբ և գործակիցների դավաճանությամբ, որ Նիկեփորի կողմն անցան։ Նիկեփորը հակառակ յուր խոստման կուրացրեց Վարդանի աչքերը, պատժի մի տեսակ, որ սովորական էր բյուզանդական պատմության մեջ։

Ապա Նիկեփորի դեմ 808 թվին ապստամբեց Արշավիր պատրիկ, որ քվեստորի պաշտոն ուներ, այսինքն օրենքների խմբագրող և կայսեր թղթակցությունները գրող, գիտական հմտության հետ կապված մի պաշտոն։ Նորա կողմն էին շատ ծերակուտականներ և բարձրաստիճան եկեղեցականներ, բայց դավադրությունը վիժեց, ժամանակից առաջ հայտնի դառնալով։ Արշավիրի փոխարեն կայսերական թագը խլեց Լևոն Հայազն (813—820), Արշավրի Թեոդոսիա դստեր ամուսինը, 813 թվին, բայց սորան էլ սպանեց Միքայել Թլվատ, որ Վարդան հայազնի գործակիցն էր և սուսերակիրը, ապա նորան դավաճանողը հօգուտ Նիկեփորի։ Միքայելը, ըստ Ադոնցի, հավանորեն պավղիկյանց հետևող հայ էր։

Լևոն Հայազնը առաջնակարգ զինվորական էր, օժտված վարչական կարողություններով, ջերմեռանդ և արդարադատ։ Նիկեփոր պատրիարքը, որ հակառակորդ էր Լևոնի եկեղեցական քաղաքականության, իբրև պատկերապաշտության հակառակորդի՝ նորա մահվան լուրը լսելով, բացագանչեց. «Պետությունը կորցրեց մի մեծ, թեև ամբարիշտ պետական մարդ»։ Ըստ պրոֆ. Ադոնցի՝ «մեծագույն գովասանք, որ կարելի էր լսել թշնամուց»։ Այս Լևոնի երկու որդիքը ապագայում նշանավոր հանդիսացան իբրև պատրիարքական աթոռի թեկնածուներ։ Լևոն Հայազնը հովանավոր դիրք ուներ դեպի Հայաստանի Բագրատունի իշխանները, Աշոտին կյուրապաղատության պատիվ և տիտղոս տալով։ Նա էր նույնպես, որ Մանվել Մամիկոնյանը բյուզանդական բանակի հրամանատար նշանակեց, յուր ժամանակի ամենից տաղանդավոր զորականը։

Միքայելի դեմ գահի թեկնածու է հրատարակում իրեն Թոմա, Վարդանի մյուս սուսերակիրը և Միքայելի հետ նորան դավաճանողը, որոնց փոխադարձ պայքարը չենք կամենում երկարել այստեղ։ Միքայելը հայ կուսակցությունը շահելու համար, հատկապես Արմենիակոն բանակի մարդկանց, կնության առավ յուր որդի Թեոփիլոսի համար, Մանվել Մամիկոնյանի եղբոր դուստրը, գեղեցիկ Թեոդորային. իսկ Մանվելը, ինչպես հիշեցինք, Արևելքում ամենից հռչակավոր զորապետն էր, Թեոփիլի ժամանակի «ամենակարող դեմքը», «զինվորական փառքը» (Ադոնց)։ Բայց բանսարկության ենթարկվելով 150 հոգվով փախավ Մամուն իշխանի մոտ 830 թվին, որ սիրով ընդունեց և ըստ Վարդան պատմիչի, որ քաղել է մի հին աղբյուրից, օրական թոշակ նշանակեց «երեք հազար երեք հարյուր և վեց կշիռ արծաթոյ». տարաբախտաբար այդ գումարի ներկա հասկացողությամբ արժեքը ստուգելու միջոցը չունեմ այժմ ձեռքի տակ։ Նա վերադարձավ Թեոփիլի ցանկությամբ (829—842), մագիստրոսության պատիվ ստանալով և սքոլարների (պալատական զորքի) դոմեստիկ նշանակվելով։

Սխալի այս վերանկատման և ուղղելու գործի մեջ կարևոր դեր կատարեց Լևոն պրոտովեստիարը, Մանվելի նախկին ստորադրյալը և այժմ պաշտոնյան արքունիքում։

Ապագայում Մանվելը փրկեց կայսեր կյանքը Բոքատի ճակատամարտում։ Այս և Թեոփիլի մի ուրիշ գործը, Լևոն Հայազնի սպանողներին տված պատիժը, մի ժեստ էր հայերին սիրաշահելու։ Թեոփիլը յուր մեծ հաղթությամբ նարսիանում ընդդեմ արաբների, ուր 25.000 գերի բռնեց և Պոլիս տարավ, պարտական էր Մանվելին։

Այս շրջանում Միքայել Բ.ի և հատկապես Թեոփիլի ժամանակ, հայ ազդեցությունը մեծ էր, նշանավոր զորապետներով և բարձր պաշտոնյաներով՝ արքունիքում կամ դուրսը։ Թեոդորա կայսրուհու քույրերը՝ Կալո-Մարիան (գեղեցիկ Մարիամ) Արշավիր պատրկի կինն էր, Սոփիան՝ Բարուցիկի, Իրենեն՝ Թեոփոբի, պավղիկյանց պետի։

***

Մամիկոնյան տոհմի մի ուրիշ ճյուղի ներկայացուցիչներ էին Ալեքս-Մուշեղ և Թեոդոս. սրանց պապը պիտի լինի Նուլյանուն[6] դրունգարը պալատական զորքի, հետո Արմենիակոնի զորավար։ Ալեքսը Թեոդորայի և Թեոփիլի հինգ աղջիկներից մեկի՝ Մարիամի ամուսինն էր, և փեսայության հարակցությամբ, թագաժառանգ, «պատրիկ անթյուպատ, մագիստրոս» և ապա «կեսար» տիտղոսները ստացավ, քանի որ կայսերական զույգը արու զավակ չուներ, այսինքն դեռ ծնված չէր Միքայել Գ.։ Ալեքս-Մուշեղը հաջողությամբ կատարեց յուր պատերազմական պարտավորությունը Իտալիայում, բայց մասամբ բանսարկության զոհ որպես թե հափշտակել է կամենում գահը, և մասամբ Մարիամի մահվամբ, շնորհազուրկ եղավ և Քրյուսոպոլում (Սկյուտար) վանք շինելով, մտավ մեջը, ինչպես և հետո եղբայրը՝ Թեոդոս պատրիկ։

6. Այսինքն՝ Ալեքս-Մուշեղ։— Ս. Ս.

Առաջնակարգ դեմքեր են նաև Կոստանդին և Թեոդոս Բաբուցիկ եղբայրները, առաջինը Թեոդորայի քույր Սոփիայի ամուսինը, ուրեմն Թեոփիլ կայսեր քենակալը և պալատական զորքի դրունգարը, որ Ամորիայի պաշարման ժամանակ գերի ընկավ արաբների ձեռքը և նահատակվեցավ 845 թվին։ Թեոդոս Բաբուցիկը դիվանագիտական առաքելությամբ 840 թվին ուղարկվեց Լյուդովիկ Բարեպաշտի մոտ, օգնություն խնդրելու ընդդեմ արաբների։

Թեոփիլոսի ժամանակ պալատական քննիչ էր Լեոն-Սմբատ։ Կոստանդին Մանյակ, նույնպես հայ, նախ Վիգլայի դրունգար, հետո պատրիկ և փոստի լոգոթետ, մոտավորապես ներքին գործոց կամ հաղորդակցության մինիստր։

Կոստանդին Մանյակի որդին է Թոմա, որ փոստի լոգոթետ եղավ Լևոն Զ.ի օրով (886—911), իսկ թոռն է Հովսեփ Գենեզիոս պատմիչը և Կոստանդին Ծիրանածնի դիվանապետը։

Թեոփիլոս (829—842) իրենից հետո մի արու զավակ միայն թողեց երեք տարեկան՝ Միքայել Արբեցողը (842—867), Թեոդորա թագուհու խնամակալությամբ։ Թեոդորայի առաջին մինիստրն էր ներքինի Թեոկտիստ, իբրև լոգոթետ փոստի և դիվանապետ կամ կոնիկլիոն։ Թեոդորան վարչական ընդունակություններով օժտված կին էր, բայց օրթոդոքս եկեղեցու հոգևորականության դրդմամբ, հալածանք սկսեց պավլիկյանց դեմ, որոնք հաստատված էին Եփրատի և Տավրոսի արևմտյան կողմը և լավ պատվար էին արաբների դեմ։ Պետրոն՝ Թեոդորայի եղբայրներից մեկը՝ ամենամեծ հալածիչը եղավ նրանց, որոնք կյանքի և մահվան պատերազմ սկսեցին կայսրության դեմ, Մելիտինեի էմիրի դաշնակցությամբ։

Միքայելը 18 տարեկան պատանի, կամեցավ յուր իրավունքների մեջ լինել, ձեռքն առնելով կառավարության ղեկը. դորա հետևանքով սպանվեցավ Թեոկտիստ ներքինին և նորա տեղն անցավ իբրև պետության ղեկավար Վարդ Մամիկոնյանը, Թեոդորայի եղբայրը, որ նաև պալատական հեծյալ գնդերի (սքոլարների) դոմեստիկն եղավ։ Թեոդորան անհաջող փորձն արավ դավելու եղբորը, և այս կապակցությամբ էր, որ հանդես եկավ Վասիլը իբրև ախոռապետ, ապագայի նշանավոր կայսրն ու Վարդի կործանիչը։

Վարդը 858 թվին, այսինքն Միքայելի կայսերական իրավունքներին անցնելուց հետո՝ կյուրապաղատության տիտղոս ստացավ, ապա կեսարի, որպես ժառանգ կայսերական գահի 863 թվից առաջ։ Նոր կեսարը պալատական այրուձիի հրամանատարությունը գիշավ յուր կրտսեր եղբորը՝ Պետրոնին, որ Ամիսոսի կողմերը, Պոսոնի ճակատամարտերում չարաչար հաղթեց Օմարին, սպանելով նորան և գերի վերցնելով նորա որդուն 863 թվին՝ արաբական բանակը ցանցի մեջ փակելով։ Հաղթական զորապետը արժանացավ մագիստրոսության զինվորական աստիճանին, որին միանգամայն արժանի էր, և բարձրացրեց բյուզանդական զինվորական արվեստի փառքը[8]։

Վարդը՝ Միքայելի կայսրության առաջին դեմքն էր, որպես առաջին մինիստր և խնամակալ կայսեր, որ զվարճությունների մարդն էր, զեղխ և շվայտ յուր կյանքով։ Տասը տարի տերության բախտը նորա ձեռքն էր կատարելապես, կեսար և ժառանգը թագի, Միքայելի անզավակ լինելու հետևանքով, որ պիտի մի նոր հարստության հիմնադիրը դառնար, Մամիկոնյան գերապանծ տոհմի, եթե Վասիլը նորան անդունդը չգլորեր, անագորույն բախտի բերմամբ։

Բայց նա ոչ միայն առաջին մարդն էր քաղաքական, այլև քաղաքակրթական ասպարիզում, որպես գիտության և արվեստի մեծ հովանավոր։ Կայսրության երկուսի բաժանման ժամանակ, Արևելքում՝ Ալեքսանդրիան, Անտիոքը, Աթենքը, Եդեսիան, Կեսարիան ունեին իրենց բարձր դպրոցները կամ համալսարանները։ Զենոնի ժամանակ փակվեց Եդեսիայի դպրոցը 489 թվին, Աթենքի համալսարանը՝ 529 թվին Հուստինիանոսի ժամանակ, մյուսները խեղճացած, անհետացան արաբական տիրապետության տակ։ Գիտության վերջին բեկորները ամփոփված էին միայն վանքերի պատերի մեջ։

Առաջին անգամ հայերն էին, որ բյուզանդական պետության մեջ, հելլենական հին արվեստի և փիլիսոփայության նոր զարթոնքի հովանավորներն ու աշխատավորները հանդիսացան։ Եվ դոցանից առաջինը Վարդ Մամիկոնյանն էր, որ Մագնավրա մեծ պալատը հատկացրեց գիտական նպատակների համար բանալով առաջին համալսարանը, Լևոն մեծ գիտնականի տեսչության տակ։ Լևոնը հայ էր, Հովհաննես գիտուն պատրիարքի (834—843) եղբորորդին։ Ուսումնասեր էր նաև Արշավիր պատրիկը, պատրիարքի եղբայրը։ Սրանց հայրը ևս՝ Բագարատ աստղաբաշխ էր։ Հիշում ենք, որ մեր ձեռա-

8. Երանաշնորհ Հայրապետը այստեղ կարմիր մատիտով գրած է. «Նմանություն Վրաց պատմության, Գեորգի III, Թամարա, Գեորգի IV»: Իսկ իր նախնական սևագրության մեջ գրած է ավելի որոշ, թեպետ դարձյալ չմշակված ձևով հետևյալը. «Այստեղ միջանկյալ կերպով նիշենք նման երևույթ մի ուրիշ մեծ պետության մեջ, ինչպես Վրաց պետությունն էր Թամարայի ժամանակ...»:

*գրքերի մեջ հանդիպել ենք Թագարատի անունով մնացած գիտական հատվածներ։*

*Լևոնը հետո Թեսալոնիկեի եպիսկոպոս ձեռնադրվեց (840—843) յուր հորեղբոր ազդեցությամբ, բայց կրկին յուր ուսուցչապետության դարձավ, տալով նշանավոր աշակերտներ, Թեոդոր՝ երկրաչափության, Թեոդեսիոս՝ աստղաբաշխության, Կոմիտաս՝ քերականության, Կոստանդին, որ հետո Կիրիլ անունով սլավոն ազգերի լուսավորիչը հանդիսացավ Մեթոդիոսի նման՝ նրանց համար գիր հորինելով. իսկ ինքը գրեթե համայնագետ էր։ Համալսարանը ըստ ամենայնի վայելում էր Վարդի հովանավորությունը, հոգալով դասախոսների ռոճիկները և անձամբ այցելության գալով կամ լսելով դասախոսությունները։*

*Բայց այս լուսավոր մարդու անունը աշխատել են նսեմացնել յուր եկեղեցական քաղաքականության հակառակորդները՝ պատկերապաշտության կողմնակիցները։ Հովհաննես հայ պատրիարքը փահընկեց եղավ 843 թվին, պատկերապաշտության վերականգնման հետևանքով։ Նորա հաջորդն էր Մեթոդիոս մինչև 847 թիվը։ Սորան հաջորդության թեկնածուներ էին Լևոն հայազնի որդիքը՝ Վասիլ և Գրիգոր, և Իգնատիոս՝ Ռանգաբեի որդին։ Հաջողեցավ պատրիարքական աթոռը գրավել Իգնատիոս, ոչ այնչափ յուր արժանավորությամբ, որչափ Թեոդորայի Թեոկտիստ առաջին մինիստրի ջանքերով, առաջին երկուսին կասկածելի համարելով, որպես պատկերամարտ հայի որդիներ։*

*Վարդը որպես Թեոկտիստի քաղաքական հակառակորդ, չէր կարող խրախուսել նորա խնամարկյալ պատրիարքին, և բնականաբար Թեոկտիստի անկումից հետո, խախտված էր և պատրիարքի դիրքը, որ և գահընկեց անել տվավ 858 թվին և նորա փոխարեն ընտրել տվավ Փոտին, որ աշխարհական էր, պրոտոսպաթար (սուսերակիր) և պրոտոասեկրետ (առաջին քարտուղար)։ Փոտը յուր ժամանակի ամենագետ մարդն էր, հանճարական յուր շարժումներով և նիստ ու կացով։ Նա Վարդի սիրելին էր ոչ միայն իբրև գիտուն, այլև իբրև Արշավիր պատրիկի քրոջ Իրենեի որդին, իսկ Արշավիրն էլ Վարդի փեսան էր, յուր քրոջ Կալո-Մարիայի ամուսինը, Թեոդորայի քույրերից մեկը։ Փոտը, ինչպես և Թ. դարում մեր Զաքարիա կաթողիկոսը, մի քանի օրվա ընթացքում եկեղեցական բոլոր աստիճաններն ստանալով, 858 թվին Ծննդյան օրը՝ դեկտեմբերի 25-ին բարձրացավ պատրիարքական աթոռը։ Այնուհետև երկարատև պայքար կար Փոտի և Իգնատիոսի և նրանց կողմնակիցների մեջ, որ ալեկոծեց եկեղեցականի հետ նաև քաղաքական կյանքը։ Այս վեճերի ժամանակ կայսրը յուր կեսարի սենեկապան (պարակիմոնեն) է նշանակում Վասիլ հային, որի ազդեցությունը արքունիքում աճում էր հետզհետե, և որ կարևորն է բացարձակապես շահեց կայսեր տարփուհու Եվդոկիա Ինգերի և կայսերական քրոջ Թեկղայի սիրտը։ Սորան ավելացան բանսարկությունները ու ինտրիգները, որ սովորական էին արքունիքում։ Նա յուր կողմը գրավեց նաև լոգոֆետ Սմբատին, որ Վարդի դստեր Իրենեի ամուսինն էր։*

*Դավադրությունը երևան եկավ կայսեր կեղծյալ արշավանքի ժամանակ դեպի Կրետե կղզին ընդդեմ արաբների, անպայման Վասիլի դրդմամբ։ Թրակիայում բանակած ժամանակ, դավադիրներն իրենց գործին անցան Սմբատի ղեկավարությամբ, նախապես Վարդի Անտիգոն որդուն, որ սքոլարների պետն էր և անհարկու, ձիարշավի ուղարկելով, և ապա տված նշանի համաձայն կայսեր ներկայությամբ սրախողխող անելով Վարդին։ Կոստանդին Ծիրանածին փոքր ինչ տարբեր կերպով է պատմում. որպես թե Միքայելն է դավադրության սկզբնապատճառը. Վասիլը միայն կայսեր կամքն է կատարել։ Իրողությունը չի փոխվում, որ Վասիլը կամեցել է մեջտեղից հեռացնել, հարթելով յուր կայսր դառնալու ճանապարհը։ Հաջորդ տարին՝ 867-ին ընկավ Միքայելը Վասիլի սրով և միահեծան կայսր դարձավ Վասիլ՝ հայկական հարստության հիմնադիրը, որոնց ժամանակ բյուզանդական պետությունը հասավ յուր ծաղկման գագաթնակետը՝ արվեստի և քաղաքակրթության, բայց նաև զինվորական փառքի տեսակետով (867—1025 թ. թ.)։*

## II

*Ժամանակի սղության պատճառով, շատ թռուցիկ միայն կանգնենք սրանց գործունեության վերայով։ Վասիլ Ա. կամ Մեծ, արժանի է այս անվան իբրև անողոք պետական մարդ։ Նա ծագմամբ մակեդոնացի հայ էր, բայց ժամանակի նշանավոր Փոտ պատրիարքը նորան Արշակունի է հռչակում, հիմնըվելով Սահակ Պարթևի տեսլյան վերա։ Նա, իհարկե, Արշակունի չէր, բայց ծագմամբ հայ, հավանական ազնվական տոհմերից մեկին պատկանող, բայց ուժեղ, պետական գործիչ էր։*

*Նորա օրով նշանակելի գործերից մեկն էր պավլիկյանների լուծարքը. մենք արդեն մի քանի անգամ առիթ ունեցանք հիշելու նրանց մասին. քաղաքական տեսակետով մեծ սխալ էր նրանց դեմ հարուցված հալածանքը. նոքա զգալի ուժ կավելացնեին արևելյան նահանգների պաշտպանության գործում ընդդեմ արաբների և նրանց հաջորդ սելջուկների,*

*եթե կարողանային սիրաշահել և կապել պետության հետ, ինչպես և հայ տարրերն ընդհանրապես։ Նրանց ուժի մասին գաղափար տալու համար, բավական է հիշել, որ Միքայել Թլվատ համարվում է պավլիկյան։ Առաջին հալածանքն սկսվեց Թեոդորա կայսրուհու ժամանակ օրթոդոքս եկեղեցականության դրդմամբ, և ամենամեծ հարվածը տվավ նրանց Թեոդորայի եղբայրը Պետրոս, 100.000 հոգի փչացնելով նրանցից։ Պավլիկյանք հուսահատ՝ Կարբեասի ղեկավարությամբ կյանքի և մահվան կռիվ սկսեցին, դիմելով և արաբների օգնության։ Մելիտինեի Օմար էմիրի կողքին կռվում էին և պավլիկյանք, քարուքանդ անելով Կապադովկիան, Պոնտոսը, Կիլիկիան։ Պատերազմները շարունակվեցին Օմարի և Կարբեասի անկումից հետո և նրանց որդիների ժամանակ, Վասիլ կայսեր օրով, որ պատգամավոր ուղարկեց Պետրոս Սիկիլիացուն։ Քրյուսոկյուրոս պահանջեց Վասիլից թողնել Փոքր Ասիան և բավականանալ միայն պետության եվրոպական մասով։ Վասիլ միայն 871 թվին հնարավորություն ունեցավ անձամբ բանակի գլուխն անցած նրանց դեմ արշավելու, բայց առանց գրավել կարողանալու Տիվրիկը, որ նրանց կենտրոնն էր։ Այդ հաջողեցավ 873 թվին, Վասիլի զորապետներից մեկի՝ Քրիստափոր հայի ձեռքով, որ յուր փեսան էր, երկրաշարժի հետևանքով պարիսպները վնասված լինելով։ Քրյուսոկյուրոսի սպանությամբ և նրանց կրոնական հանրապետության կործանմամբ վերջացավ պավլիկյանց ընդդիմադրությունը։*

*Այնուհետև Վասիլ (867—886) յուր Կոստանդին որդու հետ գրավեց Մարաշը, ամբողջ Կապադովկիան։ Արաբների դեմ կռիվները շարունակվեցին և Լևոն Իմաստասերի (886—912) ժամանակ, ինչպես և Կոստանդին Ծիրանածնի (913—959), երբ Ռոմանոս (919—944) արաբներին հետ մղեց, սահմանագլուխ դարձնելով Ալիսից Եփրատ և Մելիտինեն ենթարկելով բյուզանդական իշխանության։ Նշանավոր էր սորա ժամանակ հատկապես Հովհաննես Գուրգեն (Գուրգուաս) հայ զորավարը. ըստ Գելցերի նրան են պարտական բյուզանդացիք իրենց 100 տարվա չափ անվտանգ գոյությունը արաբներից։ Սորա հետևանքն էր նաև Բագրատունիների և վրաց վերածնությունը՝ արաբական բռնության մեղմացմամբ։ Գուրգեն քսան տարվա չափ կառավարեց բյուզանդական արևելյան գավառները, յուր տիրապետությունը հասցնելով մինչև Վանա ծովը։ Ռոմանոսի անկմամբ (944 թ.), ընկավ և այս նշանավոր մարդը, որ յուր դարու ամենամեծ զինվորականն էր։ Նա էր, որ հետ մղեց նաև ռուսական արշավանքը մայրաքաղաքի վրա (941 թ.)։*

*Այնուհետև հիշատակելի են երեք մեծ կայսրներն իրար հետևից՝ Նիկեփոր (963—969), Ձմշկիկ (969—976) և Վասիլ Բ. (976—1025)։ Նիկեփոր Փոկասի հայրն էր Վարդ Փոկաս, Մամիկոնյանց տոհմից, զորավար։ Հորը ժառանգեց իբրև հրամանատար Նիկեփոր, երկրորդ որդին՝ Լևոն կուսակալ Կապադովկիայի, երրորդը՝ Կոստանդին՝ կառավարիչ Սելևկիայի։ Նիկեփոր գահը բարձրացավ 963 թվին գովասանքի արժանացած իբրև հաղթական զորական և կազմակերպիչ։*

*Նորան հաջորդեց Հովհաննես Ձմշկիկ (969—976), որ գործակից էր նաև Նիկեփորին 963 թվին՝ նորա կատարած հաղթական արշավանքներին ընդդեմ արաբաց։ Ձմշկիկ նվաճեց բուլղարներին, բյուզանդական սահմաններից քշեց արաբներին և Բաղդադի խալիֆային ստիպեց հարկ վճարել։ Ձմշկիկ այս կայսրների շարքում ամենից հայն էր յուր զգացմունքներով և բարեկամական հարաբերությամբ դեպի Աշոտ Գ. Ողորմածը՝ Բագրատունի։ Այս բարեկամական հարաբերության արդյունքն էր Բագրատունյաց ճոխությունը Աշոտ Գ. Ողորմածի, Սմբատ Բ.ի և Գագիկ Ա.ի օրով, երբ հայ ճարտարապետությունը Անիի Մայր եկեղեցին կերտեց։*

*Աննա Կոմնենոս յուր Ալեքսիադա գրվածքի մեջ հայտնում է, որ Ձմշկիկ, որ պավլիկյաններին Թրակիա է փոխադրում, հատկապես Ֆիլիպպոպոլիս, ընդդեմ սլավների մաքառելու համար, որոնք հետո բազմացան այնտեղ և Ալեքսիոս և Աննայի ամուսին Նիկեփորոս աշխատեցին դարձի բերել։ Սրանց մի մասը սակայն հաստատ մնացին և Ս. Գրքին իբրև լավ ծանոթ, վիճում էին օրթոդոքսների դեմ։ Նոքա պետք է այնքան զորավոր լինեին, որ Ալեքսիոս ևս ակնածեր, մինչդեռ բոգոմիլներին ծանրագույն պատիժներ է տալիս։ Պավլիկյանք ապրում են սերտ, համայնական կյանքով, իրար կապված՝ գոյության պահպանության համար։ Նրանց մեջ պիտի լինեին և թոնդրակեցիք ըստ Կարապետ սարկավագի[7]։*

*Վասիլ Բ. ևս բարյացակամ [էր], բայց ոչ յուր նախորդի չափ, մանավանդ կրոնական տեսակետով։*

*Ժ. դարը բյուզանդական պետության ոսկեդարն է հայ հարստության ժամանակ, քաղաքական հզորությամբ և արվեստի և քաղաքակրթության տեսակետով։ Ծաղկում են դպրոցներն ու գրականությունը, արվեստը յուր ճյուղերով, ճարտարապետությունը, նկարչությունը՝ խճանկարչական և որմանկարչական, բայց ավելի ոսկերչական և մա-*

7. ՓԱՎՂԻԿՅԱՆՔ, տպ. Երուսաղեմ, 1938, եր. 196։

նախանց մանրանկարչական արվեստները հասնում են զարմանալի նրբության և գեղեցկության։ Կայսրներից ոմանք ոչ միայն հովանավոր են, այլև իմաստասեր կամ արվեստագետ: Վասիլ Ա. ինքը շինարար է և արվեստի հովանավոր. նորա որդին Լևոն Ա. Իմաստասեր մականունն ունի. Կոստանդին Է. Պորփյուրոժեն ոսկերիչ էր բարձր մտքով[8], մատենագիր, խրախուսող և հովանավորող գրականության։ Նորա հովանավորությամբ է գրված Թեոփանեսի ժամանակագրության առաջին չորս գրքերը, իսկ հինգերորդը ինքն է գրել։ Նա գրել է նաև բյուզանդական արքունիքի արարողության և զինվորական թեմերի մասին։ Գեննեդիոս պատմաբանը նորա քարտուղարն էր և նորա պատվերով է գրել յուր պատմությունը։

Զարգանում է տեխնիկան, բարձրանում շքեղության պահանջը, որ ծնողն է բարձր արվեստի, ճարտարապետությունից ավելի, խճանկարչությունը, էմալը, մանրանկարչությունը, մանավանդ վերջին երկուսը ուշադրության կենտրոնում։

Ի՞նչ է մանրանկարչությունը։ Ս. Գրքի, Հին և Նոր Կտակարանների, ժամապաշտական գրքերի պատկերագրությունն ու զարդարանքը. առաջինը ըստ բովանդակության և երկրորդը ըստ գեղեցկագիտական պահանջի[9]։ Գույները առաջին դեր են կատարում, և նրանց ներդաշնակությունը դառնում գեղեցիկ և հմայիչ, նուրբ և քնքուշ։ Գույներից կարևորը կարմիրն է, մանրամասնությունները ձևակերպելու համար, իսկ անգաման կիսագույները ամբողջին փափկություն տալիս, նուրբ շղարշի նման ձգված ամբողջության երեսին։ Կապույտը (լաջվարդը) դառնում է խորը, խորհրդավոր և մաքուր, ինչպես երկնքի ջինջ երեսը ծովի ջրերի մեջ[10]։

Մանրանկարչական դաշտանկարը (պեյզաժ), բուսական և կենդանաբանական պատկերավորությամբ և երկրաչափական գծերով կամ հյուսվածքով, ստանում են գորգերի պեսպիսություն և երանգների աննման, անհնապարար ճոխություն։

Ժ. դարում երևան է գալիս մանրանկարչական պատկերագրության մի տեսակը. փոքրիկ, միկրոսկոպիկ ֆիգուրների, 5 սանտիմետր մեծությամբ պատկերի մեջ ցուցադրել իրական մանրամասնություններ և նրբություններ[11], հագուստի, շարժման, արտահայտության։ Դեմքերի արտահայտությունները էլ բնորոշ փոփոխություն են ստանում, համեմատ այն տարրերի, որոնք կյանքի գերիշխող տարրերն են կազմում, ըստ Կոնդակովի՝ կովկասյան ազգերի՝ հայոց և վրաց։

Այս ընդհանուր նկարագրությունը, եթե կամենանք փաստերով ապացուցանել, կարող ենք հիշել Փարիզի Ազգային մատենադարանի № 510 ձեռագիրը, որ Գրիգոր Աստվածաբանի ճառերն են, պատրաստված Վասիլ Ա.ի համար, 880—885 թ. թ., գրչության և մանրանկարչության մի սքանչելի գործ։

Երկրորդը դարձյալ արքայական սեփականություն, Վատիկանի Հայսմավուրքը, սեփականություն Վասիլ Բ.ի (976—1025)։

Աստվածաբանի ճառերի զարդագրության ճոխությունն ու շքեղությունը պալատի անմիջական ազդեցությունն են մատնանշում, հավանորեն և պալատական նկարիչների գործ։ Ռուս գիտնական արվեստագետ Պավլովսկին այսպես է բնորոշում այդ գործը. «Անսովոր կատարելության հասած արվեստ, գույների պայծառ երանգներ, ամենից նուրբ ստվեր ու լույսի եղանակավորումներով, զգեստի արտաքին ճոխության բոլոր հարըստությամբ և մանրամասն նրբին գործվածքով—այդ մանրանկարների բնորոշ գծերն են կազմում։

Այստեղ տեսնում ենք նուրբ, շղարշային նրբության հասնող երկնագույն մի տափ—ֆոն— և կամ արևծագի վառ ու շողշողուն կարմիր և փայլուն, կանաչ սիզագույն երանգ՝ հողի ու երկրի։ Ծալքերի նրբությունները, որոնք մեր առաջ ներկայանում են դասական, մաքուր, բարձրանիշ տիպարներով և կամ ավելի նրբագեղ դեմքեր։ Մարմինը լիք ու գիրուկ, կարմրադեմ, երեսը գեղեցիկ, կլորիկ. իսկ շարժումները թեթև ու հաճելի։

Մի խոսքով, ամեն ինչ մեզ առաջնորդում է տեսնելու նուրբ ու զարգացած, մշակույթի կնիք կրող ճաշակով»[12]։

Ճարտարապետական արվեստի համար կարող ենք հիշել Վասիլ Ա.ի շինած ΗΝΕΛ կոչված տաճարը, որ յուր ճոխությամբ մըրցակից պիտի լիներ Այա-Սոֆիային՝ Փոտի

---

8. Կտրվածակերտության մեջ (էմալ):

9. Երանաշնորհ Հայրապետը այստեղ տողընդմեջ կարմիր մատիտով գրած է անավարտ և շարունակելի այս ձևակերպությունը. «Ստացմամբ ճիշտ էր, բայց այժմ...»:— Ս. Ս.

10. Երանաշնորհ Հայրապետը ձախ լուսանցքին շեղակի գրած է, կերևի իբրև նմուշ ցույց տալու համար մոգական լապտերով. «Երուսաղեմի թիվ 1925 ձեռագրի մի պատկեր, Մովսես տասնարանյա պատվեր ստանալիս»:— Ս. Ս.

11. Երանաշնորհ Հայրապետը ձախ լուսանցքին շեղակի գրած է, կերևի նույնպես իբրև նմուշ ցույց տալու համար մոգական լապտերով. «Վասակ Ճանճատեր և Հեթումի Ճաշոցը»:— Ս. Ս.

12. Պավլովսկիին մեջբերված այս հատվածի թարգմանությունը, դատելով գրերին, կպատկանի Տիրայր Արքեպիսկոպոսին։— Ս. Ս.

*նկարագրությամբ։ Գմբեթի կենտրոնում նրանից, որ երկինքն էր ձևացնում, Քրիստոսի մոզայիկ անդրին էր, որ վերևից օրհնում էր երկիրը, շուրջը՝ հրեշտակներ։*

*Երկրորդ ուշադրության արժանի տեղը սեղանն էր, աբսիդը, Աստվածածնի պատկերն էր, ձեռքերը վեր բարձրացրած իբրև բարեխոս։*

*Վասիլի շինած եկեղեցու հետևողությամբ բազմաթիվ ուրիշ նկարազարդ եկեղեցիներ [կառուցվեցին]։*

*Թ. դարում առաջին անգամ Բյուզանդիայում երևան է գալիս գմբեթավոր բազիլիկան, կամ բազիլաձև եկեղեցիները գմբեթավոր, որ Հայաստանում տեսնում ենք Զ—Է. դարերում։*

*Ուրեմն հայ արյունի հետ և ավանդական են դառնում արվեստի որոշ երևույթներ։*

*Սորանով էլ կամենում ենք վերջավորել մեր խոսքը։ Վասիլ Բ.ից հետո եկող կայսրների սխալ քաղաքականությամբ, իրար հետևից ԺԱ. դարի երկրորդ քառորդին, ընկան հայ, բնիկ երկրի քաղաքական, իշխանությունները՝ Արծրունիք, Բագրատունիք և այլ մանր իշխանությունները։ Արևմուտքում հաստատված նրանց մնացորդների հետ էլ միանգամայն թշնամական դիրք ստեղծվեցավ ազգայինի հետ և կրոնական հողի վրա։ Իսկ սելջուկյան հրոսակները անարգել ոչ միայն բուն Հայաստանի, այլև Փոքր Ասիայի արևելյան և միջին նահանգների տերը դարձան։ Կայսրությունն այժմ զրկված յուր արևելյան տարրերից, հատկապես հայերից, զուտ հունական դարձավ։ Խաչակրաց տիրապետությունն էլ միջանկյալ կերպով, ավելի քայքայեց նորա ուժերը։ Այնուհետև Տրապիզոնի փոքրիկ կայսրությունը, թեև կարողացավ տիրանալ Պոլսին, բայց արդեն սկսված էր հոգևարքը, որին վերջին հարվածը տվին օսմանյան թյուրքերը։*

*Պատմությունը ամենալավ ուսուցիչն է մարդկության։ Հայերի դերը բյուզանդական պետության մեջ նույնպես մի կտոր է. մի հատված պատմության։ Է., Ը. և ապա Թ—Ժ. դարերում [եթե] հասկացողություն կազմված լիներ բյուզանդական և բուն հայկական իշխանությունների գործակցության, բոլորովին այլ կլիներ պատմության ընթացքը։ Փոխադարձ չլսման և չեզոքացման քաղաքականությունն ու հասկացողությունը, ավա՜ղ, կարմիր թելի նման անցնում է այդ դարերի պատմության միջով։ Բայց բացասական այդ կողմերի հետ պետք է գնահատվի հայ տարրի կատարած դերը քրիստոնեական-արևմտյան քաղաքակրթության պատմության համար։ Չլիներ հայ տարրը նախ բուն Հայաստանում, յուր ազգային Հայաստանյայց Եկեղեցիով և պետություններով, և ապա բյուզանդական կայսրության արևելյան նահանգներում, արաբական և մահմեդական կրոնն ու քաղաքակրթությունը իսպառ ոչնչացրած կլիներ քրիստոնեական կրոնն ու նորա հետ կապված հելլենական-արևմտյան քաղաքակրթությունը։*

*Արաբական և մահմեդական համատարած ծովի մեջ խեղդվեցավ Աղեքսանդրիայի մեծ եկեղեցին, որ մի ժամանակ՝ Գ—Զ. դարը առաջնորդող դեր էր կատարում։ Հյուսիսային Աֆրիկայում՝ Կարկեդոնում ծաղկած էր քրիստոնեությունը և ուներ Տերտուղիանի և Կիպրիանոսի նման հայրեր, բայց քրիստոնեության հետքն անգամ չմնաց արաբական հեղեղներից հետո, բայց հայ քրիստոնեությունը մնաց և թումբ եղավ նման հեղեղների դեմ։*

*Ահա՛ հայ տարրի մեծ նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության մեջ։*

(«ՀԱՍԿ», պաշտոնաթերթ Կիլիկիո Կաթողիկոսության, Անթիլիաս, հունիս–հուլիս 1953)

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ[1]

*Նախորդ հոդվածում ես խոսեցի անունների ծագման մասին։ Իմ ասածների ամփոփումը այս է.— Անունը այն միջոցն է, որով հասարակության մի անդամը (անհատը) զանազանվում է մնացյալ անդամներից։ Ամեն անուն մի բառ է, որ ունի իր որոշ նշանակությունը։ Անունները հաճախ ազգից ազգ փոխ են առնվում և ընդհանրանում։ Հայերը թեև ունեն իրենց բնիկ սեփական անունները, բայց դրանք շատ քիչ են։ Մեր գործածած անունները մեծավ մասամբ օտար են. պահլավերեն, պարսկերեն, հունարեն, եբրայերեն, թյուրքերեն և զանազան եվրոպական լեզուներով, որոնց մեջ գտնում ենք նաև ռուսերեն անունները։*

*Այժմ խոսում եմ ազգանունների մասին։*

*Երբ համայնքը փոքր է, անունը բավական է անհատը համայնքի մնացյալ անդամներից զանազանելու համար։ Օրինակ, մի գյուղում, ուր 10—20—30 անվոր միայն կա, երկու սեռը բաժանելով, նրա կեսի չափ միայն տղամարդ և այնքան էլ կին պիտի լինի։ Ուստի եթե մի 100 անուն լինի, այդ թիվը բավական է. ամեն մարդ էլ կիմանա, թե ո՛վ է Կարապետը, կամ ո՛վ է Գրիգորը։*

*Բայց երբ համայնքը մեծանում է, անդամների թիվը բարձրանում է 100-ների և 1000-ների, այն սակավաթիվ անունները այլևս բավական չեն։ Ուստի կամ պետք է անունների թիվը շատացնեն, ինչ որ անում են, և կամ անուններին պիտի ավելացնեն զանազանիչ մի երկրորդ միջոց։ Զարգացման այս առաջին աստիճանը կազմում է ածականը։ Անվան վրա դնում են մի ածական։ Վերցնում են նույն անհատի արտաքին կամ ներքին նկարագրից հատկանշական որևէ կետ։ Օրինակ. հռոմայեցվոց ինքնակալներից մեկը կոչվում էր* Հուլիոս. *սա մի սովորական անուն էր հռոմայեցվոց մեջ. կային շատ Հուլիոսներ. ուստի այս Հուլիոսը մյուս Հուլիոսներից զանազանելու համար կոչեցին* Հուլիոս Կեսար:— *Ի՞նչ է նշանակում կեսար.— Կեսար նշանակում է փորը ճղած։ Երբ Հուլիոսի մայրը երկունքի մեջ էր, ծնունդը շատ դժվար եղավ. բժիշկները ստիպվեցին ճղել մոր փորը և երեխային այնպես դուրս բերել. Հուլիոսը կոչվեց փորը ճղած Հուլիոս։ Այնուհետև Հուլիոս Կեսարը մի մեծ ինքնակալ դարձավ և նրա Կեսար վերադիրը նշանակեց «մեծ ինքնակալ». այս է կայսր բառը։*

*Ածականով անուններ շատ սովորական են թե՛ պատմության և թե՛ մեր հասարակ կյանքի մեջ. օրինակ՝* Լենկ-Թիմուր *(Կաղ Թիմուր),* Իվան Գրոզնիյ *(Իվան Ահեղ),* Աշոտ Ողորմած, Գայլ Վահան, Աշոտ Երկաթ, Գող Վասիլ, Գիժ Ամրամ, Քոռ Թաթոս, Զոլախ Սարգիս, Փալթարա Մարտին, Հապրասենի Գուրգի *և այլն։*

*Ածականներից հետո կարելի է դնել անհատի տեղը, ծնված կամ բնակած քաղաքը. այսպես՝ ունենք* Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Տաթևացի, Մովսես Խորենացի, Խաչատուր Տարոնացի, Գևորգ Ակնեցի, Ներսես Լամբրոնացի *և այլն։*

*Երրորդ միջոցն է հայրանվան գործածությունը. այսպես՝* Գրիգոր որդի Հովհաննու, Տրդատ որդի Խոսրովու, Սմբատ որդի Աշոտի: *Թյուրքերի մեջ՝* Հյուսեին օղլի Ալի, Ալի օղլի Սուլեյման *և այլն։ Արաբների մեջ՝ Հա–*

*1. Սկիզբը տե՛ս ամսագրի 1953 թվականի հոկտեմբերի համարում։*

սան իբնի Ալի, Ալի իբնի Վենպի. Մեհեմմեդ իբնի Սուլեյման: Ամենքիս հայտնի է ռուսաց մեջ ընդունված սովորությունը, հայրանունը իբրև պատվանուն.— Նիկոլա Ալեքսանդրովիչ, Վլադիմիր Սերգեևիչ, իգականի մեջ՝ Աննա Գրիգորիևնա, Սոֆիա Գերասիմովնա և այլն։

Այս երեք միջոցներն էլ կարող ենք կոչել անհատական կամ ավելի շուտ մականուն, քան թե ազգանուն։ Ազգանունը այն է, որ դրվում է մի գերդաստանի ամբողջ սերնդի կամ սերունդների վրա և կարող է դարերդար շարունակվել։ Այսպես Մամիկոնյան, Բագրատունի, Արծրունի, Գնունի, Սյունի, Խորխոռունի, Հավնունի, Զյունական և այլն և այլն, հին հայոց նախարարական տոհմերը, որոնք շարունակվել են երկար դարեր և արաբական շրջանում հետզհետե վերջացել։

Կան ազգեր, որոնք հայրանվան վրա կանգնում են և ազգանվան չեն անցնում. այսպես էին թյուրքերը և պարսիկները, որոնք գիտեին միայն Հյուսեին օղլի Ալի կամ Հյուսեին Հուսեյնի Ալի. և միայն վերջին քսանամյակում, հետևելով եվրոպական կարգերին, անցան ազգանվան։ Հետաքրքիր է կարծեմ իմանալ, թե ինչպես պարսիկները անցան ազգանվան։ 1918 թվականին էր, պարսից կառավարությունը հայտարարեց, թե այսուհետև տիտղոսները պիտի ջնջվեն և ամեն մարդ իրեն համար մի ազգանուն պիտի ընտրե։ Ամեն մարդ ընկավ մտածողության խորը և մի որևէ տեղից մի բան հնարեց և թերթում հայտարարեց, թե ես այսինչ ազգանունն եմ վերցնում։ Այլևս ոչ ոք այդ ազգանունը վերցնելու իրավունք չուներ։ Երկու տարի տևեց այդ գործողությունը և ամեն ընտանիք կամ գերդաստան տարբեր ազգանվան տեր դարձավ։

Արաբներն էլ կանգնել են հայրանվան վրա և որովհետև միայն հայրանունը քիչ էր զանազանելու համար համայնքի զանազան անդամները իրարից, ավելացրին նրա հետ նաև մի մականուն և այն անձի ո՛ր տեղացի լինելը։ Արաբների մեջ կա նաև մի ուրիշ տարօրինակ սովորություն, որ միայն արաբներին է հատուկ։ Ենթադրենք մի մարդ Հասան անունով, սա ենթադրենք թե Հյուսեինի որդին է, ուստի լինում է Հասան-իբնի-Հյուսեին. նա ասենք Բաղդադ քաղաքից է, ուստի լինում է Հասան-իբնի-Հյուսեին-էլ-Բաղդադի, նա ունի մի մականուն, ենթադրենք Ջաբբահ. ամբողջը լինում է Հասան-իբնի-Հյուսեին-էլ-Բաղդադի-Ջաբբահ։ Բայց այսքանը քիչ է. նա ամուսնացավ, ունեցավ մի որդի Ալի անունով. հայրը այժմ իր վրա է վերցնում աբու-Ալի, այսինքն «հայր Ալիի» տիտղոսը և դառնում է Հասան-իբնի-Հյուսեին-էլ-Բաղդադի-աբու-Ալի-Ջաբբահ։ Որդիները շատացան. նա ունեցավ երկու որդի ևս, մեկը Մուսթաֆա և մյուսը Սուլեյման։ Ուստի այդ մարդը դարձավ՝ Հասան-իբնի-Հյուսեին-էլ-Բաղդադի-աբու-Ալի-աբու-Մուսթաֆա-աբու-Սուլեյման-Ջաբբահ։ Արաբ պատմության և գրականության մեջ շատ ենք պատահում այսպիսի կանգունաչափ անունների. օրինակ՝ մի բանաստեղծ կա, որի անունն է՝ Իզզ-էդ-դին-Աբդուլ-Ջոտա-էլ-Աբդուլ-Վահհաբ-Ահմադ-էդ-դին-իբն-Իբրահիմ-էլ-Սենհաջի։ Եգիպտոսի սուլթաններից մեկի քարտուղարն է Շեյխ-ար-Ռայիս-Սաֆի-ադ-Դավլա-իբնի-աբու-Մաալի-իբնի-Շարաֆի։ Արաբ ուղեգիրներից մեկը կոչվում է Աբու-Աբդալլահ-Մուհամմեդ-բին-Աբդուլլահ-բին-Մուհամմեդ-բին-Իբրահիմ-էլ-Վաթի-էդ-Դանջի-իբնի-Բատուտա-Նեմմ-էդ-Դին։ Մի արաբ բժիշկ կա, որի անունն է Զիա-էդ-դին-աբու-Մուհամմեդ-Աբդալլահ-բին-Ահմեդ-էն-Նուբաթի-էլ-Մալաքի։ Արաբ պատմիչ Իբն-Խալլիքանը իր Վեֆայաթ էլ Աայան գրքում (թրգմ. Գ. Մըսըրյան, Կահիրե, 1935 թ., էջ 8), այսպես է անվանում Խորասանի էմիրներից մեկի անունը.— Էլ էմիր Կութեյբա բին աբի Սալիհ Մուսլիմ բին Ամր բին էլ Հուսեյն բին Ռաբիա բին Խալիդ բին Էսիդ էլ Խեյր բին Կուդայի բին Հիլալ բին Սալամա բին Սաալաբա բին Վաիլ բին Մաան բին Մալիք բին Աասար բին Սաադ բին Կայս Այլան բին Մուդար բին Նիզար բին Մաաադ բին Ադնան էլ Բահիլի։ Սա այդ մարդու ամբողջ ցեղաբանությունն է։ Իբն-Խալլիքանը մի ուրիշ անգամ էլ տալիս է մի իշխանի երկար անունը և հետո էլ ավելացնում է. «մնացյալը չեմ հիշում»։ Դժբախտաբար ես էլ էջը չեմ հիշում։

Հայրանունները կարող են կրկնվել, այսինքն դնել պապի և պապի հոր, գուցե և պապի պապի անունը։

Արաբական սովորությունը քիչ-քիչ կամ մասամբ տարածվեց հպատակ կամ կրոնակից ցեղերի վրա. օրինակ՝ Մադագասկարի թագավորներից մեկը կոչվում է Անդրիանամպոյինիմերինա։ Իսպանացիք էլ սիրում են կազմել երկար անուններ։ Մի առակ կա. Հարավային Ամերիկայում մի իսպանացի գիշերը անտառում կորցրել է ճանապարհը. ստիպված թակում է մի անգլիացու դուռը և խնդրում է, որ իրեն թույլ տա գիշերել. անգլիացին մութ տեղը պատուհանը բաց արած հարցնում է ո՞վ է։ Իսպանացին պատասխանում է.— Ֆերնանդո-Դեյլոս-Լեսոոս-Սերվանդես-Դեյլոս-Մինկոս-Սանրա-Կուզենո-Դեյլոս-Անտիխոնոս։— Մեր տունը փոքր է, այդքան մարդու տեղ չկա,— ասում է անգլիացին և պատուհանը փակում։

*Ուրիշ ազգեր ճանաչում են անուն, հայրանուն և ազգանուն. օրինակ՝ չինացիք, որոնց բառերը շատ կարճ են, հետևում են այս սովորության. Հիշենք չինական անուններից՝* Կոն Ֆու-ցե, Լի Հունգ-չանգ, Սուն Յան-ցեն, Շի Հուանգ-թի, Շուն Ցու-յուն *և այլն: Սրանց մեջ առաջին վանկը ազգանունն է, երկրորդը՝ հայրանունը և երրորդը՝ անունը: Ռուսաց մեջ էլ, ինչպես հայտնի է, գործածական է անունով և հայրանունով ազգանունը. օրինակ՝* Իվան Ֆեոդորովիչ Պալին *և այլն:*

*Եվրոպացիք լայնորեն օգտագործում են ազգանունը: Անունը ֆրանսիացոց մեջ այնքան անարժեք բան է, որ անուն ասելով հասկանում են ազգանուն, իսկ անվան համար գործ են ածում փոքր անուն* (petit nom)*: Մի անձ կարող է ունենալ 3—4 անուն, բայց միայն մի ազգանուն: Այսպես Փարիզի իմ դասընկերներից հիշեմ՝*

Edouard-Marie-Antoine-Aude.
Louis-Marie-Jean-Bodin.
Lucien-Etien-Albert-Broche.
Charles-Jean-Marie-Brou.
Pierre-Paul-Narcisse-Fernand-Chilot.
Joseph-Jean-Baptiste-Vendryès.

*Այս ընդհանուր ծանոթություններից հետո մասնավորենք մեր խոսքը հայոց ազգանունների վրա:*

*Հին հայոց մեջ հասարակ ժողովուրդը երևի գործածում էր անուն-հայրանուն. իսկ ազնվականները կրում էին ազգանուն: Ազգանունները նույն շրջանում ձևանում էին* ունի *մասնիկով, որն ավելի ուշ դարձավ* եան (յան)*. 6-րդ դարում հայերը պարսիկներից վերցնում են հոգնակի* ան, եան (յան) *մասնիկը և դարձնում են նրանց նման ազգանուն, նույնիսկ փգաֆեթի պարսկական օրինքով: Ներսես կաթողիկոսի գրած թղթի մեջ ստորագրում են ի միջի այլոց հետևյալ իշխանները.*

*Համազասպ ի Գուգվառունեան*
*Սամէլ յԱրտաւազդեան*
*Գրիգոր ի Հմայական*
*Սահակ ի Վարդանան*
*Դատոյ ի Գարջուղեան*
*Ջուրակ ի Գագաստնան*
*Վարազ-Յոհան ի Յոհանան*
*Վարդան ի Մուշեղեան*
*Սահակ ի Հմայակեան*
*Աշոտ ի Վարազտիրոցեան*
*Մուշեղ ի Հմայեկեան*
*Վրիւ յԱրտաշրան*
*Սահակ ի Մանուէլեան և այլն և այլն:*
*(Գիրք թղթոց, էջ 74):*

*Սա պարսկական ազդեցության շրջանն է: Արաբների ժամանակ ազգանունները վերանում են, ըստ որում իշխանական ցեղերը ջնջվում են: Ավելի ուշ՝ թուրքերի ժամանակ, նույնպես ազգանուն չկա: Տաճկաստանում, իմ մանկության ժամանակ, հայրանունն էր միայն գործածվում ազգանվան ձևով. օրինակ՝ ես դպրոցում արձանագրված էի* Հրաչյա Հակոբյան *(հորս անունով) և խոսակցության մեջ հաճախ կրճատ ձևով ասում էին* Հրաչյա Հակոբ*: 1888 թվականին դպրոց մտավ ազգանվան գրությունը: Հոգաբարձությունը պատվիրեց բոլորիս, որ տուն գնանք և մեր ծնողներից հարցնելով ու իմանալով՝ ազգանուն բերենք: Ընդհանրապես աշակերտները իրենց պապի անունը դարձրին ազգանուն, ուրիշներ մի ինչ-որ մականուն և այլն: Հետաքրքիր է իմ ազգանվան պատմությունը: Ես տուն գնացի և հարցրի, թե մեր ազգանունը ի՞նչ է: Հայրս առաջարկեց վերցնել իր հոր անունը՝* Հարություն *և կոչվել* Հարությունյան*: Ես այն ժամանակ 12 տարեկան էի, բայց արդեն ունեի ինչ-որ լեզվական ճաշակ: Իմ ճաշակով անունից կազմված ազգանունը հաճելի չէր. ուստի մերժեցի* Հարությունյանը *և ուրիշ բան ուզեցի: Հորաքույրս ասաց, որ իրենց ցեղը Ռոդոսթոյում կոչվել է* Հյուպրյուք օղլու*, ուստի առաջարկեց գրել* Հյուպրյուքյան*: Ես այն ժամանակ* Հյուպրյուք *բառի ծագումը չգիտեի. չգիտեի, թե դա էլ անուն է* Հյուպերիք*, որ շատ քիչ է գործածվում: Երևանում մի քանի տարի առաջ մեռել է* Հյուպերիք *անունով մեկը: Ես չհավանեցի նաև* Հյուպերիքյան *ազգանունը և մերժեցի: (Կոստանդնուպոլսում մականունը հաճախ շփոթում են ազգանվան հետ և փոխանակ ասելու ազգանուն, ասում են մականուն, թյուրքերեն լաղաբ, այսինքն փառատանուն): Ես հորս հարցրի, թե քեզ ի՞նչ ծաղրական անուն են տալիս. նա ասաց՝ «ինձ ասում են* Կոճին Ակոբ»*: Ես հավանեցի այս անվան և վերցրի* Կոճինյան *ազգանունը, որի իմաստը անծանոթ էր: Ներկայացա հոգաբարձության և ասացի, թե իմ ազգանունն է* Կոճինյան*: Հոգաբարձուներից մեկն ասաց, թե* Կոճին *բառ չկա, պետք է լինի* Կոճիկ *և ազգանունս շինեց* Կոճիկյան*: Մի ամբողջ տարի դպրոցում կրեցի* Կոճիկյան *ազգանունը: Ընկերներս շարունակ ծաղրում էին ինձ կոչելով* կոճիկ, մոճիկ, տոճիկ, խոճիկ-բոճիկ*: Տարին լրացավ, տարրական դպրոցը ավարտեցի և մտա միջնակարգ: Ես կոճիկից ձանձրացած, որոշեցի փոխել ազգանունս:* Կոճիկ *բառի գրաբարն է* աճառ*, որ ինձ շատ բարեհնչյուն թվաց և ազգանունս դարձրի նոր դպրոցում՝* Աճառյան*, որ ընդունեց նաև հայրս:*

Սրանից 42 տարի առաջ, Էջմիածնի ճեմարանում, երբ ես այս դեպքը պատմեցի, Մանուկ Աբեղյանը ասաց ծիծաղելով. «Մի տաճկահայ չտեսանք, որ շինծու ազգանուն չունենար»։ Ճիշտ է, բայց Աբեղյանի ազգանունն էլ շինծու է։ Նա նախապես կոչվել է Աղբեղյան, այսինքն թյուրքերեն բառով սպիտակ բեղավորյան։ Աբեղյանը անգուրեկան է գտել իրավամբ Աղբեղյանը, միջից ղ կտրել է և դարձրել է Աբեղյան, որ հին հայոց նախարարական տոհմերից մեկի անունն է։

Ես անհատական մի դեպք պատմեցի. բայց դա ցուցանիշն է մեր հասարակական երևույթներից մեկի։ Հայրանունից ազգանվան անցնելը մեր առաջադիմական քայլերից մեկն էր։

Այսօր մեր մեջ ամեն տեղ ազգանունը ընդունված է, պետականորեն ճանաչված և հաստատված մի բան է, որ կարելի չէ ուզած րոպեին այնպիսի հեշտությամբ փոխել։

Մեր ազգանունները կազմված են 4 ձևով։

Առաջինն է անունով ազգանուն. այսպես Հովհաննիսյան, Գրիգորյան, Կարապետյան, Ներսիսյան և այլն։ Սրանց հետ կարելի է դնել Տեր կամ Մելիք ձևով ազգանունները. ինչպես՝ Տեր-Կարապետյան, Տեր-Գրիգորյան, Տեր-Հովհաննիսյան, Տեր-Մարտիրոսյան կամ Մելիք-Աբրահամյան, Մելիք-Շահնազարյան, Մելիք-Փարսադանյան և այլն։ Այս բոլորը կազմված են առաջին անգամ մեկի պապի և կամ պապի հոր անունով։ Դրանք բոլորն էլ ուշ ժամանակի արտադրություն են. ուստի չենք գտնում նրանց շարքում Հրաչյայան, Արտավազդյան, Վռամշապուհյան, Մերուժանյան և նման ազգանուններ, որովհետև այդ անունները շատ հին են։

Այսպիսով անունով ազգանունները կազմված են բնականաբար արական գծով. բայց կան ազգանուններ էլ, որոնք կազմված են իգական անուններից։ Այսպես Մանանդյան կազմված է Մանանդ անունից, որ կնոջ անուն է։ Նույնպես Նայունց, Շուշանյան։ Լինում են ընտանիքներ, ուր կինը ավելի ազդեցիկ անձնավորություն է լինում, քան տղամարդը. այս դեպքում ասում են ոչ թե Կարապետի կամ Գրիգորի տղան, այլ Մարիամ բաջու կամ Թաֆուշ խանումի տղան և այլն։ Այսպիսով ձևանում է իգական անունից ազգանուն։

Ազգանունների երկրորդ ձևն է մոտանունով կամ մականունով կազմված ազգանուն։ Մեկին տվել են մի ծաղրանուն, այդ ծաղրանունը անցել է որդիներին և կազմվել է ազգանուն։ Այսպես են օրինակ՝ Երկայնյան (կամ թյուրքերեն Ուզունյան), Կարճիկյան, Կոլոտյան, Շիրինյան (քաղցր), Գարագաշյան (սև ունքերով), Ղարագյոզյան (սև աչքերով), Թոփալյան (կաղ), Չոլախյան (թևը կոտրած), Տերպետերյան (թափթփած), Խաչանյան, Գուռնազյան (մեծ քթով), Զորբանյան (ժլատ մարդ է եղել, որ միայն չորթանով է ապրել), Դերվիշյան (անփույթ)։ Այս կարգի ազգանունները երբեմն գործը անհամության են հասցնում. օրինակ՝ գրականության մեջ հայտնի է պոլսեցի կաթոլիկ մի վարդապետ՝ Պոյնուէյրիյան (վիզը ծուռ), Եվդոկիայում կար Ցաղլըղարմերեմեզյան (յուղոտ խմորեղեն չուտողյան)։ Նշանավոր են Նոր-Նախիջևանցիք իրենց տարօրինակ, հաճախ անվայել ազգանուններով. ինչպես՝ Ցաքալքաշյան (գլուխը ծռված), Խապախպաշյան (դդումգլուխյան), Այույան (արջյան), Տիլքիյան (աղվեսյան), Բուղայան (ցուլյան), Թացփեշյան (քիթը միշտ վազել է, շորի ծայրով սրբել է, անունը դրել են Թացփեշյան)։ Մի փաստաբան կար Փորֆշեյան (փորը միշտ քշել է), մի դերասանուհի կար Գոզոտյան, մնացյալը քաղաքավարության սահմանից բոլորովին հեռանում է։ Ինչպես նկատում ենք՝ այս ազգանունների մեծ մասը թյուրքերեն է։

Ազգանունների երրորդ ձևն է բնավայրով, երկրի անունով ազգանուն։ Այսպես ունենք Վանցյան, Ստամբոլյան, Հալաբյան, Շամլըյան, Իզմիրլյան, Խրիմյան, Սպարտալյան, Որտոյան, Տրապիզոնցյան, Բաղեշցյան, Պայպուրթյան, Երևանցյան, Աճեմյան (աճեմ նշանակում է պարսիկ. երբ Կովկասը պարսից իշխանության տակն էր, ով որ այս կողմերից գաղթում էր Կոստանդնուպոլիս, Տաճկաստան, կոչվում էր Աճեմյան, իբր պարսկահայ)։ Մեր դասախոսական կազմում ունենք Աղուզումցյան. Աղ ուզում սպիտակ խաղողը անունով մի գյուղ է եղել, գաղթել են այդ գյուղից և ստացել այս մակդիրը։

Ազգանունների չորրորդ ձևն է արհեստի անունով ազգանուն. սա շատ մեծ թիվ է կազմում և սովորական է հատկապես տաճկահայոց մեջ. օրինակ՝ Ոսկերչյան, Գույումճյան, Զարգարյան, Արծաթպանյան, Հեքիմյան, Սնխչյան, Բերբերյան, Ժամկոչյան, Սուճյան, Քեբաբճյան, Թոքմաճյան Դևեճյան, Չիլինգարյան, Նալբանդյան, Մենանաճյան, Զուռնաճյան, Սարոնճյան, Հյուսյան, Դուրգարյան, Գլոտնիկյան, Աշճյան, Խալփախչյան, Բոյաճյան, Ներկարարյան, Կրասիլվիկյան, Դեմիրճյան, Խասապյան, Քերեստեճյան։

Սրանք էլ ընդհանրապես թյուրքերեն են. մի քանիսը միայն հայերեն են։

1900-ական թվականներին, Համիդյան ռեժիմի հայահալած արշավանքի ժամանակ, երբ Եվրոպայի հասարակական գործիչներից ոմանք սկսել էին վերլուծել հայկական հար-

*ցը և որոնել նրա բուն պատճառը, կային նրանց մեջ այնպիսի չարամիտ կաշառված մարդիկ, որոնք հայերին մեղադրում էին, որ նրանք վաճառական ժողովուրդ են։ Այդ անարդար բացատրության ժամանակ գտնվեց ֆրանսիացի մի գրող,* Pierre Quillard, *որ «*Pro Armenia*» թերթում մի հոդված գրեց այդ առթիվ։ Նա ասաց. «Սխալ է այն կարծիքը, թե հայերը վաճառական ժողովուրդ են և ապրում են ուրիշներին շահագործելով։ Այո՛, կան հայոց մեջ վաճառականներ, բայց ժողովրդի մեծամասնությունը գյուղերում երկրագործ և քաղաքներում արհեստավոր էր»։ Սրան իբրև ապացույց մեջ է բերում մի ցանկ այդ չորրորդ կարգի ազգանունների, ինչպես հիշեցի ես էլ։ Ելնելով այն տեսակետից, որ ազգանունը առնվազն մի քանի հարյուր տարիների հնություն ունի, նա հաստատում է այն միտքը, թե հայերը արհեստավոր են և եղել են միշտ՝ տաճկական տիրապետության երկար շրջանում։ Այսպես ահա ազգանունների քննության հասարակ առիթը օգտագործվում է ընկերական և հասարակական երևույթների բացատրության համար։*

---

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պրոֆ. Աճառյանի սույն աշխատության մեջ կան կետեր, որ նրա վաղ շրջանի ուսումնասիրության եզրակացություններն են, որոնք նա վերանայել է հետագայում։ Այդպիսիներից է, օրինակ, հին հայկական կուլտուրայի փոխազդեցության խնդիրը հարևան ժողովուրդների կուլտուրաների հետ՝ չեշտելով հին հայկական կուլտուրայի ինքնուրույնությունը և բարձր զարգացումը։*



Ա. ԵՐԵՄՅԱՆ

# ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ*

(14-րդ դար)

## 7. ԷՋԵՐ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

*Կենսագրական տվյալների նման սեղմ, հակիրճ չեն, բարեբախտաբար, Սարգիս Պիծակի նկարչական ժառանգության վերաբերյալ տեղեկությունները։ Մի շարք ձեռագիր մատյաններում պահպանվել են գրչի և վրձինի ստեղծագործությունները, որոնց հիման վրա կարելի է գծել Պիծակի անցած նկարչական ուղին, ծանոթանալ նրա արվեստի էությանը, ոճի առանձնահատկությունների հետ, որոշել նրա վրձինի վարպետությունը, նրա տեղն ու դերը հայ նկարչության պատմության մեջ։*

*Նշենք և այն, որ արվեստագետի նկարչական ստեղծագործության շրջանն ընդգրկում է 1307—1353 թվականները։ Այդ ժամանակաշրջանում վաստակավոր մանրանկարիչը վրձինել է բազմաթիվ ձեռագրեր, որոնց նկարները, իրենց բովանդակությամբ ու բնույթով, բաժանվում են երկու հիմնական խմբերի — աշխարհիկ և կրոնական։ Ուշագրավ է նաև այն, որ իր մի շարք մանրանկարներում Սարգիս Պիծակը սերտորեն կապված է 12—14-րդ դարերի վերածնության շրջանի հայ աշխարհիկ ուղղության լավագույն ավանդությունների հետ։ Մի շրջան էր դա, երբ երկրում ստեղծված տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների հետևանքով հանդես են գալիս նոր գրական դեմքեր և իրենց ստեղծագործությունների մեջ, նախկին տիրապետող կրոնական մոտիվների փոխարեն մտցնում են աշխարհիկ բովանդակություն։ Երգում են նրանք բնությունը, գինին ու սերը, պատկերում են ժողովրդի տնտեսական և իրավական դրությունը։*

*Այդ նոր շարժման տաղանդավոր արտահայտիչները հանդիսանում են առակագիրներ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, բանաստեղծներ Ներսես Շնորհալին, Կոստանդին Երզնկացին, Ֆրիկը, իսկ նկարչական ասպարեզում փայլում են Թորոս Ռոսլինի հետ Սարգիս Պիծակը և ուրիշներ։ Ահա թե ինչո՛ւ Պիծակի մի շարք նկարները կազմում են հայ մանրանկարչական հին արվեստի թանկագին էջերը։*

*Վաստակավոր արվեստագետի նկարչական մշակույթը պատկերող ամենահին ձեռագիրը № 2566—11 ավետարանն է, որի գրիչն է Գրիգոր քահանան, իսկ նկարիչը՝ Սարգիս Պիծակը, գրչի որդին։ Ձեռագիրը գրվել է 1301 թվականին, «ի թագաւորութեան աշխարհիս Կիլիկիոյ Լեւոնի, որ ի սոյն ամի ածաւ, որդոյ պարոնին Թորոսի, որդոյ արքային Լեւոնի» (Լևոն Գ. թագավորն է։— Ա. Ե.), իսկ Պիծակը նկարազարդել է 1307 թվականին։*

*Նկարչի վրձինած ձեռագրերի լավագույն և ամենաճոխ ստեղծագործություններից մեկը պիտի համարել այժմ Երևանի պետական ձե-*

* *Շարունակված ամսագրի 1958 թվականի սեպտեմբերի և հոկտեմբերի համարներից։*

ռագրատան մեջ գտնված Ռուբինյան Օշին թագավորի ավետարանը, գրված 1313 թվականին Սիս քաղաքում, մի ճարտար գրիչի»[12]։ Այդ գրչագիրը հայոց արքան, 1320 թվականին, Սիրասարիայից իրեն այցելության եկող Ստեփանոս եպիսկոպոսին է նվիրում։ Այս մասին Հիշատակարանում կարդում ենք.

«...Իսկ բարեպաշտ արքայն Աւշին կամեցաւ պարգևս ընծայել իմս նուաստութեան, և ես զմատենաւոր զոյս առ ինչ ոչ համարեցայ, այլ խափափանք սիրով ընձացայ կենաց քարոզիս և բարձր պատուիրանիս աստուածապատում սուրբ աւետարանիս։ Եւ հրամանաւ արքայի մտայ յարկեղս տանն, ուր հաւաքեալ կային սուրբ կտակարանքն, և թէպէտ և պատահեցայ բազմաց և ղանաղանից, այլ ընդ սա հաճեցայ, զոր էր գրեալ արագ և գեղեցկագիր գրչի և բազմերանգ ծաղկաւք զարդարեալ յոգնահանճար նկարակերտի, այլ ոչ յաւարտ հասուցեալ»[13]։

Ձեռագրի նկարազարդումը լրացնում է սրբասէր քահանայ Սարգիս՝ մականուն Պիծակը, որ գրագում աշխատությամբ» նկարազարդելուց հետո, եպիսկոպոսից աշխատավարձ է ստանում 1.300 դրամ։ Ահա՛ Ստեփանոս եպիսկոպոսի վկայությունը.

«...Եւ գտի զսրբասէր քահանայ՝ զՍարգիս մականուն Պիծակ, յոյժ հմուտ նկարագրութեան, և տուեալ իմ ի հալալ արդեանց իմոց Ռ և Յ (1.300) դրամ, և նա յանձն էառ, և բազում աշխատութեամբ կատարեաց և եդից զպակասութիւն սակենկար պատկերացն որ ի սմա, զոր ընկալայ յԱստուծոյ և ղուարճացայ նորքին մարդովն... Արդ, եղև գրուս սորա ի թվ. Հայոց ՉԿԹ (1320), ի դառն և ի դժնեայ և յանբարի ժամանակի... ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ Կեսարացոյ և յարքայութեանն Աւշնի արքայի... Եւ աղաչեմ յիշեսջիք զառաջին աշխատողսն՝ զգծաւղն և զծաղկաւղն, և զվերջին աշխատողս՝ զՍարգիս քահանայ...»

Արդարև, ձեռագիրը նկարազարդելու համար Պիծակը գործադրում է իր լավագույնը և հայ նկարչության նվիրում մի փնջեղիկ ստեղծագործություն։ Ահա՛ նկարչի վկայությունը.

«Յոյժ աշխատեցայ ի յոսկեյն և ի ծաղկելն և ի համարաբարսն, ի յաւետարանաչիրն և ի խորանին (խորանսն), նաև ի գլխագրեյն, զի յոյժ բաղձում էր»

Այդ մանրանկարների նորությունն ու վեհությունը վկայում են Պիծակի վրձինի հմտության մասին։

Սարգիս Պիծակի նկարչական արվեստի առաջին շրջանի ստեղծագործության մի այլ պատկերը տեսնում ենք «Մասիր Հին Կտակարանի և Նոր Կտակարանի» խորագրով մագաղաթյա, մեծադիր և ճոխ նկարազարդ ձեռագրում, որ գտնվում է Երուսաղեմի վանքում։ Դա Հայոց ՉՀԲ (1323) թվականին, Սիս մայրաքաղաքում, Գրիգոր Երեցի գրչով շարադրված ձեռագիրն է, որ ուշադրության են դրավում Սարգիս Պիծակի հմուտ վրձինով նկարված խորանները, կիսախորանները, լուսանցազարդերը, չորս ավետարանիչների նկարները, թռչնազարդերը, մեծ ու փոքր վարդերը, ծաղկանկարները և չափավորթ, կարմիր, կապույտ, կանաչ, նարնջագույն, ոսկի և այլ երանգներն, իրենց գեղեցիկ ներդաշնակությամբ. ձեռագրին ո՛չ միայն առանձին գրավչություն են տալիս, այլև նշում են Կիլիկյան նկարչական դպրոցի նվաճումների մասին։

Ձեռագրի մանրանկարների մեջ իշխում է նկարչի՝ Սարգիս աբեղայի ինքնանկարը, որ ծնրադիր և խոնարհ հայացքով նայում է. հագին՝ վեղար ու փիլոն։ Նկարի քառանկյունների վրա կարդում ենք հետևյալը.



Կույր Ղուկասը
Մանրանկար Սարգիս Պիծակի

12. Հիշատակարանի առաջին մասը գրել է Հայրապետ գրիչը, իսկ շարունակությունը՝ Ստեփանոս եպիսկոպոսը։

13. Կիլիկիո մանրանկարչական դպրոցի լավագույն և արժեքավոր ձեռագրերից մեկն է այս ավետարանը, որ վրձինել են Սարգիս Պիծակը և այլ տաղանդավոր նկարիչներ։

«Զուէր Ստեփանոս տռ քեզ ընկալ,
Չի յոյժ սիրով ետ զսա գրեալ,
Առ յիշատակ իւր մնալ,
Գրիգոր գրիչն է յանգ ելեալ,
Սարգիս ծաղկողն է զարդարեալ»։

Ձեռագրի 984ա էջում գրված գլխավոր հիշատակարանում կան այսպիսի թանկագին տեղեկություններ.

«...Ի թուականութեանս Հայոց ՉՀԲ (1323 թ.), ի թագաւորութեան Հայոց Լեւոնի որդւոյ Աւշին թագաւորի, որ է մանուկ հասակաւ և կատարեալ իմաստութեամբ, և ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ, որ այսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեան Հայոց ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Ձեռամբ իմով անարհեստ գրչի և մեղաւոր երիցու Գրիգորի, որ ձեռն արկի յայսպիսի գործ, ի վեր էր քան զկար իմ և զաւրութիւն տկար մտաց իմոց և անարհեստ գծի. և առաւել զի ի մէջ մեծի տրտմութեան յաղագս դառնութեան ժամանակիս. քանզի յայսմ ամի առաւ մայրաքաղաքն Այաս ամրոցաւքն իւրովք յանաւրէն ազգէն Իսմայելացւոց։ Եւ մեք տարաբերիմք յահ և երկիւղ իբր ի բազմբեր հողմոց ալեկոծեալ նաւ ի մէջ ծովու և մնամք Տեառն այցելութեանն»։

Մի տարի անց Սարգիս Պիծակը նկարչական արվեստին նվիրում է մի նոր նկարազարդ ձեռագիր։ Դա Հայոց ՉՀԳ (1324) թվականին, Սսում, Օշին գրչի, բամբակյա թղթի վրա գրած շարականն է։ Ձեռագիրը թերթելիս գրավիչ են մեծ մասը մանուշակի կարմիր պարզ ծաղկումներով մկզգնատառեր, ոսկեդեղին, կարմիր, լազվարթ և այլ երանգների հիասքանչ ներդաշնակությամբ գծված երկու խորաններ և յոթը կիսախորաններ և նուրբ ու վարպետ վրձինով նկարված երկու մանրանկարներ, որոնք պատկերում են Սարգիս Պիծակի նկարչական դպրոցի տարբեր էջերը։

Ձեռագրի 739-րդ էջում գտնվում է գլխավոր հիշատակարանը, ուր արձանագրված են այսպիսի արժեքավոր տողեր.

«Փառք Ամենասուրբ Երրորդութեան և միոյ Աստուածութեան, Հաւր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս։ Ցեւթն հարիւր և եթանասուն և Գ ամի (ՉՀԳ=1324) գրեցաւ շարակնոցս ի թագաւորութեան Հայոց Լեւոնի և ի հայրապէտութեան Կոստանդեայ, ձեռամբ Աւշնի սպասաւորի բանի, ի քաղաքս ի Սիս։ Ընդ հովանեաւ Լուսաւորչին Հայոց Սրբոյն Գրիգորի։ Ի վայելումն սարկաւագին Գրիգորի։ Արդ աղաչեմ ամենեսեան, որք հանդիպիք գրոցս, յիշեցէք զստացող սորա զԳրիգոր և զծնողսն իւր։ Նաև զանարժան գրոցս և Աստուած ձեզ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս ամէն։ Ընդ նմին և զիս զանարժան սուտանուն քահանայ զՍարգիս և հանգուցեալ հայրն իմ՝ զԳրիգոր քահանայն և զծնողսն իմ աղաչեմ յիշել ի սուրբ աղաւթս ձեր, որ ծաղկով և ոսկով զարդարեցի զսուրբ տառս զայս և որ յիշէ զիս բարի մտաւք և մեղաց թողութիւն խնդրէ, Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ընդ միոյն հազարապատիկ պարգևեսցէ ձեզ և մեզ ամէն։ Ամէն»։

Պիծակի անհայտ մնացած նկարչական արվեստի մի այլ ուշագրավ էջը 1325 թվականին Թորոս Կլայեցի (Հռոմկլայեցի) գրչի կողմից ընտիր բոլորագրով գրված մագաղաթյա ձեռագիր շարականն է, որը նկարազարդել է Պիծակը։ Այս արժեքավոր ձեռագրի հայտնաբերման համար պարտական ենք Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին, որ Նյու-Յորքի «Նոր Գիրք» հանդեսում (1944 թ., № 1) ստորագրել է «Մի կարևոր ձեռագիր Նյու-Յորքի հանրային մատենադարանում» խորագրով մի լուրջ հոդված, ուր հիմք ունենալով Սարգիս Պիծակի ոճն ու արվեստը, եզրակացրել է, թե նա է ձեռագրի գրիչը։ Նյութը զարդարում են նաև 12 լուսատիպ մանրանկարներ։ Հայ արվեստի և մշակույթի պատմության համար ձեռագիրն ուրույն արժեք է ներկայացնում։ Մանրանկարներից ուշադրություն են գրավում Ներսես Շնորհալին հունական զգեստավորությամբ, Գևորգ զորավարը զինվորական զգեստով, վահանով և նիզակով։

Պիծակի գրչական և նկարչական արվեստի մի այլ գեղեցկությունը 1330 թվականին գրված ձեռագիրն է, որ այժմ գտնվում է Երևանի պետական մատենադարանում։ Դա «Մանրուսմունք» գրչագիրն է, որի հիշատակարաններում նկարչի մասին կարդում ենք կենսագրական սեղմ տվյալներ։ Ահա՛ այդ արժեքավոր տողերի պատկերը.

«Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի մանրուսումն, ի թուականիս Հայոց ՉՀԹ.ին (1330), ձեռամբ Սարգսի նուաստ և անարժան քահանայի, ի խնդրոյ պատուական և երջանիկ կուսակրաւն քահանայի Տիրացուի, ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ համաւրէն ազգականաց իւրոց, ի թագաւորութեան Լեւոնի Հայոց, որդւոյ արքային Հայոց Աւշնի. և ի հայրապետութեան Տեառն Յակոբայ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ աւրինակ գրելով, յիշեցէք ի մեղաց թողութիւն... զեղկելի գրաւղ սորին, ծաղկաւղ և ոսկաւղ Սարգիս նուաստ քահանայ... զՍարգիս անարժան քահանայ, և

զՀայրն իմ Գրիգոր քահանայ, և զմայրն իմ Հեղինէ, և զքոյրն իմ զգնացեալսն առ Քրիստոս, աղաչեմ յիշել ի սուրբ աղօթս ձեր, և որ յիշէ, յիշեալ լիցի, ամէն։

Նկարչի վրձինած ձեռագրերի մեջ ուրույն տեղ է գրավում 1331 թվականին, Լևոն Դ. արքայի հրամանով, Սմբատ Գունդստաբլի համար գրած և նկարած «Դատաստանագիրքը»։ Այդ հազվագյուտ ձեռագիրը, որ միջնադարյան հայոց իրավունքի պատմության համար կարևոր աղբյուր է, գտնվում է Վենետիկ, Ս. Ղազարում և իր մանրանկարներով Սարգիս Պիծակի արվեստին պատիվ է բերում։ Այդ նկարների մեջ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում նկարչի վրձինի ստեղծագործությունների պսակը կազմող Լևոն Դ. թագավորի պատկերը, որ ներկայացնում է դատաստան անելիս։ Նկարին առանձին դրավչություն է տալիս ներդաշնակ գույների երաժշտությունը, ուր իշխում են գլխավորապես ոսկեզօծ, մուգ և բաց կարմիր, կապույտ, բաց և մուգ-սրճագույն, մուգ-սպիտակ և այլ երանգները։

Այդ նկարը միաժամանակ անցյալի նկարչական հարուստ ժառանգության թանկագին մի նմուշ է, ուր Պիծակը պատկերել է մանրանկարչության զարգացման հանգուցային որոշ հարցերը՝ նկարչական ուղղության, ձևի, բովանդակության, ոճավորման և այլ հիմնական խնդիրները։ Այստեղ նկարիչը հանդես է գալիս ո՛չ միայն որպես տաղանդավոր իրապաշտ մանրանկարիչ, այլև լավագույն դիմանկարիչ, պայծառ աղգագրագետ և հմուտ ոսկող։

Ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալ բնորոշ տողերը.

«...Գրեցաւ անսիզք Անտաքոյն և նամուս և կանոնք ընդհանրական եկեղեցական և աշխարհականաց և փռանկաց և ամենայն ազգաց ի մի տեղ հաւաքեալ վասն իրաւանց և դատաստանաց, ի թուականութեանս Հայոց ՉՁ (1331), ձեռամբ Սարգսի նուաստ և անարժան քահանայի և ոսկողի։ Որ և հրամայիւ ամենաբարի թագաւորն Հայոց Լևոն՝ որդի ի Քրիստոս հանգուցեալ թագաւորին Հայոց Աւշնի, վասն դրոցս դատաստանաց, որ գրեցան ի յիշատակ մնալոյ յաւիտեան։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կամ աւրինակէք, յիշեցէք ի բարին Քրիստոս զամենաբարի թագաւորն Հայոց և ի Քրիստոս հանգուցեալ զծնաւղսն իւր՝ զսուրբ արքայն Հայոց Աւշին և զՋապել թագուհին իւր, և զամենայն արեան մերձաւորսն իւր, ընդ նմին և զգրող և զոսկող այսմ գրոցս, և որ յիշէ, Քրիստոս Աստուած զինքն յիշէ, ամէն։

Նույն 1331 (ՉՁ) թվականին՝ նկարիչը գրում է և նկարազարդում մի այլ ձեռագիր։ Դա այժմ Երևանի պետական մատենադարանում հանգչող Շարակնոցն է, որի հիշատակարանում ընդգծված են արվեստագետի, իր ծնողների և քրոջ անունները։ Ահա՛ հիշատակարանի էական մասը.



Սողոմոն Իմաստուն
Մանրանկար Սարգիս Պիծակի
(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2627)

«...Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ բազմամեղ և անարժան սուտանուն քահանայի Սարգսի, ի թուականութեանս Հայոց ՉՁ (1331), ի թագաւորութեանս Լևոնի բարեպաշտի, որդոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան Տեառն Յակոբայ, ի խնդրոյ պատուական և երջանիկ սարկաւագին Սարգսի, որ ստացաւ զսայ յարգար վաստակոց իւրոց և ի յիշ[ատ]ակ հոգւոյ իւր և ծնողաց իւրոց Վասլի և Թագուհէյ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, յիշեցէք ի բարին Քրիստոս զյառաջասացեալ պատուական սարկաւագն Սարգիս... Ընդ նմին և զիս՝ զանարժանս՝ զՍարգիս նուաստ քահանայ, զգրիչ սուրբ տառիս, և զհանգուցեալ հայրն իմ՝ զԳրիգոր քահանայն, և զմայրն իմ Հեղինէի, և զքոյրն իմ Թեֆա-

նաւ՝ զգնացեալսն առ Քրիստոս, և զամենայն ազգայինս իմ՝ զկենդանիս և զննջեցեալս. և որ յիշէ և սրտի մտաւք մեղաց թողութիւն խնդրէ, նա ընդ միոյն հարիւրապատիկ առցէ ի Քրիստոսէ Աստուծոյ, յուսոյն մերոյ, ամէն, և հազար ամէնս։

Ահա՝ Պիծակի վրձինի մի այլ ստեղծագործությունը, որ հանգչում է Նուբարյան Օռլեանի ձեռագրատանը։ Դա Հակոբ Բ. կաթողիկոսի Աստվածաշունչն է, նկարչական արվեստի մի թանկագին վավերագիր, որի նկարների մեջ կենտրոնական տեղ է գրավում կաթողիկոսի պատկերը։ Գրչագրի գեղարվեստական մանրանկարները, որոնք գծած են Պիծակի վրձինով, հայ արվեստի մի գեղեցիկ էջն են կազմում։

Պիծակի նկարազարդած լավագույն ձեռագրերից մեկն է նաև 1331 թվականին Դրազարկում գրված ավետարանը, որ այժմ գտնվում է Վենետիկի — Ս. Ղազարի մատենադարանում։ Այդ գրչագրի նկարների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նկարչի ինքնանկարները — «Սարգիս Պիծակ քահանայս» և «Սարգիս Պիծակ աբեղայս», որոնք տաղանդավոր արվեստագետի կերպարի, կենսագրության որոշ գծերի և տարազի հետ ծանոթանալու համար թանկագին աղբյուրներ են։ Այդ գրչագրում Պիծակը փայլում է ո՛չ միայն որպես տաղանդավոր մանրանկարիչ, ոճաբան ու դիմանկարիչ, այլև վարպետ ոսկող:

Երուսաղեմի վանքի մատենադարանում առանձին գուրգուրանքով ու խնամքով պահվում է Սարգիս Պիծակի գրչական և նկարչական արվեստի մի այլ լավագույն գործը։ Դա № 2649—94 ձեռագիր ավետարանն է, որ 1332 թվականին, Լևոն Դ.-ի թագավորության շրջանում, տաղանդավոր նկարիչը գրել է Սիս քաղաքում։ Արծաթապատ և ոսկեզօծ գեղակերտ կազմով և ընտիր սպիտակ մագաղաթյա թանկագին այս ձեռագրի մեկը մյուսից գեղեցիկ սկզբնատառերը, լուսանցազարդերը, պատկերները և մանրանկարները վկայում են վաստակավոր Պիծակի նկարչական դպրոցի էության մասին։ Ձեռագրի բազմերանգ մանրանկարներից ուշադրության են գրավում նախ վարպետ վրձինով նկարված չորս ավետարանիչները, որոնցից ուրույն գծագրություն է Ղուկասի կերպարը (էջ 324)։ Դա գեղեցիկ մի դիմանկար է, որի խարտյաշ, գանգուր, բայց ցանցառ մորուքը և դեպի վար թեքված ըեղը լրացնում են դեմքի պատկերը։ Նստել է նա աթոռակի վրա, որի բաց-կապտագույն ներքնոցը և կարմիր թիկնոցը կազմում են նրա հագուստի ամբողջությունը։ Ծնկների վրա հանգչող բաց ավետարանը բռնել է ձախ ձեռքով, իսկ աջով՝ գրիչը։ Նկարի խորքը ոսկեգեղ է, իսկ շրջանակն եզերված է փոքր վարդերով։ Ավետարանչի ձախ ծնկան առջև ծնրադրել է սև մորուքով, երկու ձեռքերը դեպի ավետարանիչը պարզած մի այլ կերպար։ Դա ձեռագիրն ստացող Գրիգոր քահանան է, որ նայում է պայծառ ու հանդարտ, բայց աղերսող հայացքով։ Հագել է կապտագույն վերարկու և կուրծքը կոճկված մանիշակագույն մի փիլոն։ Մանրանկարի տակ կարդում ենք. «Ո՜վ սուրբ Ղուկաս, Գրիգոր քահանայ քեզ ի յանձինս»։ Նշենք նաև Ղուկասի խորանն՝ իր ուրույն ծաղկումով և տերևների վրա կոկոնաձև 26 գեղեցիկ վարդերով։ Մանրանկարչական տարբեր գեղեցկություններ են նաև ձեռագրի բոլոր գլուխների ճոխ երանգներով վրձինված զարդագիր կամ թռչնագիր սկզբնատառերը։ Ավետարանին առանձին գրավչություն են տալիս նաև ուրույն լուսանցազարդ մանրանկարները, որոնք պատկերում են Քրիստոսի կյանքի դեպքերը — Հիսուսի Ծնունդը, Հովհաննես Մկրտիչ, Մկրտությունը, Օգոստոս կայսր՝ բազմած գահի վրա թագավորական տարազով և այլն։

Ձեռագրի մի այլ հատկանշական արժեքը արծաթապատ ընտիր կազմն է, որի վրա քանդակված խմբանկարները պատկերում են Հիսուսի կյանքի հիմնական էջերը։ Այնտեղ դարերի խորքից նայում են մոգերը, հովիվները, չորս ավետարանիչները և այլ կերպարներ։ Բարձրաքանդակ, ուռուցիկ այդ նկարները 14-րդ դարի հայ ոսկերչական արվեստի ստեղծագործություններ են, որոնք ցայտուն գաղափար են տալիս Կիլիկյան դարաշրջանում զարգացած նրբարվեստ ոսկերչության մասին։ Արծաթապատ կազմի եզերազարդի արտաքին չորս շրթների վրա կարդացվում են հետևյալ տողերը.

«Քահանայք զսա կարդացէք,
Զեկեղեցին բանիւ լցէք.
Եւ զպարծեալն Քրիստոս աղաչեցէք,
ԶԳրիգոր Երէց յորդաւքն յիշեցէք։
Թվ. ՉՁԳ (1334)»։

Ձեռագրի հիշատակարանից ուշագրավ են հետևյալ տողերը.

«...Վասն որոյ ձեռն ի գործ առեալ անարժան այսմ իրի մեղսամակարդ անձն Սարգիս նուաստ և սուտանուն քահանայ և ըստ տուեցելոյ աւգնականութեան ի Քրիստոսէ, գրեցի և յաւարտ հասի զաստուածունակ բանքս զսուրբ աւետարանս յայսպիսի ընտիր և ուղիղ աւրինակէ, ի թուիս Հայոց ՉՁԱ (1332) ամին, ի քաղաքս Սիս, ընդ հովանեաւ Ս. Հոգւոյն և այլ բազմահաւաք սրբոց որք և աստ են։ Ի հայրապետութեան Տեառն Գրիգորի. և ի թագա-

*տրութեան Լևոնի չորրորդի՝ որդւոյ Աւշնի Հայոց արքայի. յայսմ ամի պսակեցաւ ընդ ֆրանկ թագուհին։ Թագաւորն Լևոն... Ընդ նմին և զիս, զանարժան սուտանուն քահանայս, զՍարգիս՝ զգրողիկ սուրբ աւետարանիս և զոսկաւզ, զի յոյժ եմ աշխատեալ և կարողութեամբ Քրիստոսի յանկ հանեալ աւարտեցի և զծնաւղն իմ զԳրիգոր քահանայ և զՀեղինէ և զքոյրն իմ Թեֆանաւ զփոխեցեալսն առ Քրիստոս. և զընկերն իմ և զամենայն միրձաւորսն իմ և զաշակերտն իմ Յակոբ և որ զմեզ յիշէ և սրտի մտաւք մեղաց թողութիւն խնդրէ, նա Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ընդ միոյն հարիւրապատիկ և ձեզ և մեզ պարգևեսցէ և ինքն աւրհնեալ է յաւիտեան. ամէն, ամէն և հազար ամէն»։*

*Հայոց ՉԺԲ (1333) թվականին, «ի թագաւորութեան Լևոնի բարեպաշտի որդւոյ արքայի Հայոց Աւշնի», Սարգիս Պիծակը Սիս մայրաքաղաքում գրում է և նկարազարդում մի նոր ձեռագիր։ Դա շարակնոցն է։ Ընտիր մագաղաթի վրա, հստակ և սիրուն բոլորգրով գրած այս ձեռագրի գեղեցկությունը կազմում են թռչնագիր և ոսկեզօծ սկզբնատառերը և բազմաթիվ ու ճոխ լուսանցազարդերը։ Հիշատակարանի էական մասերն են.*

*«Փառք... Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Սարգսի բազմամեղ քահանայի ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Հոգւոյն, ի լաւ և յընտիր աւրինակէ...ի թուաբերութեան Հայոց ՉՁԲ (1333), ի թագաւորութեան Լևոնի բարեպաշտի որդւոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան Տեառն Յակովբայ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ... յիշեցէք... զիս զանարժան զՍարգիս սուտանուն քահանայ և զծնաւղսն իմ զԳրիգոր քահանայ և զՀեղինէ և զքոյրն իմ Թեֆանոս, զփոխեցեալսն առ Քրիստոս և զամենայն ազգայինս իմ զկենդանիս և զհանգուցեալս. զի յոյժ աշխատանաւք գրեցի և ոսկով և ծաղկիւ և պատկերով զարդարեցի զսա և որ զմեզ յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն»։*

*Ձեռագիրը գտնվում է Պ. Մովսիսյանի մոտ, Կալիֆորնիայում։*

*Ահա՛ վաստակավոր մանրանկարչի վրձինած մի այլ ձեռագիրը։ Դա շարականն է, որ գտնվում է ներկայումս Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում։ Գրված է Հայոց ՉՁԴ (1335) թվականին, Սարգիս Պիծակի գրչով, ինչպես ինքն է վկայում. «Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Սարգիս սուտանուն քահանայի»։*

*Գրչագրի էջերը զարդարող մանրանկարները, որոնք արժեքավոր են իրենց գեղեցիկ ոճավորումներով, ցայտուն գաղափար են տալիս նկարչի արվեստի մասին։ Ուրույն արժեք են ներկայացնում նաև ձեռագրի հիշատակարանները, որտեղ նկարչի հարազատների մասին կան կենսագրական այսպիսի տողեր.*

*«Փառք... Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Սարգիս սուտանուն քահանայի և*



**Եսթեր**
Մանրանկար Սարգիս Պիծակի
(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2027)

*մեղաւոր հոգի, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ կոչի Խուլ Գրիգոր, ի մայրաքաղաքս Սիս... ի թուաբերութեանս Հայոց ՉՁԴ (1335), ի թագաւորութեանն Հայոց Լևոնի չորրորդի որդւոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան Տեառն Յակոբայ» (էջ 333ր)։*

*«Ո՜հ, զամենամեղ անձն իմ զՍարգիս անպիտան մեղուցեալ հոգս, և զհանգուցեալ հայրն իմ զԳրիգոր քահ[անայ] և զմայրն իմ Հեղինէ, և զքոյր իմ զԹիֆանաւ, զգնացեալսն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի սուրբ աղաւթս ձեր և որ զմեզ յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն, ամէն» (էջ 291բ)։*

«Ձեզ աղաչեմ հառաչելի,
Սուրբ քահանայք յամենայնի,
Յիշման առնէք զիս արժանի,
ԶՍարգիս լցեալ մեղաւք ի լի,
Որ զսուրբ տառս գրեցի
Եւ ծայր ի ծայր զարդարեցի։
Որ զմեզ յիշէ, յիշեալ լիցի,
Յարքայութիւն Քրիստոսի,
Եւ իմ ծնաւղացն և ստացողի
Տէրն աղաւթիւք ձեր ողորմի» (էջ 97բ)։

Նշանավոր արվեստագետի նկարչական ստեղծագործության մի այլ պատկերը տեսնում ենք 1335 թվականին Կիլիկիայի Փոսանապատում վրձինված ավետարանում, որը գտնվում է Երևանի պետական մատենադարանում։ Գրչագրի հիշատակարանում ընդգծված են հետևյալ տողերը.

«Ընդ նմին և զիս՝ զանարժանս Սարգիս սուտանուն քահանայ, և զծն[աւղսն] իմ, զամենայն ազգայ[ինս] իմ աղաչեմ յիշել ի Տէր, որ ծաղկիւ զարդարեցի զսուրբ աւետարանս, և որ յիշէ յիշեալ լիցի, ամէն»։

1336 թվականին Սարգիս Պիծակը Սսում գրում է մի այլ ձեռագիր ավետարան, որի հիշատակարանում կարդում ենք հետևյալը.

«... Արդ, եղև գրաւ գրչութեան սորա ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Հոգւոյն և այլ բազմահաւաք սրբոց, որք աստ են, ի թուաբերութեանս Հայոց ՉՁԵ (1336) և աւարտեցաւ ի յամսեանն դեկտեմբերի ԻԹ (29) աւրն, որ էր կիրակէ, ձեռամբ Սարգսի սուտանուն քահանայի, ի թագաւորութեանն Լևոնի չորրորդի, որդւոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան Տեառն Յակովբայ»։

Նկարչի վրձինի և գրչի մի ուրիշ թանկագին ավանդը ՉՂԱ (1342) թվականին Դրազարկի պատմական վանքում գրած և նկարազարդած մագաղաթյա ձեռագիր հազվագյուտ ավետարանն է, որ Կիլիկյան մանրանկարչության արվեստի մասին ցայտուն գաղափար կազմելու համար խիստ արժեքավոր մի վավերագիր է։ Ձեռագիրը Կոստանդնուպոլսում մի մասնավոր տան դարակից հայտնաբերեց երիտասարդ բանասեր Գերճ էրզյանը և «Սուրբ Փրկիչ» ամսագրում (Կոստանդնուպոլիս, 1950 թ., Ա. տարի, № 9) տպագրեց մի հոդված, 7 լուսատիպ նկարներով։ Հիշատակարանի տողերում կարդում ենք.

«Գրեցաւ աստուածախաւս մատեանս... իմոյ անարժանիս՝ ձեռամբ Սարգիս սուտանուն քահանայի. և մեղաւոր հոգիս. ի թվաբերութեանս Հայոց ՉՂԱ (1342). ի հայրապետութեան Տն. Մխիթարայ, և յառաջնորդութեան սր. ուխտին Դրազարկու Տ. Բասիլիոսի. և ի թագաւորութեան Կոստանդիանոսի... յիշեցէք... և զիս անարժանս զՍարգիս սուտանուն քհ. կզրողիկ սորա և զոսկաւզ սր. աւետարանիս և զծն. իմ զԳրիգոր քհ. և զՀեղինի և զքոյրն իմ Թեֆանա»։

Սարգիս Պիծակի նկարչական արվեստի պատկերը գծելիս հիշենք նաև Երուսաղեմի վանքի մատենադարանում գտնված № 1973 ավետարանը, որի գրիչն է դեղագիր Ներսեսը, իսկ նկարները վրձինված են 1346 թվականին Պիծակի ձեռքով։ Այդ մանրանկարների մեջ ուշադրություն է գրավում մի սիրուն դիմապատկեր։ Դա խաչելության առջև ծունկ չոքած Մարիուն թագուհին է, Կոստանդին Բ. արքայի կինը, որ իր ուրույն տարազով ո՛չ միայն նկարչական, այլև ազգագրական խոշոր արժեք է ներկայացնում։

Բազմավաստակ մանրանկարչի արվեստին պատիվ է բերում նաև այժմ Նյու-Յորքի Մորգանի մատենադարանում պահված № 622 «Յայսմաւուրքը», Ագուլիսի Ս. Թովմայի վանքում գտնված նախկին գրչագիրը, որի կրոնական պատկերները, սկզբնազարդերը և լուսանցազարդերը նկարչական արվեստի գեղեցիկ ստեղծագործություններ են։ Գրված է Սսում, 1348 թվականին, «ի թագաւորութեան Հայոց Կոստանդնոյ աւաք մարաջախտում Հայոց Պաղտնի»։

Հիշատակենք նաև Նյու-Յորքի հանրային մատենադարանում բազմած № 1489 ձեռագիր շարականը, որի նկարների նրբությունն ու բանաստեղծական պատկերավորությունը վկայում են Սարգիս Պիծակի նկարչական փայլուն տաղանդի մասին։

Բազմաշխատ արվեստագետի վրձինից հիշատակության արժանի է Հեթում Բ.ի Ճաշոցը, որի էջերը զարդարող այլաբենական գրերն իրենց նրբությամբ, գունագեղությամբ և շքեղությամբ գեղարվեստասերներին հիացմունք են պատճառում։

Նկարչի մանրանկարչական և գրչագրական գործունեության պատմությունը վերջանում է 1353 թվականին։ Դա նրա ծերության շրջանն է։ Այդ թվականին նա Կիլիկիայում, վերջին անգամ, գրում է և «ծայր ի ծայր» զարդարում մի ավետարան, որ այժմ գտնվում է Երևանի պետական մատենադարանում։ Հմուտ վրձինով գծված ձեռագրի մանրանկարները գրավիչ են իրենց նրբությամբ, երանգների գեղեցիկ ներդաշնակությամբ և բանաստեղծական ոճավորությամբ։

Ահա՛ նկարչի գրչով գրված ոտանավոր հիշատակարանի էական մասը.

«Ի Հայոց Մեծաց թուականի,
Ի յուլթ հարոյր՝ւ երկու տարի (1353),
Կատարեցաւ սա ի կարգի
Ձեռամբ Սարգիս քահանայի,
Աւետարանս Քրիստոսի,
Զոր բժշկեաց Տէրն ի յերկրի։
...Զամէն գլխոյ հետ իր գրեցի
Եւ ծայր ի ծայր զարդարեցի,
Ոսկով, ծաղկիւ, զամէնն ի լի
Եւ պատկերնով նոր է ի գրի։
... Արդ, ես նըաստս յամենայնի,
Սարգիս լըցեալ մեղաւք ի լի,
Ի ծերութեան ժամանակի,
Աշխատութեամբ յաւարտ ածի»։

Պիծակի վրձինած աշխարհիկ կերպարներից ուշադրություն են գրավում «Հովիվները»։ Երկու ցայտուն դեմքեր են դրանք, մեկը կիլիկեցի պատանի հովիվ, մյուսը ծերունի, որի սրածայր մորուքը, արտահայտիչ աչքերը և պարզ, բայց ուրույն տարազը առանձին գրավչություն են տալիս նկարին։ Հագել է նա մուրթե զգեստ, թաթարական ոճով, մեջքին գոտի, իսկ գլխին սրածայր գլխարկ։ Առհասարակ, 14-րդ դարի կիլիկեցի հայ տիպարների և նրանց տիպիկ տարազների հետ ծանոթանալու համար մեծ արժեք են ներկայացնում Սարգիս Պիծակի վրձինած նկարները։

Կենդանի և խոսուն ստեղծագործություններ են նաև՝ «Փարիսեցին», «Հայր լուսնոտը», «Կույր Ղուկասու», «Կույր Հովհաննու», «Մեծատան կինը», «Ղուկասու առակի այրին», «Հովհաննես Մկրտիչ» և ուրիշներ, որոնք Պիծակի վրձինի և ոճի մասին ցայտուն գաղափար են տալիս։

Ռուբինյան մեծավաստակ նկարչի մանրանկարներն այսօր թանկագին ավանդ են և մեծ արժեք են ներկայացնում հայ ժողովրդի անցյալի մանրանկարչական արվեստը ուսումնասիրելու տեսակետից, միաժամանակ նկարչական մի դպրոց են հանդիսանում նրանք թե՛ երիտասարդ նկարիչների և թե՛ արվեստագետների համար։



Հակոբ Բ. կաթողիկոս
Մանրանկար Սարգիս Պիծակի
(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 9637)

## 8. ՃՇՏՈՒՄՆԵՐ

Այստեղ անվերապահորեն ընդգծենք, որ տաղանդավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակի արվեստի էության մասին, «Պատկերներ Հայաստանի արվեստի պատմությունից» խորագրով գրքում, Ռուբեն Դրամբյանի հաղորդած տեղեկություններն ու լուսաբանությունները ո՛չ միայն միակողմանի են, այլև սխալ։

«Պիծակը բավական միակերպ նկարիչ է, որը միևնույն ձևերն է օգտագործում,— գրում է Դրամբյանը։

Այս կտրուկ, եթե չասենք անարդար, տողերը պիտի բացատրել թերևս նրանով, որ Դրամբյանն իր կարծիքն ու տպավորությունները հիմնավորել է Սարգիս Պիծակի չորս աշխատությունների վրա, ինչպես ինքն է իր հոդվածում ընդգծել. «Մենք կարող ենք լրիվ պատկեր կազմել այդ բավականին միակերպ նկարչի մասին իր չորս աշխատանքներից»։ Շատ պարզ է, որ չորս աշխատանքներն երբեք չեն կարող որևէ նկարչի արվեստի մասին լրիվ և ցայտուն գաղափար տալ։ Այդ տեսակետից Դրամբյանի մոտեցումը ո՛չ միայն սխալ է, այլև լուրջ և բարեխիղճ արվեստագետի վերլուծություն չէ։

Բայց խորանալով Ռուբեն Դրամբյանի գրչով «միակերպ նկարիչ» համարված և միևնույն ձևերն օգտագործող Սարգիս Պիծակի մանրանկարների մեջ, դիտելով նրա

վրձինած կիլիկյան կերպարները՝ Լևոն Դ. արքայի, ժամանակի Հակոբ կաթողիկոսի, Մարիուն թագուհու, Ներսես Շնորհալու, ռուբինյան հովիվների, զինվորականների, անապատականների դիմանկարները, բնորոշ գաղափար ենք կազմում Դրամբյանի գրչով ընդգծված այն սխալ եզրակացության մասին, որ իբր թե Սարգիս Պիծակի վրձինած «դեմքերը կաղապարված են կաղապարային ձևով, մեկը նման է մյուսին»։ Ընդհակառակը, նշված կիլիկյան կերպարներն ունեն տարբեր դեմքեր, տարբեր արտահայտություններ և պատկերում են հոգեկան տարբեր դրություններ։

Նույն երևույթը տեսնում ենք «Լևոն Դ.ի դատաստանը» խորագրով մանրանկարում։ Այնտեղ վրձինված հինգ կերպարներից չորս դեմքերը բոլորովին իրար նման չեն, յուրաքանչյուր դիմապատկեր ունի իր ուրույն արտահայտությունը։ Լևոն Դ. արքայի դեմքի վրա իշխում է հրամայողի և իր աված արդար վճռի գործադրության սպասողի արտահայտությունը։ Կանգնած դատավորի դեմքի վրա կարդում ենք արդարությունը պատկերացնող կերպարի դիմանկարը։ Նրա ոտքերի տակ ընկճված կնոջ դեմքի վրա դրոշմված է աղաչողի և աղերսողի արտահայտությունը։ Մյուս երկու նստած դատավորների դեմքերը պատկերում են նրանց զննող, պրպտող և լարված հոգեկան դրությունը։ Եվ այդ բոլորի վրա որքա՜ն գեղեցիկ են իշխող խորհրդանշական երեք մատները։

Նշենք մի այլ էական երևույթ։ Ռճային նկարների մեջ պիտի որոնել գեղեցիկ դասավորում և ոճի պահպանում։ Այդպես է «Դատաստանը»։ Այդ մանրանկարով, որ ունի շատ գեղեցիկ դասավորություն, նկարիչը մի սիրուն համապատկեր է տվել։ Եվ դիտում ենք վրձինված տարբեր դիմանկարները և գաղափար կազմում Ռուբեն Դրամբյանի ստորագրած տողերի անճշտության մասին։ Այդ դիմապատկերների տարբեր արտահայտություններն էլ ընդգծում են, որ Պիծակը տաղանդավոր դիմանկարիչ է։ Այդպես են նկարչի գծած մյուս դիմանկարներից շատերը, որոնք ոչ միայն արտահայտիչ են, յատկանշական, լրիվ վրձինված, այլև նրանց մեջ երևում է վարպետությունը։

Եթե Սարգիս Պիծակի երկու ինքնանկարների մեջ նմանություններ կան, դա պիտի համարել բնական երևույթ, որովհետև նման նկարները միշտ էլ կարող են որոշ նմանություններ ունենալ։ Չնայած, որ Պիծակի ինքնանկարներում, կատարման տեսակետից, մեծ տարբերություն կա և դասավորումը հիացմունք է պատճառում։

Սարգիս Պիծակի արվեստը վերլուծելիս Դրամբյանն ընդգծել է նաև այսպիսի տողեր. «Աչքի խփում են մարդակազմական սխալները, միշտ չափազանցրած կերպով մեծ են գլուխները»։

Չպետք է մոռանալ, որ մարդակազմությունը մասնագիտական բնույթ ունի, իսկ ոճային աշխատանքների մեջ նեղ, մասնագիտական մոտեցում որոնելը սխալ է։ Դրամբյանն արվեստի վերլուծությամբ զբաղվելիս մոռացել է, որ մանրանկարչության մեջ էականը, կարևորը նկարի ամբողջությունն (կոմպոզիցիան) է և ո՛չ թե կազմախոսությունը։ Սարգիս Պիծակի մանրանկարչական արվեստի մեջ խորացող արվեստագետը հենց առաջին հայացքից կգում է, որ նրա ստեղծագործությունները զարդարված են գեղեցիկ ոճավորությամբ, որոնք իրենց յուրահատուկ գծագրությամբ գրավիչ են։ Եվ եթե նրա որոշ նկարներում կան մարդակազմական սխալներ, այդ երևույթը Դրամբյանին իրավունք չի տալիս թերագնահատելու Պիծակի արվեստի գեղեցկությունները։ Վերջապես, մի քանի համեմատաբար թույլ գործերով չի կարելի բնորոշել որևէ նկարչի՝ արվեստը։ Այսօր ո՛չ որ չի կարող ժխտել, որ տաղանդավոր գրաֆիկ նկարիչ Յակոբ Կոջոյանն անատոմիան շատ լավ գիտե, բայց փաստ է և այն, որ նրա որոշ նկարները մարդակազմության տեսակետից թերի են։ Դա, իհարկե, չի նշանակում, որ նա մարդակազմության մեջ թույլ է։ Նկատենք և այն, որ Սարգիս Պիծակի հենց թույլ նկատված մանրանկարներում կա մի էական երևույթ, որ Դրամբյանն անուշադրության է մատնել։ Պիծակն իր նկարները վրձինելիս արվեստի խնդրին բնապաշտական (նատուրալիստական) գծով չի մոտեցել, չի ձգտել կյանքի փաստերի մանրակրկիտ ուսումնասիրության վրա հիմնըված պատկերացնել իրականությունը, հենց այնպես, ինչպես կա։ Սա մի կարևոր պարագա է, որը պետք է նկատի ունենան արվեստագետ քննադատները։

Սրբագրենք Ռուբեն Դրամբյանի մի այլ անարդար հայտարարությունը, թե Սարգիս Պիծակի արվեստում «միշտ չափազանցրած կերպով մեծ են գլուխները»։ Այս տողերի անճշտությունը հաստատում են Պիծակի վրձինած բազմաթիվ մանրանկարների կերպարները։ Ահա՛ դրանցից Լևոն Դ. արքայի, դատավորների, Հակոբ Բ. կաթողիկոսի, Ներսես Շնորհալու, Մարիուն թագուհու, Ղուկասու կույրի, Գեորգ զորավարի, Լուսնոտի հոր, Փարիսեցիների և այլ բազմաթիվ կերպարների գլուխները, որոնք ո՛չ միայն «չափազանցրած կերպով մեծ

չեն, այլև իրենց ներդաշնակ գծագրությամբ տպավորիչ են և հարազատ։

Այնուհետև Դրամբյանն ավելի խորացնելով իր սխալները, Սարգիս Պիծակի մանրանկարների մասին հաղորդել է միանգամայն միակողմանի կարծիք՝ «Սարգիս Պիծակի մանրանկարները (մինիատյուրները) համեմատաբար ավելի կոպիտ են, չոր և անկյանքս։ Այս տողերն արդյունք են շտապ եզրակացության։ Այդ հանգամանքը պիտի զգա հենց Դրամբյանը, եթե Սարգիս Պիծակի ո՛չ թե չորս, այլ նրա մանրանկարների մեծ մասը լուրջ և բազմակողմանի կերպով բարեհաճի ուսումնասիրել։ Նման աշխատանքի արդյունք են տաղանդավոր արվեստագետ Գարեգին Կաթողիկոսի, Հ. Ս. Էփրիկյանի, Գ. Լևոնյանի կարծիքները, որոնք Սարգիս Պիծակին գնահատել են որպես «նշանավոր ու բազմաշխատ նկարիչ», «ժամանակի հայ նկարչաց, ոսկողաց և ծաղկողաց մեջ առաջին», «խոշորագույն մանրանկարիչ արվեստագետ», «ժողովրդական նկարագրով նկարչության արտահայտիչ»։

Լավագույն արվեստագետների գնահատական բնորոշումները ո՛չ թե պատահականության, այլ խոր ու մանրակրկիտ վերլուծության արդյունք են։ Եթե Դրամբյանն էլ մի օր բազմակողմանի և խոր կերպով ուսումնասիրի Սարգիս Պիծակի մանրանկարների գեթ մեծագույն մասը, անկասկած, պիտի համոզվի, որ նկարչի արվեստում իշխում է ո՛չ միայն գեղեցիկ դասավորություն, ներդաշնակություն (հարմոնիա), խորք, այլև գեղարվեստական ճաշակ։ Պիտի ըմբռնի, որ Սարգիս Պիծակն իր ժամանակի համապատասխան համարձակ վրձին ունի։ Պիտի համոզվի, որ նրա մանրանկարները տպավորիչ են և արտահայտիչ, երևույթներ, որոնք նկարչի նկարներին իմաստ են տալիս, իսկ որպես մանրանկարիչ, գծանկարիչ, զարդանկարիչ և ոսկող նա իր դարաշրջանի խոշոր արվեստագետն է։



Հուդիթ
Մանրանկար Սարգիս Պիծակի
(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 2827)

## 9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իր ստեղծագործական արվեստով Սարգիս Պիծակը հանդիսանում է Ռուբինյան դարաշրջանի ամենից իրապաշտ և ամենահայտնի մանրանկարիչներից մեկը, որի լավագույն գնահատական վկայականը տվել է հմուտ բանասեր Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը հետևյալ տողերով.

«Ինչպես Թորոս Ռոսլինը Հռոմկլայի մեծ արվեստագետն է և փառքը դպրոցի, նույնը կարող ենք ասել Սարգիս Պիծակի համար Դրազարկի և Սսի արքայական մեծ դպրոցի նկատմամբ» («Նոր Գիր», 1944 թ., էջ 19)։

Արդարև, Պիծակը ներկայանում է մեզ նկարչական հարուստ տվյալներով, նրբին արվեստով և ուժեղ անհատականությամբ օժտված մի նկարիչ, որի մանրանկարչական արվեստի հանդեպ տածած անսահման սերը, նկարչական հմտությունն ու խորությունը և վարպետ ու ձևակերպված վրձինը նրա համայիչ անունն արվեստի աշխարհում շուտով հռչակել են։

14-րդ դարաշրջանի այս պայծառ արվեստագետն իր ինքնատիպ վրձինի բազմերանգ ստեղծագործություններով ո՛չ միայն զարկ է տվել հայ միջնադարյան նկարչությանը, այլև փայլել է որպես մանրանկարիչ, գեղագիր, դիմանկարիչ, զարդանկարիչ և ոսկող։ Կրոնական մոտիվների հետ վրձինել է նա կենդանի, խոսուն տիպարներ, գծելով գլխավորապես իր ապրած հարազատ միջավայրի ցայտուն դեմքերը։ Հատկանշա-

կան մի գիծ ես— դա նրա որոշ նկարների հոգեբանական վերլուծությունն է։ Նա կարողացել է իր պատկերած կերպարների հոգեբանությունը, նրանց խոհերը և էական հատկանիշները հմուտ գծագրությամբ արտահայտել։ Ահա թե ինչո՛ւ նրա վրձինած դեմքերը պայծառ են, կենդանի և խոսուն։ Այդ բոլորի վրա ավելացրեք նրա ինքնուրույն արվեստը, որ հատկանշական է իր բնորոշ գծերով, ձևերով և երանգներով։ Այդպես են նրա թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական մանրանկարները․ որոնք հարուստ են գեղարվեստական գծագրություններով։ Նշենք նաև նրա բոլորովին ուրույն ոճը, որ պարզ է, որոշ, միաժամանակ գրավիչ և խորը։ Առհասարակ, նրա ոճավորումները գեղեցիկ են, յստակ, շրջագծերն ուժեղ և զգայուն։ Ոճի այդ առանձնահատուկ բարեմասնության հետ ընդգծենք նրա նկարների բանաստեղծական տրամադրությունը։ Նա կարողացել է բովանդակության համապատասխան քնարական երանգ տալ իր մանրանկարներին։ Էլ չենք նշում նրա արվեստում իշխող մաքրությունը․ ազնվությունը և պայծառությունը, երևույթներ․ որոնք նրա նկարների կառուցման հետ գեղեցիկ կերպով ներդաշնակում են։ Ահա թե ինչո՛ւ Սարգիս Պիծակի մեկը մյուսից գրավիչ․ խոսուն և գունագեղ նկարները Ռուբինյան դարաշրջանի հայ մանրանկարչության զարգացման հիմնական և ուրույն էջերը լուսաբանող թանկագին հիշատակներ են․ որոնք այսօր պայծառ ու ցայտուն գաղափար են տալիս Կիլիկյան մանրանկարչության արվեստի էության մասին, միաժամանակ ծանոթացնում են Պիծակի ինքնատիպ նկարչության, նրա գեղեցիկ ճաշակի, ոճի․ ուղղության և ավեստի հիմնական գծերի հետ, մի նկարիչ, որի վրձինով կարող է պարծենալ ամեն մի կուլտուրական ժողովուրդ։



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սովետական Հայաստանը շատ հարուստ է պատմական և ճարտարապետական հուշարձաններով, որոնք ցրված են երկրի բոլոր շրջաններում, դաշտերում և լեռներում, բնակավայրերին կից, կամ դրանցից երբեմն տասնյակ կիլոմետրերով հեռու։ Հաճախ դրանք խմբված են լինում իրար մոտ, երբեմն էլ ցրված, առանձին-առանձին։ Այդ հուշարձանների որոշ մասը մեր երկրում ապրած և հետագայում հայ ժողովրդի մեջ ձուլված նախաբնիկների կուլտուրայի մնացորդներն են, սկսած քարե դարից, իսկ մեծագույն մասը հայ ժողովրդի պատմական անցյալին է վերաբերում, սկսած նրա կազմավորման շրջանից։ Համեմատաբար ավելի լավ պահպանված հուշարձանների մեծագույն մասը միջնադարին է պատկանում, սկսած վեցերորդից մինչև տասնչորսերորդ դարը ներառյալ։

Բոլոր հուշարձաններն էլ, լինեն դրանք անվթար մնացած, կիսավեր վիճակում, կամ իբրև ավերակների կույտեր, հողաթմբեր կամ բեկորներ, բոլորն էլ մեծ արժեք և կարևորություն ունեն մեր երկրի անցյալի պատմության, կուլտուրայի, արվեստի և արհեստների, հարևան ու հեռավոր ժողովուրդների հետ ունեցած կապի և փոխազդեցության հարցերը լուսաբանելու համար։

Հատկապես ճարտարապետության, շինարվեստի և դրանց հետ կապված արհեստների նկատմամբ նոր և առատ նյութ է պահված մեր ճարտարապետական հուշարձաններում։ Այդ հոյակապ և սքանչելի հուշարձաններն ուսումնասիրելով հայ ճարտարապետներն օգտագործում են հին վարպետների թողած ժառանգությունը, Հայաստանի քաղաքներում ու գյուղերում մեծ թափով և մեր պատմության մեջ չտեսնված ծավալով կատարվող շինարարության գործում։ Բավական է լոկ մի թռուցիկ պտույտ կատարել Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևանում՝ կամ պատահական որևէ գյուղում և դիտողի համար պարզ կլինի մեր ասածը։

Անցյալից մեզ իբրև ժառանգություն մնացած այդ արժեքները պահպանելու նպատակով, Սովետական կառավարությունը կազմակերպել և պահում է Ճարտարապետական (նախկինում՝ Պատմական) հուշարձանների պահպանության կոմիտեն, սկսած 1923 թվականից։ Այդ Կոմիտեի կազմի մեջ են եղել, և այժմ էլ կան, անվանի հնագետ գիտնականներ, արվեստագետներ և ճարտարապետներ, իբրև հեղինակավոր ղեկավարներ այդ հաստատության աշխատանքներին։

Պատմական և ճարտարապետական հուշարձանների պահպանությունը ապահովելու նպատակով, Սովետական կառավարությունը հատուկ որոշումներ է կայացրել և ամեն տարի խոշոր գումարներ է տրամադրում վնասված հուշարձանների վերանորոգության համար։



Ամաղուի Նորավանքի «Բուրթելյաշեն» եկեղեցին (1339 թ.)
վերանորոգումից առաջ

Մենք այստեղ նպատակ չունենք հիշյալ Կոմիտեի գործունեության պատմությունը շարադրելու, այլ ցանկանում ենք կարճառոտ պատմել այդ համեստ՝ թերևս շատերին անհայտ՝ հաստատության 30 տարիների ընթացքում կատարած գործի բնույթի, ծավալի և հատկապես վերանորոգչական աշխատանքի մասին։

Ամբողջ երկրում, հաճախ դժվարամատչելի տեղերում ցրված այդ բազմահազար և բազմատեսակ հուշարձանների պահպանության գործը կազմակերպելու համար, նախ և առաջ անհրաժեշտ էր իմանալ, թե որտեղ ի՞նչ կա և ի՞նչ դրության մեջ, ուրիշ խոսքով՝ պետք էր հաշվառման ենթարկել և նկարագրել գոյություն ունեցող և տեսանելի բոլոր հուշարձանները՝ անկախ դրանց տեսակից, բնույթից և պահված վիճակից։ Չպետք է մոռանալ, որ մինչև այդ գոյու-

թյուն չունեն մեր երկրում եղած հուշարձանների քիչ թե շատ լրիվ հաշվառում։ Ճիշտ է, որ զանազան ժամանակներում, հայ և օտարազգի մի շարք բանասերներ, գիտնականներ և ճանապարհորդներ, երբեմն նյութական սուղ պայմաններում ու մեծ եռանդություն կրելով, անձամբ կամ ուրիշների միջոցով, այցելել, նկարագրել և ուսումնասիրել են մեր երկրի այս կամ այն մասի հուշարձանները, սակայն դրանց՝ հայագիտության համար մեծարժեք՝ աշխատությունները ըստ իրենց բնույթի չէին կարող վերը հիշված բացը լրացնել, այլ միայն իբրև օժանդակ աղբյուր կարող էին ծառայել տվյալ պարզ, բայց խիստ կարևոր նպատակի համար։

Պատմական և ճարտարապետական հուշարձանների լրիվ հաշվառումը կատարելու նպատակով, Կոմիտեն, պարբերաբար, ամեն տարի, արշավախմբեր է կազմակերպում իր



Ամաղուի Նորավանքի «Բուրթելաշեն» եկեղեցին
վերանորոգումից հետո

որակյալ աշխատակիցներից, որոնք քայլ առ քայլ շրջում են մեր երկրի բոլոր անկյունները և մի առ մի գրանցում, նկարագրում, լուսանկարում և երբեմն էլ չափագրում են մեծ ու փոքր, նշանավոր և աննշան բոլոր հուշարձանները, անկախ դրանց տի-

սակից և դրությունից։ Այս գիտարշավների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ մեծ ու փոքր այնպիսի հուշարձաններ, որոնց մասին գրականության մեջ որևէ հիշատակություն չկա, կամ եթե կա՝ սակայն տեղը խատանքների հետևանքով[1]։ Վերջին տարիների ընթացքում Կոմիտեն հատուկ ուշադրություն է դարձնում հուշարձանների չափագրության, նկարահանման և լուսանկարչական աշխատանքներին, որոնք տևական ջանք և մեծ ծախք են պահանջում։



Կեչառիսի վանքի կաթողիկե եկեղեցին վերանորոգումից առաջ

մինչ այդ հայտնի չէր։ Այսպիսով, տարիներ տևող մանրակրկիտ աշխատանքից հետո, կազմվում է Սովետական Հայաստանում գոյություն ունեցող հուշարձանների համարյա լրիվ ցուցակը, որը շարունակվում է լրացվել շարունակվող գիտա-հետազոտական աշ-

1. Գիտա-հետազոտական աշխատանքների թվում հատկապես պետք է նշել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, Պետական թանգարանի և Կոմիտեի կողմից կատարվող պեղումները, որոնք տարեցտարի, նորանոր և մեծարժեք հայտնաբերություններով, հարստացնում են հայագիտության գանձարանը։

Իր կազմավորման սկզբնական տարիներից սկսած, հաշվառման աշխատանքներին զուգընթաց, Կոմիտեն կազմակերպում է հուշարձանների պահպանության գործը։ Այդ նպատակով, իր տեսուչների և գիտաշխատողների միջոցով, նա ամեն տարի, պարբերաբար, տեղերում ստուգում է հուշարձանների դրությունը, ժողովրդի մեջ դրանց պահպանության նպատակի և անհրաժեշտության մասին բացատրական աշխատանք է տանում և հարկ եղած ցուցմունքը տալիս։ Բացի այդ, հուշարձաններով հարուստ շըրջաններում, մշտական հսկողությունը ուժեղացնելու նպատակով, նշանակում է շրջանային տեսուչներ, իսկ մի քանի առանձնակի կարևորագույն հուշարձանների խմբերի համար՝ նաև պահակ-հսկիչներ։ Սակայն պարզ է, որ մի քանի տասնյակ տեսուչների և հըսկիչների միջոցով հնարավոր չէր լինի ապահովել հազարավոր հուշարձանների պահպանությունը, ուստի և Սովետական կառավարությունն ավելի լայն ծավալի միջոցառումների է դիմում։ Հատուկ որոշումներով ու հրամաններով հուշարձանների պահպանու-



Կեչառիսի վանքի կաթողիկե եկեղեցին վերանորոգումից հետո

թյան պարտականությունը տեղերում դրվում է շրջանային գործադիր կոմիտեների և գյուղական Սովետների նախագահների վրա։ Այդպիսով, տեղական իշխանություններն ևս ներգրավվում են հնությունների պահպանության այդ կարևոր գործի մեջ։

Հուշարձանների պահպանության գործը դրանով չի սահմանափակվում։ Դարերի ընթացքում, հսկողության և խնամքի բացակայության հետևանքով, հուշարձանները լցված էին հողով, ծառ ու մացառով պատված, որով արագացվում էր դրանց քայքայ-

հայտնաբերվում էին մինչ այդ անհայտ մանրամասնություններ— արժեքավոր արձանագրություններ, գեղեցիկ և նոր բնույթի քանդակազարդեր, առաստաղի ծաղկենկար սալեր, պատկերաքանդակներ և այլն, որոնցով է՛լ ավելի բարձրանում է հուշարձանի արժեքը և լրացվում նրա նախկին պատկերը։ Քիմիական միջոցներով մաքրվում են և պատերի վրա վերջին դարերում կատարված մակագրությունները։

Աստիճանաբար հուշարձանների պատերին փակցվում են հուշարձանի անունը, շինու-



Սանահինի աղբյուրի շենքը (12—13-րդ դար) վերանորոգումից առաջ

ման ընթացքը, որովհետև բույսերի արմատները մտնելով քարերի մեջ, դրանց խախտում են իրենց տեղից, իսկ կուտակված հողը, խոնավությամբ, կազմալուծում է թե՛ քարերը և թե՛ դրանց միացնող զանգվածը։ Եվ ահա, Կոմիտեն, խոշոր միջոցներ ներդնելով, կազմակերպում է հուշարձանների մաքրման աշխատանքները։ Պարբերաբար մաքրվում են հուշարձանների վրա բուսած ծառերն ու մացառները, ներսում և դրսում կուտակված հողը։ Այդ աշխատանքների ընթացքում, երբեմն հողի ու շինաղբի տակից

թյան ժամանակը և կառուցողի անունը կրող ցուցատախտակներ և պահպանական հրահանգներ։

Կոմիտեի աշխատանքների մեջ ամենադժվարը և բազմածախս մասը՝ ճարտարապետական հուշարձանների վերանորոգությունն (ռեստավրացիան) է։ Վերը հիշեցինք, որ մեր հուշարձանների մեծագույն մասը դարերի ընթացքում, կլիմայական պատճառներից (քամի, տեղումներ, արև, խոնավություն) և հատկապես հաճախակի կրկնվող մեծ ու փոքր երկրաշարժերի հետևանքով քայքայ-

*վել, փլել, կամ մեծ ու փոքր վտանգավոր ճեղքվածքներ են տվել։ Պատմական և ճարտարապետական մեծագույն արժեք ու նշանակություն ունեցող մի շարք հուշարձաններ այնպիսի դրության մեջ են, որ եթե անմիջական միջոցներ ձեռք չառնվեն, մի թեթև ցնցումից կարող են փլել և ոչնչանալ։ Կան և այնպիսիները, որոնք մասնակի վթարումների հետևանքով, աստիճանաբար քայքայման ընթացքի մեջ են և, դնալով, տարեցտարի դրանց դրությունը վտանգվում է, թե՛ մեկ և թե՛ մյուս տիպի վտանգները կանխե-* *և դրանց կանգուն մնացած մասերը, հետագա քայքայումից փրկելու համար ևս կարիք ունեն ամրացնելու։ Այդ հուշարձանների թվին են պատկանում՝ օրինակ՝ Էջմիածնի շրջանում— Հոչակավոր Զվարթնոցի երբեմնի եռահարկ տաճարը, Թարգմանչաց վանքը (Այգեշատ գյուղի մոտ) և Կոտայքի շրջանի Արամուս գյուղի եկեղեցին։*

*Հիշյալ երեք տեսակի վթարված հուշարձաններն էլ ոչնչացումից կամ փլելու վտանգից ազատելու նպատակով, Կոմիտեն կազմակերպում է մասնագետ ճարտարապետնե-*



Սանահինի աղբյուրի շենքը վերանորոգումից հետո

*լու համար, այդպիսի հուշարձանները հիմնավոր կամ մասնակի վերանորոգության կարիք ունեն։ Ըստ դրության, երրորդ տիպի հուշարձաններ ևս կան, որոնք արդեն բոլորովին քանդված են, բայց դրանց որոշ մասերը դեռևս մնացել են կանգուն, կամ խարխուլ վիճակում։ Այդ տեսակի (ավերակ) հուշարձաններից մի քանիսը հոյակապ և հրաշալի կառուցվածքներ են եղել և նույնիսկ իրենց ավերակ վիճակում հիանալի են և մեծ նշանակություն ունեն ճարտարապետության և շինարվեստի պատմության համար, ուստի* *րից և շինարար ինժեներներից կազմված մի հատուկ վերանորոգչական (ռեստավրացիայի) բաժանմունք։*

*Վերանորոգչական աշխատանքը, ըստ իր բնույթի, շատ ավելի բարդ է և դժվար, քան թե սովորական, նոր շինարարության գործը, որովհետև այստեղ պահանջվում է ո՛չ միայն շինարարական գործի հմտություն, այլև՝ որ կարևորն է՝ դարեր առաջ կառուցված շենքի ոճի և առանձնահատկությունների ըմբռնումն, հին վարպետների ոգու և ճաշակի յուրացումն և դրա պահպանումը վե-*

*բանորոգության ժամանակ։ Պահանջվում է, որ վերանորոգված հուշարձանը չկորցնի իր ոճը, արտաքին տեսքի ամբողջականությունը և միաժամանակ ապահովվի նրա տևական գոյությունը[2]։ Դա միաժամանակ և վտանգավոր գործ է, թե՛ ենթակա օբյեկտի և թե՛ վե-*



Կեչառիսի վանքի Ս. Նշան եկեղեցին արևմուտքից վերանորոգումից առաջ

*րանորոգությամբ զբաղվող աշխատավորների համար, որովհետև բավական է մի անզգույշ քայլ կամ սխալ գործողություն, որ վտանգվի հուշարձանը և դրա վրա աշխատողի կյանքը։ Այս նպատակով, տարիներ տևող աշխատանքի ընթացքում, Կոմիտեն աշխատել է պատրաստել ինժեներ-ճարտարապետների, կառուցող վարպետների ու բանվորների որոշ կադրեր, ձգտելով պահել լավագույններին և փորձվածներին։*

*Վերանորոգչական աշխատանքի ընթացքը ինքնին մի բարդ և յուրահատուկ հմտություն պահանջող գործ է։ Վերանորոգչական բաժնի մասնագետները նախ տեղում ուսումնասիրում են վերանորոգման ենթակա հուշարձանը, հատկապես լուսանկարում են վթարված մասերը, մանրամասն չափագրում են դրանք, կազմում են տարվելիք աշխատանքների նախագիծը և նախահաշիվը ու ներկայացնում Կոմիտեին։ Այնուհետև, ներկայացված նյութերը, փորձված մասնագետների քննությանը ենթարկվելուց և անհրաժեշտ ուղղումներից ու փոփոխություններից հետո, դրվում են Կոմիտեի այդ առթիվ գումարված նիստին ի քննություն և ի հաստատություն։ Այդ աշխատանքների ընթացքում մանրամասնորեն քննության են առնվում նաև զուտ տեխնիկական բնույթ կրող մի շարք հարցեր, որոնց թվում մեծ տեղ են բռնում պահանջվող շինաքարի և այլ շինանյութերի գործածության, դրանց որտեղից բերելու և այլ խնդիրները։*

*Վերանորոգման աշխատանքի անցնելուց առաջ, այդ գործը կազմակերպող և ղեկավարող ճարտարապետը մեծ ջանք է թափում շինարարության վայրում հայտնաբերելու բոլոր թափված և հաճախ ժամանակի ընթացքում, այլ նպատակների համար օգտագործված քարերը։ Այդ նպատակով երբեմն կարիք է լինում պեղումներ կատարել և հետագայում շինված կառուցվածքների (օրինակ՝ պարիսպների) միջից հանել հուշարձանի քարերը և գտնել դրանց դրվելիք տեղը վերանորոգվող շենքի մեջ (օրինակ՝ Ամաղուի Նորավանքում)։ Պակասող քարերը պատրաստելու համար կարիք է լինում հուշարձանի շինաքարի հանքավայրը գտնել և կամ որևէ այլ, երբեմն հեռու տեղից, հար-*

---

*2. Այստեղ հատկապես պետք է նշել, որ վերանորոգության հիմնական նպատակը հուշարձանները մեզ հասած դրությամբ պահպանելն է և ո՛չ թե նրանց ամբողջական վերականգնումը։*

մար քար ճարելը։ Հաճախ մեծ դժվարությունների հետ է կապված անհրաժեշտ քանակի ցեմենտ, կիր, շինափայտ և նույնիսկ ավազ փոխադրելու գործը։ Սովորաբար այդ շինանյութերից առաջին երեքը, երբեմն և վերջինը, շինարարության վայրն են փոխադրվում Երևանից, ավտոմեքենաներով, տասնյակ և երբեմն 150—250 կիլոմետր հեռավորությամբ (օրինակ— Ամաղուի Նորավանքի, Հաղբատի և Սանահինի հուշարձանների վերանորոգության համար)։

Հուշարձանի որևէ մասը վերանորոգելու աշխատանքների առաջին շրջանում տաշում և պատրաստում են պակասող քարերը, համարակալվում են պատերից հանվելիք քարերը, որոնք զգուշությամբ ցած իջեցնելուց հետո մաքրվում, հեռացվում է պատի քայքայված միջուկը (հին շաղախը) և ապա անցնում են քարերի տեղադրմանը, նոր և ամուր շաղախով։

Երբեմն վերանորոգության ենթակա է լինում ո՛չ թե որևէ հատված, այլ հուշարձանի ամբողջ մի հարկը։ Այդ տիպի վերին աստիճանի դժվարին և պատասխանատու աշխատանքի օրինակներ են Ամաղու գյուղի (Ազիզբեկովի շրջան) Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու և Աշտարակի շրջանի Դղեր գյուղում գտնվող Աստվածածնի անվան տաճարի գմբեթի վերանորոգությունները։

Դրանցից առաջինը, որը գտնվում է Ամաղու գյուղից 2—2,5 կիլոմետր հեռավորությամբ, գեղատեսիլ ձորի մեջ, նախկին Վայոց ձորի Նորավանքի ամենից երիտասարդ, 1339 թվականին Օրբելյան Բուրթել իշխանի շինած, նախկին եռահարկ հուշարձանն է։ Այդ կառուցվածքը ո՛չ միայն սակավաթիվ եռահարկ եկեղեցիներից ամենագեղեցիկն է ու հոյակապը, այլև հայկական ճարտարապետության լավագույն հուշարձաններից մեկը. դա իրոք շինարվեստի մի գլուխգործոց է։ Հնում այդ շենքը եղել է երեք հարկանի։ Ցածի թաղապատ հարկը ծառայել է իբրև դամբարան, որի վրա, երկրորդ հարկում, շինված է ներքուստ և արտաքուստ խաչաձև, փոքր չափերի, ճոխաքանդակ և սքանչելի ձևավորված եկեղեցին, որտեղ մտնելու համար պետք է բարձրանալ ցածի հարկի արևմտյան ճակատին, երկու կողմից պատի մեջ ամրացված քարե նեղ աստիճաններով։ Վերին՝ երրորդ՝ հարկում, ինչպես փորձելի է եզրակացնել մնացած բեկորներից, եղել է սյունազարդ գմբեթը, որից մնացել են ցած ընկած մի քանի ջարդված սյուներ։



Կեչառիսի վանքի Ս. Նշան եկեղեցին
վերանորոգումից հետո

Խիստ վնասված և քայքայված էր հուշարձանի երկրորդ հարկը՝ եկեղեցին՝ այն աստիճանի, որ դրա վերանորոգությունը, առանց պատերից մեկի (արևմտյան) ամբողջական և երկու պատերի (հյուսիսային և հարավային) միջնամասերի հանման, հնարա-

վոր չէր։ Ուստի և, վերանորոգության ժամանակ, հարկ եղավ մի առ մի հանել հիշյալ պատի և պատուհանների բոլոր քարերը, քանդել քայքայված միջուկի շաղախը և ապա նույն քարերը դնել իրենց տեղը, նոր շաղախով, միջընդմեջ տեղավորելով այս ու այն տեղերից հայտնաբերված և նոր տաշված պակասող քարերը։ Այսպիսով, երեք տարվա դժվարին աշխատանքից հետո վերականգնըվեց և կործանումից փրկվեց այդ բացառիկ գեղեցկությամբ ու հրաշալի ոճ ունեցող նրբակերտ հուշարձանը։



Դրղերի վանքը (1211—1232 թ. թ.) վերանորոգումից առաջ

Թերևս ավելի բարդ ու դժվարին աշխատանք էր պահանջում Աշտարակի շրջանի (հնում՝ Արագածոտնի) Դղեր գյուղի Աստվածածնի անվան եկեղեցու գմբեթի վերանորոգությունը[3]։ Այդ վերասլաց, բարձր գըմբեթ ունեցող, արտաքինով պարզ, բայց գեղեցիկ հուշարձանը կառուցել է Վաչե իշխանը (Քուրդ իշխանի հայրը և Զաքարե սպասալարի գործակալը) 1211—1220 թվականներին։ Երկրաշարժից մեծ ճեղքեր էին առաջացել գմբեթի թմբուկի և վեղարի մեջ, և օր-օրի սպասելի էր դրա կործանումը, որը և պատճառ կլիներ թե՛ ամբողջ եկեղեցու և թե՛ դրան կից կառուցված ժամատան քանդվելուն։ Անհրաժեշտ էր, Նորավանքի Բուրթելաշինի օրինակով, այստեղ ես պոկել գըմբեթի բոլոր քարերը, վերացնել միջուկի ամուր շաղախը և նորից վերաշարել ամբողջ գմբեթը, որը և երկարատև, բարդ, ծանր ու վտանգավոր աշխատանքից հետո ավարտվեց 1952 թվականին։

Վերանորոգչական աշխատանքների բնույթը լուսաբանելու նպատակով, բերենք մի երրորդ օրինակ։ Խոսքը կենտրոնից շատ ավելի հեռու գտնվող, այս անգամ քաղաքացիական տիպի մի հուշարձանի մասին է՝ Ալավերդու շրջանի Սանահին գյուղի աղբյուրի շենքի մասին։ Այս հուշարձանը գտնվում է հռչակավոր Սանահնի վանքի, նույնպես վերանորոգված, հուշարձաններից անջատ,

3. Վերանորոգված է Դըղերի հուշարձանների ամբողջ խումբը, սակայն այստեղ, իբրև դժվարին և բարդ աշխատանքի օրինակ, խոսվում է միայն գմբեթի վերանորոգության մասին։

գյուղի արևմտյան ծայրին։ Այս աղբյուրի շենքը կառուցել է Զաքարե սպասալարը (12—13 դ. դ.) և հետագայում վերանորոգվել է ճարտարապետ Մխիթարի ձեռքով։ Չափերն են— երկարությունը 13,25, իսկ լայնքը 5,7 մետր։ Շինված լինելով գյուղից հարավ ձգվող լեռան փեշերին, հուշարձանի ճակատն ուղղված է դեպի հյուսիս։ Այդ ճակատը երկու կամարակապ բացվածք ունի։ Կամարները, իրար միացման տեղում, նստած են ճակատի կենտրոնում տեղադրված միակ սյան վրա։ Քայքայված էին տանիքը և պատերը։ Դրանցից տանիքը կորցրել էր իր արտաքին ձևը և քիվերի բոլոր քարերը։ Շենքը ո՛չ մեծ է և ո՛չ էլ բարձր, այնպես որ այստեղ վերանորոգման աշխատանքը տեխնիկական որևէ դժվարություն չուներ։ Գլխավոր դժվարությունը տանիքի սագերի (երկթեքի) միացման անկյունը որոշելու և քիվերի ձևավորման մեջ էր, որովհետև այդ քայքայված հուշարձանի վրա որևէ տվյալ չէր մնացել, այդ հարցը լուծելու համար։ Այստեղ վերանորոգող ճարտարապետն ստիպված է լինում ուսումնասիրել Սանահնի վանքի, աղբյուրի շենքին ժամանակակից, հուշարձանները և տվյալ հարցերի լուծումը դրանց մեջ գտնել։

Վերանորոգության աշխատանքներից բացի, այստեղ մի քանի միջոցառումներ են ձեռնարկվում, հուշարձանն ապագայում քայքայումից և վտանգվելուց զերծ պահելու համար։ Հուշարձանի թիկունքում սարալանջի կտրվածքն ամրացվում է ցեմենտի շաղախով շինված քարե պատով. շենքի ներսում, ճատակի սալերին տրվում է որոշ թեքություն, թափված ջրերին դեպի դուրս ազատ ընթացք տալու համար. նույն նպատակով մաքրվում է շենքի առջևը գոյացած հողաթումբը և այլն։

Մենք այստեղ բերինք միայն երեք օրինակ հուշարձանների վերանորոգության բարդ և պատասխանատու աշխատանքների բնույթի մասին գաղափար կազմելու համար։ Այժմ թվենք վերանորոգության ենթարկված հուշարձաններն ըստ շրջանների և գյուղերի, նշելով դրանց շինության թվականը կամ դարաշրջանը։



Դըղերի վանքը վերանորոգումից հետո

## ՑՈՒՑԱԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

| №№ ը/կ | Շրջան | Գյուղ. քաղաք | Խմբական անունը | Հուշարձանի անունը | Շինության ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ազիզբեկովի | Ամաղու | Նորավանք | Ս. Աստվածածին—Բուրթելաշեն | 1339 թ. |
| 2 | Ալավերդու | Ախթալա | Վանք | — | 13-րդ դ. |
| 3 | » | Հաղպատ | Հաղպատի վանք | Աղբյուր | 1258 թ. |
| 4 | » | » | » » | Ս. Նշան եկեղեցի | 10-րդ դ. |
| 5 | » | » | » » | Ժամատուն | 1161 և 1201 թ.թ. |
| 6 | » | » | » » | Համազասպ | 1257 թ. |
| 7 | » | » | » » | Ս. Գրիգոր եկեղեցի | 1025 թ. |
| 8 | » | » | » » | Ս. Աստվածածին եկեղեցի | 12-րդ դ. |
| 9 | » | » | » » | Գրատուն | 13-րդ դ. |
| 10 | » | » | » » | Սեղանատուն | 14-րդ դ. |
| 11 | » | » | » » | Մահարձաններ | 12-րդ դ. |
| 12 | » | Ուզունլար | Օձուն | Տաճար (եկեղեցի) | 5—6-րդ դ. |
| 13 | » | » | » | Կոթող-մահարձան | 7-րդ դ. |
| 14 | » | Սանահին | — | Կամուրջ | 12-րդ դ. |
| 15 | » | » | — | Աղբյուր | 12—13-րդ դ. |
| 16 | » | » | Սանահինի վանք | Ս. Գրիգոր եկեղեցի | 8—9-րդ դ. |
| 17 | » | » | » » | Ս. Ամենափրկիչ եկեղեցի | 10-րդ դ. |
| 18 | » | » | » » | Ս. Աստվածածին եկեղեցի | 10-րդ դ. |
| 19 | » | » | » » | Ժամատուն | 1211 թ. |
| 20 | » | » | » » | Գավիթ | 1181 թ. |
| 21 | » | » | » » | Մագիստրոսի ճեմարան | 11-րդ դ. |
| 22 | Ախուրյանի | Գիրաքյար | — | Բազիլիկ եկեղեցի | 4—5-րդ դ. |
| 23 | Ախտայի | Ծաղկաձոր | Կեչառիս վանք | Ս. Գրիգոր եկեղեցի | 1003—1033 թ.թ. |
| 24 | » | » | » » | Ս. Նշան եկեղեցի | 12-րդ դ. |
| 25 | » | » | » » | Կաթողիկե եկեղեցի | 13-րդ դ. |
| 26 | » | » | » » | Ս. Հարություն եկեղեցի | 1220 թ. |
| 27 | » | » | » » | Ժամատուն | 12—13-րդ դ. |
| 28 | » | Բջնի | — | Ս. Աստվածածին եկեղեցի | 1031 Թ. |
| 29 | Աշտարակի | Աշտարակ | — | Կարմրավոր եկեղեցի | 7-րդ դ. |
| 30 | » | » | — | Մարինե եկեղեցի | 13-րդ դ. |
| 31 | » | Օշական | — | Մանկանոց եկեղեցի | 7-րդ դ. |
| 32 | » | Օհանավանք | Օհանավանք | Բազիլիկ եկեղեցի | 4—5-րդ դ. |
| 33 | » | » | » | Եկեղեցի | 1215 թ. |
| 34 | » | » | » | Ժամատուն | 1251 թ. |
| 35 | » | Եղվարդ | — | Զորավար եկեղեցի | 7-րդ դ. |
| 36 | » | Կոշ | — | Խաչքար | 13-րդ դ. |
| 37 | » | Թալիշ | — | Արուճի տաճար (եկեղեցի) | 7-րդ դ. |
| 38 | » | Թեղեր | — | Ս. Աստվածածին եկեղեցի | 1211—1220 թ.թ. |
| 39 | » | » | — | Ժամատուն և մատուռներ | 1220—1232 թ.թ. |
| 40 | Ապարանի | Ապարան | — | Քասախի բազիլիկ (եկեղեցի) | 4—5-րդ դ. |
| 41 | Արթիկի | Ճեմղաշեն | — | Երերույքի տաճար (եկեղեցի) | 6-րդ դ. |
| 42 | » | Արթիկ | — | Ս. Գևորգ եկեղեցի | 7-րդ դ. |
| 43 | » | Հառիճ | Հառիճի վանք | — | 7—10-րդ դ.դ. |
| 44 | Գորիսի | Տաթև | Տաթևի վանք | Գավազան | 9-րդ դ. |
| 45 | Էջմիածնի | Էջմիածին | — | Զվարթնոց եկեղեցի | 7-րդ դ. |
| 46 | » | » | — | Հռիփսիմե եկեղեցի | 618 թ. |
| 47 | » | Այգեշատ | — | Թարգմանչաց եկեղեցի | 7-րդ դ. |
| 48 | Թալինի | Վերին Թալին | — | Տաճար (եկեղեցի) | 7-րդ դ. |
| 49 | » | » » | — | Ս. Աստվածածին եկեղեցի | 7-րդ դ. |
| 50 | » | Իրինդ | — | Եկեղեցի | 7-րդ դ. |
| 51 | Իջևանի | Գոշ | Գոշավանք | 8 եկեղեցի 1 ժամատուն | 11—13-րդ դ.դ. |

| №№ ը/կ | Շրջան | Գյուղ, քաղաք | Հավաքական անունը | Հուշարձանի անունը | Շինության ժամանակը |
|---|---|---|---|---|---|
| 52 | Իջևանի | Կույբիշև | Հաղարծին | 4 եկեղեցի 1 ժամատուն | 11—13-րդ դդ. |
| 53 | » | » | » | Սեղանատուն | 12-րդ դ. |
| 54 | Կոտայքի | Քանաքեռ | — | Ս. Աստվածածին եկեղեցի | 1695 թ. |
| 55 | » | Պտղնի | — | Տաճար (եկեղեցի) | 6-րդ դ. |
| 56 | » | Ավան | — | Տաճար (եկեղեցի) | 6-րդ դ. |
| 57 | » | Արամուս | — | Եկեղեցի | 6-րդ դ. |
| 58 | » | Գառնի | — | Տրդատաբերդ, դարպաս | 1-ին դ. |
| 59 | » | » | — | Տրդատի տաճար | 1-ին դ. |
| 60 | » | Գողթն | Գեղարդա վանք | Դարպաս | 19-րդ դ. |
| 61 | Շամշադինի | Չինարի | Խորանաշատ | Ժամատուն | 1222 թ. |
| 62 | Սիսիանի | Սիսիան | — | Տաճար (եկեղեցի) | 6-րդ դ. |
| 63 | » | Աղուդի | — | Մահարձան | 7-րդ դ. |
| 64 | Ստեփանավանի | Կուրթան | Հնեվանք | Եկեղեցի | 10-րդ դ. |
| 65 | — | Երևան քաղ. | — | Կաթողիկե եկեղեցի | 13-րդ դ. |
| 66 | — | » » | — | «Գյոյ-Մեչետ» մզկիթ | 17-րդ դ. |
| 67 | — | » » | — | Սարդարի մզկիթ | 17-րդ դ. |
| 68 | — | » » | — | Տուն, Ալավերդյան փողոցում | 19-րդ դ. |

Ի վերջո արժե հիշել, որ Կոմիտեն պահպանության և վերանորոգչական աշխատանքներից դուրս, վերջերս սկսել է զբաղվել նաև հուշարձանների բարեկարգման գործով. օրինակ— Ծաղկաձորի (Ախտայի շրջան) Կեչառիսի վանքը պատել է թուջից ձուլված ճաղեր ունեցող գեղեցիկ ցանկապատով, իսկ արևելյան կողմից՝ նաև քարաշար պատնեշով. ծառազարդվել են Զվարթնոց հուշարձանի և Հաղարծինի վանքի (Դիլիջանի մոտ) բակերը և այլն։

Կասկած լինել չի կարող, որ մեր պատմական և ճարտարապետական հուշարձանների պահպանության, վերանորոգման և բարեկարգման աշխատանքները կշարունակվեն է՛լ ավելի մեծ թափով և ծավալով։



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 21-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Իտալիայի կուլտուրայի աշխատողների և «Իտալիա—ՍՍՌՄ» ընկերության ղեկավար գործիչների դելեգացիան։ Դելեգացիային Մայր Աթոռում ընդունեցին Մայր Աթոռի միաբանները։ Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը հյուրերին առաջնորդեց Մայր Տաճար, ուր նրանք մանրամասն բացատրություններ լսեցին Տաճարի ճարտարապետական կառուցվածքի, ներսում գտնվող արժեքավոր եկեղեցական իրերի և Տաճարի ամիկում մանրանկարչական արվեստի մասին։

Վերջում հյուրերը եղան Մայր Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում, ուր տեսան հնադարյան եկեղեցական թանկարժեք իրեր ու լսեցին մանրամասն բացատրություններ։

Վանքի բակում ի հիշատակ իրենց այցելությանը Մայր Աթոռ, հյուրերը լուսանկարվեցին Մայր Աթոռի միաբանների հետ։ Վերջում հյուրերը իրենց խորին գոհունակությունները հայտնեցին լավագույն ընդունելության համար և վերադարձան Երևան։

***

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց նաև Գերմանա-սովետական բարեկամության ընկերության դելեգացիան պարոն Ադոլֆ Ֆերբերի գլխավորությամբ։ Դելեգացիայի կազմում կային գիտության, կուլտուրայի, արվեստի գործիչներ, ժուռնալիստներ, արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարներ, ինժեներներ։

Հյուրերին ընդունեցին Մայր Աթոռի միաբանները։ Մայր Տաճարը դիտելուց հետո, հյուրերը եղան նաև Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում, ուր շատ գոհ մնացին ավագ լուսարար բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանի մանրամասն բացատրությունները լսելով։

Հյուրերը հետաքրքրվեցին հայ եկեղեցական երաժշտությամբ։ Հոգևոր Ճեմարանի երաժշտության դասախոս Հ. Գեորգյանը հյուրերի ցանկությամբ կատարեց երգեհոնի վրա սուրբ պատարագի արարողությունից մի քանի գեղեցիկ կտորներ։ Հյուրերը իրենց հիացմունքը հայտնեցին լսելով հայկական եկեղեցական երաժշտության նմուշներ։ Նրանք մեծ զարմանքով դիտեցին նաև հայկական նոտագրությունը, որի մասին ըստ պատշաճի նրանց բացատրություններ տրվեցին։

Վերջում հյուրերը Մայր Աթոռի միաբանությունից իրենց խորին շնորհակալությունները հայտնեցին լավագույն ընդունելության համար և վերադարձան Երևան։

***

Նոյեմբերի 29-ին, կիրակի օրը, Մայր Տաճարում, ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Սուրբ պատարագի արարողություններից հետո Մայր Աթոռի միաբանությունը պարտ ու պատշաճ զգեստավորված թողորել էր Ս. Իջման սեղանը։ Սուրբ պատարագից հետո, Ս. Իջման սեղանի առջև, Սովետական Հայաստանի 33-րդ տարեդարձի կապակցությամբ, կատարվեց կառավարական մաղթանքը։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց օրվա հանդիսադիր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԻԵՆՆԱՅԻ ՍԵՍԻԱՆ

(23—28 նոյեմբերի 1953 թ.)

*Նոյեմբերի 23-ին Վիեննայում, «Դրեեր-պարկ» շենքում բացվեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան, որին, բացի Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամներից, ներկա էին զանազան երկրներից բազմաթիվ հյուրեր։ Սեսիայի նախագահությունում էին Ժոլիո Կյուրին, Ժան Լաֆֆիտը, Մաո Դունը, Իզաբելլա Բլյումը, Էժենի Կոտտոնը, Պյետրո Նեննին, Իկուո Օյաման, Վալտեր Ֆրիդրիխը, Իլյա Էրենբուրգը, Նիկոլայ Տիխոնովը և խաղաղության պաշտպանության միջազգային շարժման ականավոր գործիչներ։ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախագահ պրոֆ. Ժոլիո Կյուրին խոսքը տվեց Խաղաղության կողմնակիցների Ավստրիական խորհրդի նախագահ Բրանդվայներին, որը ողջունեց սեսիայի մասնակիցներին։*

*Այնուհետև մեծ ճառով հանդես եկավ պրոֆ. Ժոլիո Կյուրին, որից հետո Խաղաղության Համաշխարհային Խորհրդի քարտուղար Ժան Լաֆֆիտը Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անունից առաջարկ մտցրեց սեսիայի օրակարգի և հանձնաժողովներ ստեղծելու մասին։*

*Սեսիան ընդունեց հետևյալ օրակարգը.*

*1. Այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն միջազգային տարաձայնությունները և կոնֆլիկտները ամենքի համար ընդունելի համաձայնությունների միջոցով լուծելու նպատակով (կորեական ու գերմանական պրոբլեմների կարգավորումը, ջրածնային ռումբի և մասսայական ոչնչացման զենքի բոլոր տեսակների արգելումը, սպառազինությունների կրճատումը և այլն)։*

*2. Առաջարկ ի պաշտպանություն խաղաղության համաշխարհային հանդիպում անցկացնելու վերաբերյալ։*

*Սեսիան որոշում ընդունեց ստեղծել երեք հանձնաժողով.*

*քաղաքական, որը կքննարկի օրակարգի առաջին կետին վերաբերող առաջարկները, կազմակերպական, որը կքննարկի օրակարգի երկրորդ կետին վերաբերող առաջարկները, և կուլտուրական հարցերի հանձնաժողով, որը կքննարկի կուլտուրական բնագավառի զանազան միջոցառումները, որոնք Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կողմից նախատեսված են 1954 թվականի համար։*

*Նոյեմբերի 24-ի առավոտյան նիստում հանդես եկան* Մաո Դունը *(ՉԺՌ)*, Խան Սեր Յան *(ԿԺԴՌ)*, Տոկուսաբուրո Դանը *(Ճապոնիա)*, Իլյա Էրենբուրգը *(ՍՍՌՄ)։ Նիստում մտքերի փոխանակությանը հանդես եկան նաև* Վիլհելմ Էլֆեսը *(Արևմտյան Գերմանիա)*, Միններտ-Կոյինգը *(Հոլանդիա)*, Անեժկա Հոդինովա-Սպուռնան *(Չեխոսլովակիա)*, Գովինդ Սահայը *(Հնդկաստան)*։

Երեկոյան նիստում հրապարակվեց պրոֆ. Բեռնալի (Անգլիա) ճառը, որը չի կարողացել մասնակցել սեսիայի աշխատանքին։ Ապա ելույթ ունեցան պրոֆ. Լեոպոլդ Ինֆելդը (Լեհաստան), պրոֆ. Դորբեռսբերգեր (Ավստրիա), Վյաինե Մեյտաինե (Ֆինլանդիա)։ Նիստում մտքերի փոխանակությանը հանդես եկան նաև Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ Իզաբելլա Բլյումը (Բելգիա), պրոֆ. Անդրե Բոննարը (Շվեյցարիա), Ֆլորիկա Մեզինչեսկուն (Ռումինիա), Պետրոս Կոկկալիսը (Հունաստան), Սերտելը (Թյուրքիա), Անդրեաս Պուիրոսը (Կիպրոս)։

Նոյեմբերի 25-ի առավոտյան նիստում հանդես եկան Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ պրոֆ. Նաֆիսին (Իրան), Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի փոխ-նախագահ Գաբրիել դ'Արբուսյեն, պրոֆ. Ալբերտո Ջանկան (Իտալիա), Ա. Սուրկովը (ՍՍՌՄ), Էժենի Կոտտոնը (Ֆրանսիա)։ Նիստում հանդես եկան նաև Գ. Ռոզենկվիստը (Նորվեգիա), դոկտ. Անդրեա Անդրեենը (Շվեդիա), Աբել Շերմոնդը (Բրազիլիա), Ջեյմս Էնդիկոտը (Կանադա), պրոֆ. Ֆելիքս Իվերսենը (Ֆինլանդիա), Յարոսլավ Իվաշկևիչը (Լեհաստան), Մարսել Ները (Ֆրանսիա)։

Երեկոյան նիստում հանդես եկան Ֆորկհամմերը (Դանիա), Մայտերը (Ֆրանսիա), Դեորգի Նաչարկովը (Բուլղարիա), Ֆիկկինսը (Անգլիա), Ինդուլալ Յագնիկը (Հնդկաստան), Աննա Զեղերսը (ԳԴՌ)։

Նոյեմբերի 26-ի առավոտյան նիստում հանդես եկան Թեոդոր Հարրիսը (Անգլիա), Սալազար Սանտոսը (Կոլումբիա), Ժաննա Էբոլլոն (Կամերուն), Մարիա Լամասը (Պորտուգալիա), Դանդին-Մուռունը (Մոնղոլիա), Ֆերմին Բերետերվիդը (Արգենտինա), Կրուտիցայի և Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլայը (Ռուսական Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ)։ Նիստում հանդես եկան նաև Խալլդոր Լաքսնեսը (Իսլանդիա), Բալտասար Կաստրոն (Չիլի), Հաբիբին (Իսրայել), Սանչես Արկասը (Իսպանիա), պրոֆ. Էրժբետ Անդրիչը (Հունգարիա), Նիկոլաս Գիլյենը (Կուբա), պրոֆ. Ֆենոալտեան (Իտալիա)։

Նոյեմբերի 27-ի առավոտյան նիստում հանդես եկան Յարոսլավ Կնոբլոխը (Ժուռնալիստների միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար), Ջոն Լա Ռոզեն (Տրինիդադ և Տոբագո), Լուիս Ասկարատեն (Ուսանողների միջազգային միություն), Անտուան Տաբետը (Լիբանան), Ռեջիսը (Իտալիա), ակադեմիկոս Նեսմեյանովը (ՍՍՌՄ)։ Նիստում հանդես եկան նաև կոմպոզիտոր Ֆլորիսը (Պարագվայ), Կլաուդիս Տոնելը (Տրիեստ), Էրիբերտո Խարան (Մեքսիկա), Աբդուլլա Սաբարը (Իրաք), Կազադեին (Պրոֆմիությունների համաշխարհային ֆեդերացիա), Ջկով Մաչուսը (Իսրայել) և սեսիայի հյուր Բիրամե Տրաորեն (Ֆրանսիական Սուդան)։

Ելույթ ունեցող բոլոր հռետորները հայտնում էին իրենց ներկայացրած երկրների միլիոնավոր ժողովուրդների վճռականությունը խաղաղության պաշտպանության գործում, արտահայտում ժողովուրդների միջև բարի դրացնության, կուլտուրայի և գիտության ասպարեզներում սերտ փոխհարաբերության ցանկությունը։ Նրանք զայրույթով դատապարտում էին ատոմային, ջրածնային, բակտերիոլոգիական և մասսայական ոչնչացման բոլոր զենքերի գործածությունը և շեշտում, թե գիտության նորանոր հայտնագործությունները պետք է ծառայեն մարդկության բարօրությանը։ Ելույթ ունեցողները հանգում էին այն եզրակացության, թե պետությունների միջև տարաձայնությունների և վիճելի հարցերի կարգադրման լավագույն ուղին պետք է հանդիսանա բանակցությունների ուղին և ոչ թե պատերազմը, որի շղթայազերծումը, առկա ավերիչ զենքերի գործածության դեպքում, սպառնում է մարդկության համար անվերականգնելի կործանում։

Նոյեմբերի 28-ին Պյետրո Նեննիի նախագահությամբ կայացավ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիայի եզրափակիչ նիստը։

Մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո սեսիան անցնում է հանձնաժողովների մշակած բանաձևերի քննարկմանն ու հաստատմանը և Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նոր անդամների ու Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի նոր անդամների ընտրություններին։

Կուլտուրայի հարցերի հանձնաժողովի նախագահ Էժենի Կոտոնը կարդում է այն բանաձևի նախագիծը, որով կոչ է արվում ընդլայնել ժողովուրդների կուլտուրական կապերը։ Սեսիայի մասնակիցները միաձայն ընդունում են այդ հանձնաժողովի առաջարկած բանաձևը։

Ապա Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի առաջարկով որոշում է ընդունվում 1954 թվականին տոնել համաշխարհային կուլտուրայի հետևյալ մեծ ներկայացուցիչների հոբելյանական տարեթվերը. անգլիական գրող Ֆիլդինգի մահվան 200-ամյակը, Ա. Պ. Չեխովի մահվան 50-ամյակը, չեխական կոմպոզիտոր Դվորժակի մահվան 50-ամյակը, Արիստոֆանի ծննդյան 2.400-ամյակը։

Ամբիոն է բարձրանում պրոֆ. Ռոզենկվիստը (Նորվեգիա), որը հրապարակում է սեսիային մասնակցող գիտնականների դիմումը աշխարհի բոլոր գիտնականներին, որով կոչ է արվում հանդես գալ մասսայական ոչնչացման զենքի արգելման օգտին։

Սեսիայի մասնակիցները միաձայն հաստատեցին Խաղաղության միջազգային մրցանակների ժյուրիի նոր անդամների ցուցակը, որ առաջարկեց գրող Ժորժի Ամադուն։

Այնուհետև Խաղաղության Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Ժան Լաֆֆիտը առաջարկում է ընտրել Խաղաղության Համաշխարհային Խորհրդի մի շարք նոր անդամներ և Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի նոր անդամներ։ Սեսիան միաձայն հաստատում է առաջարկված թեկնածությունները։

Սեսիայի մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունում են «Ընդհանուր բանաձևը», որով աշխարհի ժողովուրդներին կոչ է արվում ուժեղացնել պայքարը ամբողջ աշխարհի խաղաղության համար, և «Խաղաղության Համաշխարհային Խորհրդի ուղերձը այն կազմակերպություններին ու գործիչներին, որոնք ցանկանում են միջազգային լարվածության մեղմացում»։

Սեսիայի մասնակիցներին հրաժեշտի խոսքով դիմեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի վիցե-պրեզիդենտ Պյետրո ՆԵՆՆԻՆ։ Նա հաղորդեց, որ սեսիայի աշխատանքին մասնակցել է 59 երկրներ ներկայացնող 314 դելեգատ։ Քննարկվել են Եվրոպային, Ասիային, Հյուսիսային և Լատինական Ամերիկային, Աֆրիկային ու Ավստրալիային վերաբերող զանազան պրոբլեմներ։ Այդ պրոբլեմների քննարկումը հանգեցրել է ընդհանուր պահանջի՝ հաստատել խաղաղություն։ Ներկայումս, հայտարարեց Նեննին, ամեն ինչ կախված է մասսաների ուժից և գիտակցականությունից, խաղաղության պաշտպանության շարժման ընդլայնումից։

Բոլոր ներկա գտնվողների բուռն, երկար ժամանակ չլռող ծափահարությունների տակ Պյետրո Նեննին Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան հայտարարում է փակված։

(Քաղված ՏԱՍՍ-ի հաղորդագրություններից, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», նոյեմբերի 25, 26, 27, 28, 29 և դեկտեմբերի 1. 1953 թ.)

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱՁԵՎԸ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բուդապեշտի սեսիայի կողմից բանակցությունների օգտին ընդունված դիմումը գտավ ջերմ արձագանք և արժանացավ ամենալայն պաշտպանության։ Շնորհիվ այդ կամպանիայի, բոլորի համար ընդունելի համաձայնությունների միջոցով միջազգային տարաձայնությունները կարգավորելու գաղափարը օրեցօր դառնում է ավելի ու ավելի մասսայական և տալիս իր պտուղները։

Կորեայում պատերազմական գործողությունների դադարեցումը հանդիսացավ խաղաղության գործի հաղթանակը։

Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա մեծ տերությունների միջև նոտաների վերջին փոխանակությունը ապացուցում է, որ չորս

մեծ տերությունների կոնֆերենցիայի հրավիրումը հնարավոր է կարճ ժամկետում։

Ինչ վերաբերում է Հնդկաչինին, ապա պատերազմական գործողությունների դադարեցման և խաղաղ կարգավորման գաղափարը նվաճում է հասարակական կարծիքի ավելի լայն խավերին, ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Վյետնամում։

Բայց միջազգային լարվածության մեղմացմանը դիմադրող ուժերը «բանակցությունները» բառն օգտագործում են սառը պատերազմի երկարաձգման նպատակ ունեցող գործողությունների քողարկման համար։ Իրենց խոսակցին կանգնեցնել կատարված փաստերի առջև,— դա չի նշանակում բանակցությունների ձգտում։ Ճգնել ստեղծելու բանակցությունների վիժեցման պայմաններ՝ չի նշանակում ցանկանալ բանակցություններ։

Ինչպես Ասիայում, այնպես էլ Եվրոպայում որոշ շրջաններում տիրող իրադրությունը և որոշ կոնֆլիկտներ իրենցից ներկայացնում են սպառնալիք խաղաղության գործի համար։

Կորեայում վարվող բանակցությունները սպառնալիքի տակ են։ Այն ձգտումը, որպեսզի չեզոք երկրները և մասնավորապես Հնդկաստանը, բացառվեն քաղաքական կոնֆերենցիայի կազմից, որը գլխավորապես շոշափում է Ասիայի շահերը, կարող է վիժեցնել բանակցությունները։ Ժողովուրդները թույլ չեն տա Կորեայում պատերազմական գործողությունների վերսկսում։

Եվրոպայի անվտանգության շահերը պահանջում են շուտափույթ կերպով կարգավորել գերմանական պրոբլեմը. այդպիսի կարգավորում հնարավոր է միայն չորս տերությունների՝ ԱՄՆ-ի, ՍՍՌՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի համաձայնության միջոցով։ Այդպիսի համաձայնության ճանապարհին եղած միակ խոչընդոտը կողմերից մեկի ձգտումն է՝ վերականգնել գերմանական միլիտարիզմը և Գերմանիան մտցնել մյուս կողմի դեմ ուղղված ռազմական կոալիցիայի մեջ։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Եվրոպայի ժողովուրդներին կոչ է անում խոչընդոտ հարուցել «եվրոպական բանակի» վերաբերյալ պայմանագրերի վավերացմանը և գերմանական միլիտարիզմի վերականգնմանը՝ ինչ ձևով էլ դա լինի։ Դրանով իսկ ուղի կբացվի գերմանական հարցի շուրջը չորս տերությունների համաձայնության համար, որը գերմանական ժողովրդին կապահովի խաղաղ ապագայի հեռանկար և Եվրոպայի բոլոր ժողովուրդներին երաշխիք կտա Գերմանիայում ագրեսիվ ուժերի վերականգնման դեմ։

Ֆրանսիայի և Վյետնամի միջև արդեն յոթ տարի է, ինչ պատերազմ է մղվում։ Այդ պատերազմին կարող են վերջ տալ միայն պատերազմող կողմերի ուղղակի բանակցությունները։ Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը ողջունում է այն առաջարկը, որ այդ իմաստով մտցրել է Վյետնամի Դեմոկրատական Ռեսպուբլիկայի դելեգացիան և որը պաշտպանել է Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի դելեգացիան։ Այդ առաջարկը, որին ֆրանսիական դելեգացիան բարենպաստ պատասխան է տվել, կարող է հիմք հանդիսանալ կարգավորման համար։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը միշտ պնդել է, որ օտարերկրյա ռազմական օկուպացիան, ուրիշի տերիտորիայում ռազմական բազաների շինարարությունը իրենցից ներկայացնում են սպառնալիք միաժամանակ ժողովուրդների անկախության և խաղաղության գործի համար։

Այդպիսի քաղաքականության տարածումը նկատվում է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում։ Դա հատկապես դրսևորվում է Եվրոպայում, որտեղ փորձեր են կատարվում ստեղծելու «եվրոպական պաշտպանական միավորում» և ամերիկյան ատոմային բազաներ են ստեղծվում Իսպանիայում։ Ասիայում, որտեղ իրականացվում է օտարերկրյա օկուպացիա, ուժեղանում է Ճապոնիայի վերազինումը և որտեղ ԱՄՆ-ը համառորեն աշխատում է ռազմական բազաներ ստեղծել Պակիստանում։ Այդ վերջին փորձը սպառնում է պատերազմի պսիխոզը տարածել երկրագնդի ևս մեկ շրջանի հարյուր միլիոնավոր մարդկանց մեջ։

Սպառազինությունների հարաճուն մրցավազքը և մասսայական ոչնչացման զենքի արտադրությունը իրենցից ներկայացնում

*են անտանելի բեռ և սոսկալի սպառնալիք ամբողջ աշխարհի համար։*

*Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Ստոկհոլմի Կոչի տակ ստորագրություններ հավաքելու իր կամպանիայի ընթացքում և Վարշավայի կոնգրեսի որոշման մեջ ամբողջ աշխարհի ուշադրությունը գրավեց դեպի այդ պրոբլեմը։ Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը ափսոսանք է հայտնում, որ ՄԱԿ-ը դեռևս համաձայնության չի հասել այդ հարցերի շուրջը, և ցանկություն է հայտնում, որ շարունակվեն ջանքերը ատոմային ու բակտերիոլոգիական զենքը անպայման արգելելու և սպառազինությունների բոլոր տեսակներն զգալիորեն կրճատելու նպատակով՝ հաստատելով իսկական վերահսկողություն։*

*Վերջապես, Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը հիշեցնում է, որ եթե անհրաժեշտ է, որպեսզի բանակցություններ սկսվեն բոլոր առանձին հարցերի շուրջը, յուրաքանչյուրի մասնակցությամբ ինքը միշտ համարել և համարում է, որ միջազգային լարվածության մեղմացման առավել էֆեկտիվ միջոց մնում է հինգ մեծ տերությունների կոնֆերենցիան։*

*Այդ կոնֆերենցիան որևէ մասնակցի նախաձեռնությամբ կկարողանա քննարկել ամեն մի պրոբլեմ, որը դիտվում է որպես միջազգային լարվածության պատճառներից մեկը, և գտնել ընդհանուր, բոլորի համար ընդունելի համաձայնություններ։*

*Միջազգային գործերի կարգավորման միջազգային հաստատություններում Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի օրինական տեղը ճանաչելուց համառորեն հրաժարվելը խոչընդոտ է հինգ մեծ տերությունների կոնֆերենցիայի հրավիրման համար։*

*Այդ հրաժարումը, որ հակասում է բոլոր պետությունների շահերին, ավելի ու ավելի խստորեն է դատապարտվում համաշխարհային հասարակական կարծիքի կողմից։*

*Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը ժողովուրդների տրամադրության տակ դնում է մի այնպիսի գործիք, որը հնարավորություն է տալիս հաստատելու կայուն խաղաղություն։ Ժողովուրդները պետք է հասնեն Կանոնադրության պահպանմանը։ Կանոնադրության դեմ կատարվող ոտնձգությունները ամբողջ աշխարհը կանգնեցրել են մեծ դժվարությունների առջև։ Կանոնադրության տառին և ոգուն վերադառնալը ժողովուրդներին կօգնի ապահովելու իրենց անվտանգությունն ու անկախությունը և հնարավորություն է ստեղծելու ազգերի իսկական համագործակցության համար՝ նրանց տնտեսական ռեսուրսների, բարեկեցության և կուլտուրայի զարգացման նպատակով։*

*Տագնապը և երկյուղը, աղքատությունն ու կարիքը, որոնք սառը պատերազմի և սպառազինությունների մրցավազքի հետևանքով որպես ծանր բեռ ընկնում են մարդկանց ուսերին, կարող են և պետք է վերացվեն ժողովուրդների պայքարի միջոցով, որից վերջին հաշվով կախված է խաղաղության բախտը։*

(ՏԱՍՍ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 1 դեկտեմբերի 1953 թ.)





# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա. ՄԱՐՏՈՒՆԻ

## ՆՈՐ ՀԱՄԱԼՐՈՒՄ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

*Սույն թվականի հոկտեմբեր ամսին, Մոսկվայում, ինչպես հայտնի է, տեղի ունեցան ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ընտրությունները։ Ընտրվեցին 199 նոր ակադեմիկոսներ և ակադեմիայի թղթակից-անդամներ։ Գիտությունների ակադեմիայի ուժեղացումը — Սովետական Միության տնտեսության, գիտության և կուլտուրայի անշեղ վերելքի ցուցանիշն է։ Նոր ընտրված ակադեմիկոսների և թղթակից-անդամների շարքում մենք տեսնում ենք մեր Հայրենիքի բոլոր ազգությունների ներկայացուցիչներին, այդ թվում նաև հայ ժողովրդի զավակներին, որոնց մասին ստորև տալիս ենք մի քանի համառոտ տեղեկություններ.*

***

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ալեքսանդր Նեսմեյանովը վերջերս ունեցած իր ելույթներից մեկում առանձնապես նշել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, աստրոֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի հետազոտությունները, նրանց համաշխարհային արժեքը աստրոֆիզիկայի և աստղային կոսմոգոնիայի (տիեզերածնության) ասպարեզում։

Շատ ուսանելի է ակադ. Վ. Համբարձումյանի ստեղծագործական ուղին։ Ահա ձեզ նրա դասախոսական աշխատանքի առաջին օրը, Լենինգրադի համալսարանի լսարաններից մեկում։ Զանգից հետո ուսանողները զբաղվել են իրենց տեղերը և սպասում են պրոֆեսորին։ Չի անցնում մի քանի րոպե, երբ կողքի նստարաններից մեկից բարձրանում է մի երիտասարդ, արտաքնապես նման բոլոր ուսանողներին։ Քիչ ամոթխած նա մոտենում է ամբիոնին։ Առաջանում է ընդհանուր խառնաշփոթություն. ուսանողները շփոթվել էին տեսնելով այդպիսի երիտասարդ պրոֆեսորի։ Վ. Համբարձումյանը, հայացքը ձգելով շարքով նստարանների վրա, հանգիստ և վստահ սկսում է իր առաջին դասախոսությունը թեորետիկ (տեսական) աստրոֆիզիկայի մասին։

— Դժվար է մոռանալ,— պատմում է Վ. Համբարձումյանի նախկին աշակերտ, այժմ Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Վիկտոր Վիկտորովիչ Սոբոլևը,— բովանդակությամբ խորը և ձևով հասարակ այդ դասախոսությունները։ Բայց ամենից շատ մեզ գրավում էր առարկայի նորությունը. տեսական (թեորետիկ) աստրոֆիզիկան շատ երիտասարդ գիտություն էր, և Վիկտոր Համբարձումյանը մեկն էր նրա ստեղծողներից։ Այն ժամանակ նա առաջինն էր, որ մտցրեց տեսական աստրոֆիզիկայի դասավանդումը մեր համալսարանում։ Առարկայի երիտասարդությունը ներդաշնակում էր գիտնականի երիտասարդությանը։ Պրոֆեսոր Վիկտոր Համբարձումյանը այն ժամանակ հազիվ 27 տարեկան էր։

*Վիկտոր Համբարձումյանի աշխատությունները տեսական աստրոֆիզիկայի և աստղաբաշխության ասպարեզում նրան համաշխարհային հռչակ բերեցին. այդ աշխատությունների հիման վրա, 1934 թվականին, առանց դիսերտացիայի պաշտպանության, նրան շնորհվեց ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան։*

*Անցան տարիներ, գիտական-ստեղծագործական որոնումների տարիներ։ Համբարձումյանի գիտական հայտնագործությունները անգնահատելի ներդրումներ էին հանդիսանում սովետական աստղաբաշխական գիտության մեջ։ 1939 թվականին Վիկտոր Համբարձումյանը ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։*

*Հզոր թափով ծաղկում է սովետական միջոլորտի աստղային ֆիզիկան՝ իրավամբ գրավելով առաջին տեղը աշխարհում։ Համբարձումյանի բազմաթիվ աշակերտները՝ դոկտորներ, պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ հաջողությամբ են զարգացնում իրենց ուսուցչի գծած նոր ուղղությունը։ Չէ՞ որ աստղային ֆիզիկան ունի հսկայական գործնական նշանակություն. նա ուսումնասիրում է երկնային մարմինների մեջ կատարվող ֆիզիկական երևույթները և տիեզերքի կազմության ու զարգացման խնդիրները։*

*«Որպեսզի կարելի լինի իմանալ մարդու բնավորությունը,— ասում է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը,— պետք է նրան տեսնել տանը աշխատելիս, ուրախության և վշտի ժամանակ։ Որպեսզի կարելի լինի պարզել նյութի հատկությունները, պետք է դիտել նրան ֆիզիկական տարբեր պայմաններում։ Գիտնական ֆիզիկոսները, իրենց աշխատանոցներում (լաբորատորիաներում) կատարում են ճշգրիտ փորձեր՝ նյութի կազմությունը և կառուցվածքը լուծելու համար։ Չնայած դրան, աշխատանոցներում ստացված ֆիզիկական հնարավորությունների շրջանակները մեծ չեն։ Ավելի մեծ է պայմանների բազմազանությունը, ասենք օրինակ՝ ջերմությունը, ճնշումը, էլեկտրական դաշտերը և այլն, որոնք տեղի են ունենում երկնային մարմիններում։ Եվ աստղային ֆիզիկան է, որ հնարավորություն ունի ուսումնասիրելու նյութի ընթացքը այդպիսի պայմաններում»։*

*Լույսի ցրման ընթացքը հսկայական դեր է խաղում աստղային մթնոլորտում։ Լույսի ցրման պայծառության հաշվարկման խնդիրը շատ է բարդ։ Միայն Վ. Համբարձումյանին է հաջողվել գտնել այդ խնդրի միանգամայն հասարակ, միաժամանակ՝ միանգամայն ճիշտ լուծումը։ Բայց լույսի ցրման ընթացքները տեղի են ունենում նույնպես երկրային մթնոլորտում, ջրային ավազաններում, տեսադիտական (օպտիկական) գործիքներում։ Լույսի ցրման խնդրի լուծումը անհրաժեշտություն է գործնական շատ հարցեր լուծելու համար։ Համբարձումյանը այստեղ կիրառեց իր տեսությունը, որը սկզբում մշակվել էր աստղային ֆիզիկայի նպատակների համար՝ երկրի ժողովրդական տնտեսության պահանջով։*

*Վ. Համբարձումյանի այդ նշանավոր աշխատանքի համար շնորհվեց նրան Ստալինյան մրցանակ։*

*Համբարձումյանի ղեկավարած Բյուրականի աստղադիտարանում նրան հաջողվեց հայտնաբերել աստղային խմբակցությունների նոր համադրություններ, որտեղից ծնվում են աստղային նոր կազմավորումներ։ Իր հայտնագործումներով սովետական գիտնականը հիմնովին մերժեց որոշ գիտնականների տարածած այն առասպելը, որ իբր տիեզերքը ստեղծվել է միլիարդավոր տարիներ առաջ, կամ, որ՝ տիեզերքը իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, բայց եթե կանգ առած սառածություն, անփոփոխելիություն։*

*Հիմնվելով բազմաթիվ դիտումների և տեսական հաշվումների վրա, Վ. Համբարձումյանը տվեց զանազան աստղային համակարգությունների տարիքը, որոնք գտնվում են կազմավորման շրջանում և որոնք, Համբարձումյանի բնորոշմամբ՝ «աստղային ասոցիացիաներ» են։*

*Հայտնի է, որ մյուս աստղերի միջին տարիքը կազմում է մի քանի միլիարդ տարի, այնինչ Համբարձումյանի հայտնաբերած ասոցիացիայի մեջ մտնող աստղերի միջին տարիքը կազմում է միայն մի քանի միլիոն տարի։ Դրա հիման վրա Վ. Համբարձումյանը եզրակացրեց, որ աստղերի կազմավորումները Գալակտիկայում այժմ էլ շարունակվում են, և դրանով նա հենց մերժեց մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր տեսակետները։*

*Այս փայլուն հայտնագործման համար Վ. Համբարձումյանին և նրա աշակերտ Բ. Մարգարյանին շնորհվեց առաջին կարգի Ստալինյան մրցանակ։*

*Անընդգրկելի են ակադեմիկոս Վ. Համբարձումյանի գիտական հետաքրքրության շրջանակները— մշտապես փնտրող, ձեռք բերվածով երբեք չհանգստացող, չափազանց համեստ։ Առ այսօր հրատարակվել է*



Ակադեմիկոս Վիկտոր Հ. Համբարձումյան

աստղային ֆիզիկայի, աստղային աստղաբաշխության և ֆիզիկայի զանազան հարցերին նվիրված նրա ավելի քան 150 աշխատությունը։

Ակադ. Համբարձումյանը մշակել է նաև գազային միգամածության լուսարձակման տեսությունը, ուսումնասիրել է լույսի կլանման բնույթը միջաստղային տարածություններում և այլն։ Դժվար է այժմ գտնել աշխարհում շատ ու քիչ լուրջ աստղաբաշխական մի դասագիրք, որ գիտական այս նոր հետազոտությունները մտած չլինեն նրա մեջ։ Նրա աշխատություններից շատերը հրատարակվել են ռուսերեն և աշխարհի զանազան լեզուներով։

Բյուրականի աստղադիտարանի և նրա ղեկավար Վ. Համբարձումյանի աշխատությունների հիմքում ընկած է ռուսական առաջավոր գիտնականների փառավոր տրադիցիան։ Եվ դա հասկանալի է. չէ՞ որ նրա մտավոր հասակի ձևավորման վրա ամենից շատ ազդեցություն է թողել Լենինգրադի համալսարանը, ուր նա լսել է Ա. Ա. Կոստինսկու և Գ. Ա. Տիխովի խորը ու հետաքրքրաշարժ դասախոսությունները։ Նրա զրույցները Ա. Ա. Բելոպոլսկու հետ Պուլկովյան աստղադիտարանում ասպիրանտական ուսման տարիներին, ռուսական գիտության ինքնուրույն արժանիքների հասկանալը, անսահման նվիրվածությունը առաջավոր գիտությանը— իրենց կնիքն են դրել երիտասարդ գիտնականի վրա։ Նա առանձնապես հարգանքով է հիշում իր ուսուցիչ՝ ռուս խոշորագույն գիտնական Արիստարխ Ապոլոնովիչ Բելոպոլսկուն։

Սակայն նա սովորել է ոչ միայն Բելոպոլսկուց։ Նա սովորել է գիսավոր աստղի ձևի նշանավոր տեսության հիմնադիր Բրեդիխինի և այլ խոշորագույն ռուսական աստղաբաշխների և մաթեմատիկոսների մոտ։

Այստեղ չի կարելի չնշել մի կարևոր գիծ, որը հատկանշական է ռուսական գիտնականներին— այդ նրանց նպատակադրումն է. նրանք իրենց գործունեության վրա մշտապես նայում են որպես ժողովրդին ծառայելու միջոց։ Եվ հենց այդ գիծն է, որ խթանում, զարգացնում է սովետական գիտական միտքը։ Ռուսական գիտության հիմքի վրա, որի շուրջը համախմբվել են գիտության առաջավոր գործիչները, սովետական գիտությունը դարձել է ամենաառաջավոր գիտությունը աշխարհում։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին բուռն կերպով զարգացավ սովետական գիտությունը։ 1943 թվականին Երևանում կազմակերպվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիա։ Համբարձումյանը դարձավ նրա առաջին իսկական անդամներից մեկը, իսկ 1947 թվականից՝ նրա պրեզիդենտը։

Շնորհիվ իր կազմակերպչական լայն թափին, Վ. Համբարձումյանը ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական ինստիտուտներում աշխատող գիտնականների ուժերը ուղղեց դեպի մեր երկրի շինարարության առաջադրանքների լուծման խնդիրները։

Պրեզիդենտի աշխատանքային յուրաքանչյուր օրը լի է բազմաթիվ հոգսերով։ Չնայած իր լրիվ զբաղվածությանը, նա չի մոռանում ժամանակ հատկացնել իր երիտասարդ աշակերտներին։ Չէ՞ որ Համբարձումյանն առաջինն է, որ Հայաստանում ստեղծեց աստղաբաշխների մի խումբ, նրանց մեջ հաշվել և տեր առաջացրեց դեպի երիտասարդ, բայց խոշոր ապագա ունեցող գիտությունը՝ աստրոֆիզիկան։

Սովետական Միության և աշխարհի բոլոր ծայրերից Երևան և Բյուրական հարյուրավոր նամակներ են ստացվում Համբարձումյանի անունով, որոնք խնդրում են ա-

*կադեմիկոսին հայտնելու իր կարծիքը ժամանակակից աստղաբաշխության այս կամ այն հարցի վերաբերյալ։ Նրան են դիմում աշխարհի աստղաբաշխները որպես Միջազգային աստղաբաշխական միության վիցե-պրեզիդենտի, որպես Աստղային վիճակագրության և Գալակտիկայի միգամածության հանձնաժողովի անդամի, և ուղղակի՝ որպես ժամանակակից աստղային ֆիզիկայի խոշորագույն մասնագետի։ Եվ բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են աստղաբաշխությամբ, անհամբերությամբ սպասում են «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ»ի նոր համարի լույս տեսնելուն, որ միշտ լի է Համբարձումյանի գիտական նոր մտքերով։ Սովետական գիտության մեծ հայրենասեր Վիկտոր Համազասպի Համբարձումյանը հանդիսանում է ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ, խաղաղության պաշտպանության Սովետական Կոմիտեի անդամ։ Հայրենիքի առաջ մատուցած նշանավոր ծառայությունների համար նա պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով և մի քանի մեդալներով։ Գիտական զեկուցումներով նա հանդես է եկել Պրագայում և Հռոմում, Ցյուրիխում և Լոնդոնում, Փարիզում և Ստոկհոլմում։ Նա համոզիչ կերպով պատմել է սովետական գիտության՝ խաղաղության և իսկական դեմոկրատիայի գիտության խոշորագույն նվաճումների մասին։*

*Համբարձումյանի մեծ ծառայություններն այժմ նորից արժանացան բարձր գնահատականի։ Հայրենիքն իր տաղանդավոր զավակի առաջ չմնաց պարտական. սովետական մարդիկ ուրախությամբ և հպարտության զգացմունքով իմացան ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի հաղորդագրությունից, որ Վիկտոր Համազասպի Համբարձումյանն ընտրվել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։*

*Մեր հասարակայնությունը հավաստացած է, որ ակադ. Վ. Համբարձումյանի առջևում գիտական դեռ շատ նոր հայտնագործություններ կան, որոնք մեծ փառք են բերելու ինչպես իրեն՝ հեղինակին, այնպես և Սովետական մեր նվիրական Հայրենիքին։*

***

*1923 թվականին Մոսկվայի Տեխնիկական բարձրագույն դպրոցում հայտարարվեց մրցակցություն։ Ըստ որում, մրցակցությունը շատ ուժեղ էր՝ 9 հոգի պայքարում էին մեկ տեղի համար։ Դեռևս 17 տարին չլրացած Հովհաննես Լյուդվիգի Կնունյանցը փայլուն կերպով հանձնելով ընդունելության քննությունները, մտնում է Տեխնիկական բարձրագույն դպրոցի քիմիական ֆակուլտետի ուսանողների շարքը։*

*Հինգ տարի անց, Կնունյանցը ավարտում է բարձրագույն դպրոցը ինժեներ-տեխնիկի աստիճանով և ընդունվում օրգանական քիմիայի ամբիոնում որպես ասպիրանտ։ Այդ նշանավոր բարձրագույն ուսումնական հաստատության պատերի ներսում աստիճանաբար աճում է Հովհաննեսը՝ հետագայում գրավելու դոցենտի և օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնները։ 1935 թվականին նա ստանում է գիտությունների թեկնածուի աստիճան։ Չորս տարի անց Կնունյանցին շնորհվում է գիտությունների դոկտորի գիտական բարձր աստիճան։ Այդ տարիներին էլ Կնունյանցին շնորհվում է նաև օրգանական քիմիայի ամբիոնի պրոֆեսորի կոչում։*

*Կնունյանցին հետաքրքրում էին օրգանական քիմիայի տարբեր բաժինները։ Յուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նրա հետազոտությունները հակամալարիային նյութերի ուսումնասիրման ասպարեզում։ Այդ աշխատանքները, որոնք սկսած են 1930 թվականից, նպատակ ունեին հայտնաբերել մինչ այդ անհայտ «Պլազմոխինին» պրեպարատը (պատրաստուկը)։ «Պլազմոխինին» և «Ֆեբրինա» պատրաստուկների կազմության սահմանման արդյունքից հետո, Կնունյանցը առաջարկում է վերջինիս ինքնօրինակ համադրությունը՝ հիմնված նոր սկզբունքների վրա։ Այս եղանակը շուտով նրա կողմից վերամշակվում է և ներդրվում արդյունաբերության մեջ։ Ավելի քան 15 տարի է, որ «Օտեբրին», «Ակրեխին» պատրաստուկները բաց են թողնվում հիվանդների բուժման համար։ Կնունյանցի աշխատություններն ու աշխատանոցները հագեցված են հայրենական տեխնիկայի վերջին խոսքով։*

*1946 թվականին Հովհաննես Կնունյանցն ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։ Այդ բարձր կոչումը հանդիսանում է գիտնականի բարեխիղճ աշխատանքների պատշաճ գնահատականը։ Սերը դեպի փորձարարությունը, խստապահանջությունը աշխատանքի նկատմամբ, հետևողականությունը փորձի նկատմամբ—ահա՝ Կնունյանցի հիմնական հատկանիշները։*

*Տեսական քիմիայի խորը մասնագետ Հ. Լ. Կնունյանցը միաժամանակ հետաքրքրվել է նաև կիրառական քիմիայով։ Նա լավ գիտի*



Ակադեմիկոս Հովհաննես Լ. Կնունյանց

*արդյունաբերության պահանջները։ Այդ մասին են խոսում գյուտերի համար նրա ստացած տասնյակ հեղինակային իրավունքները։*

*«Ի դեմս Կնունյանցի,— ասում է ակադ. Վ. Մ. Ռոդիոնովը, մենք ունենք օրգանական քիմիայի սինթեզի փայլուն մի վարպետ, որն ընթանում է մեր լավագույն սինթեզիստների փառապանծ ուղիով»։*

*Բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո, հաջորդող քսանհինգ տարվա ընթացքում, նա շատ բան է արել։ Նրա տպագրած բազմաթիվ աշխատությունները բնութագրում են Կնունյանցին որպես ստեղծագործող հետազոտողի, աշխատասեր և փայլուն փորձարկողի և խորը մտածողի։ Հաջողությամբ շարունակելով իր ուսուցիչների և նախորդների գործը, նա պատվով է պաշտպանում ռուս քիմիկոսների փառապանծ տրադիցիաները։ 1943 թվականին բժշկական նոր պատրաստուկի միջոցներ մշակելու համար Հովհաննես Կնունյանցին շնորհվեց Ստալինյան մրցանակ։*

*Իր գիտական-հետազոտական և մանկավարժական աշխատանքների հետ միասին, Կնունյանցը մասնակցում է հասարակական աշխատանքներին. նա հանդիսանում է Վ. Մ. Մենդելեևի անվան Համամիութենական քիմիական ընկերության նախագահության անդամ և Բժշկական ընկերության տեղեկաթերթի խմբագիր։*

*1947 թվականին Հովհաննես Կնունյանցին, օրգանական քիմիայի ասպարեզում կատարած նվաճումների համար նորից շնորհվեց Ստալինյան մրցանակ։ Այժմ Կնունյանցը արժանացավ դարձյալ բարձր պատվի։ Նա ընտրվեց որպես ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։*

*Շրջապատված սովետական ժողովրդի, հարազատ պետության հոգատարությամբ, նա շատ բան է տվել մեր հայրենական գիտությանը և մեր քիմիական արդյունաբերությանը։*

*Նա գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում և մենք իրավունք ունենք նրանից սպասելու նոր և արժեքավոր աշխատանքներ։*

***

*Ավիացիոն արդյունաբերության կոնստրուկտոր Արտեմ Իվանի Միկոյանի ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ ընտրվելու կապակցությամբ այցելեցինք նրան։ Մեր խնդրանքով նա պատմեց իր կենսագրությունից մի քանի դրվագներ, որոնք անհրաժեշտ ենք համարում բերել ստորև.*

*«Երեսուն տարի առաջ, երբ ես դեռ երեխա էի և գտնվում էի իմ ծննդավայր Սանահին գյուղում, հաճախ տեսնում էի՝ թե ինչպե՛ս են ճախրում մեր լեռների հզոր արծիվները, ինչպե՛ս են պտտվում ոչխարի հոտերի շուրջը և հաճախ զոհեր տանում նրանցից։ Այդ ժամանակ ես սարսափով ու նախանձով էի հետևում այդ հսկա թռչուններին. իմ մանկական երևակայության մեջ ծնվում էին անիրագործելի երազներ, առաջանում էին անլուծելի հարցեր— Ա՜խ, ի՞նչ կլիներ, եթե թևեր պատրաստեի,—մտածում էի ես,— երկինք բարձրանայի և պայքարի մեջ մտնեի երկնքի այդ հպարտ տիրակալների հետ։*

*Մի անգամ մեր գյուղում տեղի ունեցավ հետաքրքիր մի միջադեպ, որը երբե՛ք ես չեմ կարող մոռանալ. կեսօրին, գյուղի վրայով, դղրդյունով անցավ ինչ-որ թևավոր մի բան և վայրէջք կատարեց գյուղից ո՛չ շատ հեռու՝ Սանահինի սարահարթի վրա։ Գյուղի ողջ բնակչությունը շտապեց վայրէջքի վայրը։ Մարգագետնի վրա, թևերը տարածած նստել էր ինչ-որ հրաշք թռչուն՝ ձողերով, տախտակներով և ճոպաններով պատրաստված— այդ ինքնաթիռ էր, որ նոր էր երևում մեր*

*կողմերում։ Մեր գյուղի բնակիչները հավաքված զարմանքով դիտում էին նրան։ Ես ևս, 2 օր նստած ինքնաթիռի մոտ, լարված ուշադրությամբ, հետևում էի մեքենայի վերանորոգմանը։— Ահա այդ ժամանակից սկսած իմ հոգու մեջ առաջացավ անդուսպ մի սեր դեպի ավիացիան։*

*13 տարեկան տղա էի, երբ թողեցի հայրենի գյուղս և սովորել սկսեցի նախ Թբիլիսիում, ապա՝ Ռոստովում և Մոսկվայում։ Ավիացիայի նկատմամբ ունեցած իմ ձգտումը այդ տարիներին ինձ հանգիստ չէր տալիս, մինչև որ իրականացավ իմ երազանքը. 1931 թվականին ես ընդունվեցի Մոսկվայի Ժուկովսկու անվան օդաչուական ակադեմիան, և իմ ամբողջ էությամբ նվիրված, սկսեցի սովորել իմ սիրած գործը։*

*Դեռես ակադեմիայի ունկնդիր էի, մասնակցեցի մարզական ինքնաթիռների մոդելի (կաղապարի) մրցակցությանը։ Իմ նախագծով պատրաստվեց «Հոկտեմբերիկ» ինքնաթիռը. այդ իմ առաջնեկն էր, որի մեջ մարմնացել էր ակադեմիայում ստացած իմ գիտելիքների ողջ իմացությունը։*

*Ավարտելով ակադեմիան, ես սկսեցի աշխատել ինքնաթիռաշինության գործարանի կառուցողական (կոնստրուկտորական) բաժնում։ Մեր ամբողջ երկրին քաջ հայտնի է ինքնաթիռաշինարար Պոլիկարպովը. ես նրան եմ պարտական իմ գիտությամբ, գործնական նորարարությամբ, նա օգնել է ինձ իմ գործունեության ողջ ընթացքում։*

*1939 թվականին ինձ առաջ քաշեցին խոշորագույն ինքնաթիռաշինական գործարանի նախագծային դրասենյակի ղեկավարի պաշտոնով։ Այստեղ պատրաստվեց իմ առաջին կործանիչը՝ «ՄԻԳ—1»-ը։ Այն ժամանակ այդ մեքենան իր ընթացքի արագությամբ գերազանցում էր մինչ այդ եղած բոլոր կործանիչ ինքնաթիռներին։ Այդ մեքենան սովետական օդաչուները հաջողությամբ էին օգտագործում Հայրենական պատերազմի սկզբնական տարիներին։*

*1941 թվականին նոր տիպի ինքնաթիռներ ստեղծելու համար ինձ շնորհվեց Ստալինյան մրցանակ։ Մրցանակներ շահեցի հետագա չորս մրցանակաբաշխության ժամանակ ևս։*

*Վերջերս, երկար բացակայությունից հետո, ես եղա Սովետական Հայաստանում, հայրենի Սանահին գյուղում։ Ես անցա մեր ամբողջ արևավառ Հայաստանով, շնչեցի նրա մաքուր օդը, որով շնչել են մեր պապերն ու հայրերը։*



ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Արտեմ Ի. Միկոյան

*Մենք Արտեմ Միկոյանից բաժանվեցինք մեծ բավականությամբ. նա անցել է կյանքի փառավոր ուղի—Սանահինի աղքատ գյուղացու զավակից մինչև փառապանծ սովետական ավիացիայի գյուտարար և հինգ անգամ արժանացել Ստալինյան մրցանակի։*

*Սովետական Միությունն այժմ ավիացիայի խոշորագույն երկիր է։ Մեր բոլոր ռեսպուբլիկաները, մեր բոլոր խոշոր քաղաքները, հեռավոր շրջաններն իրար հետ կապված են քաղաքացիական ավիացիայի օդային գծերով, իսկ դրանում քիչ չէ Արտեմ Միկոյանի ծառայությունը։*

***

*ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է ընտրվել երկրի ամենաերիտասարդ պրոֆեսոր-դոկտորը՝ Սերգեյ Մերգելյանը։ Նա սովետական գիտնականների ընտանիքն է մտել որպես երիտասարդ տաղանդ, որի մեջ հրաշալի զուգորդվել են մաթեմատիկական խորունկ ընդունակությունները՝ մեծ համեստության և բացառիկ աշխատասիրության հետ։*



ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Սերգեյ Մ. Մերգելյան

Նրա կենսագրության մեջ տարօրինակ ոչինչ չկա. նա մեկն է սովետական արևի տակ մեծացած հազարավոր երիտասարդներից։ Նրա ընդունակությունները դրսևորվում են շատ վաղուց, այն ժամանակ, երբ նա գտնըվում էր Երևանի Մռավյանի անվան դպրոցի 8-րդ դասարանում. տասնամյա դպրոցներում սովորող աշակերտների համար կազմակերպված էր ռեսպուբլիկական մաթեմատիկական մրցակցություն։ Նա գրավում է առաջին տեղը և նվաճում չեմպիոնի մրցանակը։ Ժամանակից շուտ ավարտելով դպրոցը, Սերգեյը մի անգամից ընդունվում է Երևանի Պետական համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի 2-րդ կուրսը։

Պրոֆ. Շահինյանի խնամոտ ձեռքի տակ զարգանում են Մերգելյանի ընդունակությունները։ Շահինյանն իր սիրելի աշակերտին ուղղում է դեպի ժամանակակից մաթեմատիկայի այնպիսի խնդիրների վրա, որոնք կարևոր նշանակություն ունեն այժմ։ Շահինյանը ուսանողությանը հանձնարարում է չլուծված այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ էր մտքի ինքնուրույնություն և աշխատասիրություն։ Խնդիրների լուծման ժամանակ նա երիտասարդներին երբե՛ք չի պարտադրում գոյություն ունեցող մեթոդները, այլ լրիվ հնարավորություն է տալիս՝ թափանցելու մաթեմատիկայի գաղտնիքների մեջ։

1947 թվականին Ս. Մերգելյանը գերազանց գնահատականով ավարտում է Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը և ընդունվում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրան։ Սակայն Մերգելյանը Երևանում երկար չի մնում. պրոֆ. Շահինյանը պրեզիդենտ Վ. Համբարձումյանի հետ ունեցած իր տեսակցություններից մեկի ժամանակ ծանոթացնում է նրան իր աշակերտի մաթեմատիկական ընդունակությունների հետ և խնդրում է իր ասպիրանտին գործուղել Մոսկվա՝ կատարելագործման համար։

Սերգեյ Մերգելյանին շուտով մենք տեսնում ենք Մոսկվայի Մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրայում։ Մեկ տարուց ավելի կարճ ժամանակում նա հանձնում է թեկնածուական քննությունները, միաժամանակ զբաղվելով մաթեմատիկայի մեջ եղած մի բարդ հարցով՝ «լավագույն մոտավորությունների կոմպլեքսային փոփոխությունները» և ստանում հաջող արդյունքներ։ «Տված ֆունկցիայի մոտավոր փոփոխականության» հարցը միջանկյալ ֆունկցիաների միջոցով ունի ո՛չ միայն տեսական հետաքրքրություն, այլև հսկայական գործնական նշանակություն, հատկապես ներկայիս հաշվառումային տեխնիկայի հսկայական թափի ժամանակ։ Ուսումնասիրության արդյունքը Մերգելյանը ձևակերպում է և ներկայացնում Վ. Ա. Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի գիտական խորհրդի քննարկմանը՝ ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան ստանալու համար։ Մերգելյանի այս աշխատանքները ղեկավարել է ակադեմիկոս Մ. Վ. Կելդիշը։ Դիսերտացիան տրվում է պաշտպանության 1949 թվականի փետրվարի 17-ին։ Ակադեմիկոս Վինոգրադովի նախագահությամբ տեղի ունեցող գիտական խորհրդին դիսերտացիայի պաշտպանությանը մասնակցում են Սովետական Միության բոլոր խոշոր մաթեմատիկոսները։ Օպոնենտները բարձր գնահատական տալով Մերգելյանի աշխատանքին, հարց են հարուցում գիտական խորհրդի առաջ՝ շնորհելու նրան ո՛չ թե ֆիզիկո-

մաթեմատիկական գիտությունների թեկնածուի, այլ դոկտորի աստիճանի։ Շուտով Մերգելյանը ստանում է գիտության դոկտորի ատեստատ և պրոֆեսորի դիպլոմ։ Այդ թվականին Մերգելյանը ընդամենը 21 տարեկան էր։

1949 թվականից հետո անցել է 4 տարի։ Մերգելյանի ստեղծագործական ունակությունները աճել, մեծացել են։ Նրա առաջին հաջողությունները ո՛չ միայն չեն հանգստացրել երիտասարդ գիտնականին, այլ ընդհակառակը, ավելի են ոգևորում նրան։

Ուսումնասիրության ընթացքում օգտագործելով սովետական նշանավոր մաթեմատիկոսներ Մ. Ա. Լավրենտևի և Մ. Վ. Կելդիշի մեթոդները, Մերգելյանն ավելի է առաջ շարժում լավագույն մոտավորությունների թեորիան։ Նա միաժամանակ ուսումնասիրում է փոփոխական կոմպլեքսի հավասարաչափ մոտավորությունների ֆունկցիաների պրոբլեմը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում իր կատարած գիտա-հետազոտական աշխատանքներից բացի Ս. Մերգելյանը դասախոսում է Երևանի Պետական համալսարանում։ Նա այստեղ կարողացել է իր շուրջը համախմբել երիտասարդ շնորհալի ուժերի։

Մեր Հայրենիքը միշտ էլ երախտագետ է իր որդիների ծառայությունների նկատմամբ. ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշմամբ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մաթեմատիկական և տեխնիկայի սեկտորի ավագ գիտական աշխատակից Սերգեյ Մկրտչի Մերգելյանին «Ֆունկցիաների կոնստրուկտիվ տեսության մի քանի հարցեր» աշխատության համար շնորհվում է Ստալինյան մրցանակ։ (Մերգելյանի մրցանակ շահած այս աշխատությունը հրատարակվել է «ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Վ. Ա. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի աշխատությունների» մեջ)։

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Մերգելյանն այժմ 25 տարեկան է։ Սովետական երիտասարդ գիտնականը դեռ շատ պիտի հարստացնի հայրենական գիտությունն իր հայտնաբերումներով։

***

Նշանավոր գիտնականների շարքում, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է ընտրվել պրոֆեսոր-դոկտոր Ն. Մ. Սիսակյանը, որ հանդիսանում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Բախի անվան բիոքիմիայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալը և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահության գիտական քարտուղարներից մեկը։



ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ պրոֆ.-դոկտ. Նորայր Մ. Սիսակյան

Նորայր Մարտիրոսի Սիսակյանը ծնվել է 1907 թվականին Հայաստանի Աշտարակ գյուղում, գյուղացու ընտանիքում։ Բարձրագույն կրթությունը նա ստացել է Տիմիրյազևի անվան Գյուղատնտեսական ակադեմիայում։ 1932 թվականին ավարտելով բարձրագույն ուսումնական հաստատությունը, Սիսակյանը մտնում է ակադեմիկոս Պրյանիշնիկովի անվան ասպիրանտուրան։ Ասպիրանտուրան ևս հաջողությամբ ավարտելով, մտնում է դոկտորանտուրա՝ մասնագիտանալով բույսերի բիոքիմիայի մեջ՝ աշակերտելով աշխարհահռչակ բիոքիմիկ ակադեմիկոս Բախին։ Հաջող աշխատանքի արդյունքն այն է լինում, որ նա 1940 թվականին փայլուն ձևով պաշտպանում է իր դոկտորական դիսերտացիան՝ թեմա ունենալով «Երաշտադիմացկուն կուլտուրական բույսերի բիոքիմիական բնութագրությունը»։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման կապակցությամբ, պրոֆ. Միսակյանն ընտրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։ 1946 թվականին, պրոֆ. Միսակյանի անմիջական մասնակցությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գինեգործության և խաղողագործության ինստիտուտին կից առաջին անգամ մեր ռեսպուբլիկայում կազմակերպվում է բույսերի բիոքիմիական լաբորատորիա, որն զբաղվում է խաղողի բիոքիմիայի հարցերով։

Իր մասնագիտությամբ պրոֆ. Միսակյանը հրատարակել է ավելի քան 100 ուսումնասիրություն։ Բուսագիտության ասպարեզում նրա կատարած արժեքավոր հետազոտությունների համար նրան շնորհվել են Մեչնիկովի և Բախի անվան մրցանակներ։

Վերջին տարիներս պրոֆ. Միսակյանը բեղուն ձևով աշխատում է բիոքիմիայի առեղծվածային մի քանի հարցերի ուսումնասիրությամբ։ Այդ ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են նրա «Պրոտոպլազմային կառույցների խմորվող գործունությունը» խորագիրը կրող աշխատությունում։ Այդ արժեքավոր աշխատության համար նրան շնորհվել է Ստալինյան մրցանակ։ Նշված աշխատությունն ունի տեսական կարևոր նշանակություն և խոշոր ներդրում է հայրենական բիոքիմիական գիտության ասպարեզում։ Միաժամանակ, պրոֆ. Միսակյանը զբաղվում է այնպիսի կարևոր և գործնական հարցերի մշակումով, ինչպիսին կոնյակի հնացման ընթացքն է, ինչպես և՝ գինեգործության հարցերով։ Պրոֆ. Միսակյանը նաև հասարակական ակտիվ գործիչ է։ Նա խոշոր ուշադրություն է դարձնում երիտասարդ մասնագետներ պատրաստելու գործին՝ լինելով միաժամանակ ղեկավարը ասպիրանտների և դոկտորների։ Նրա աշակերտներից շատերն աշխատում են Հայաստանում, Վրաստանում և Մոսկվայում։

***

Մեզ մոտ հրաշալի հնարավորություններ կան Սովետական Միության բոլոր ժողովուրդների ստեղծագործական ուժերի բազմակողմանի զարգացման ու բարգավաճման համար։ Ազգային կադրերի աճման ու զարգացման ցայտուն օրինակներն են Հանդիսանում ակադեմիկոսներ Համբարձումյանի և Կնունյանցի և ակադեմիայի թղթակից-անդամներ Միկոյանի, Մերգելյանի, Միսակյանի, ինչպես և Սովետական Հայրենիքի շատ և շատ գիտնականների աննախընթաց հաջողությունները։

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

*Նոյեմբերի 26-ին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում բացվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը։ Այստեղ էին հավաքվել գիտության, կուլտուրայի, արվեստի, արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկների, սովետական ապարատի, բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Մինսկից, Թբիլիսիից, Բաքվից, Աշխաբադից և Միության այլ քաղաքներից ժամանած բազմաթիվ հյուրեր։*

*Ընդհանուր ժողովը բաց արեց ներկաների կողմից ջերմորեն ընդունված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։*

*— Հայաստանի երկարաձիգ պատմության ընթացքում,— ասաց նա,— հայ ժողովրդի զավակները մի՛շտ էլ երազել են ունենալ ազգային գիտական մտքի կենտրոն։ Մեր ժողովուրդը միշտ էլ ձգտել է գիտության, լույսի և մի անգամ չէ, որ իր շարքերից տվել է զանազան գիտությունների ասպարեզում առաջավոր գիտնականներ։ Հայ ժողովրդի երազանքը՝ ազգային գիտական մտքի կենտրոն ունենալ, իրականություն դարձավ միմիայն Սովետական կառավարության օրոք։*

*Ռուս գիտնականների, և հատկապես ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի օգնությամբ, որը պատրաստեց երիտասարդ գիտական շատ կադրեր, և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի բազայի վրա հնարավոր եղավ ստեղծել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։*

*Որպես Հայաստանի ակադեմիայի նվաճումներ, ակադ. Համբարձումյանը նշում է այն փաստը, որ այժմ ակադեմիայում բուռն թափով զարգանում և ծավալվում են գիտության այնպիսի ճյուղեր, որոնք առաջներում կա՛մ բոլորովին չկային, կամ չափազանց թույլ էին զարգացած։ Այժմ ռեսպուբլիկայի գիտնականները լայն աշխատանք են տանում այդ գիտությունների՝ աստրոֆիզիկայի, մաթեմատիկայի, հիդրոտեխնիկայի, սիլիկատների, քիմիայի, ագրոքիմիայի, ֆիզիոլոգիայի, բույսերի ֆիզիոլոգիայի և այլ գիտությունների ասպարեզում։*

*Այնուհետև պրեզիդենտը խոսում է այն մասին, որ ակադեմիայի գեոլոգների կատարած փայլուն հետազոտությունների շնորհիվ հերքվեցին այն բոլոր կեղծ գիտական կարծիքները, որոնց համաձայն, իբր թե Հայաստանի ընդերքը օգտակար հանածոներով աղքատ է. ընդհակառակը, այստեղ հայտնաբերվել են օգտակար շատ հանածոներ։*

*Ակադ. Համբարձումյանը խոսեց Գիտությունների ակադեմիայի կողմից գիտության մյուս ճյուղերում կատարվող բազմաթիվ այլ աշխատությունների մասին։*

*Ժողովում* «Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում» *զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մ. Ներսիսյանը։*

*Ժողովում ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահության անունից ողջունեց ակադ. Մ. Տիխոմիրովը։ Ուկրաինական ակադեմիայի ողջույնը կարդաց Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Կասյանենկոն, Բելոռուսական ակադեմիայից՝ Բելոռուսական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Գոպովը, Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի նախագահությունից՝ ակադեմիայի պրեզիդենտ Մ. Ալիեր, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայից՝ Վրաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Բարամիձեն, Թուրքմենիստանի Գիտությունների ակադեմիայից՝ Թուրքմենական ՍՍՌ Գիտությունների ակա-*

ադեմիայի վիցե-պրեզիդենտ Օ. Մամեդնիազովը։ Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի անունից ողջույնով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Գ. Պետրոսյանը։

Ժողովում հրապարակվեցին նաև գիտական հիմնարկներից, սովետական խոշոր գիտնականներից և ռեսպուբլիկայի հասարակական կազմակերպություններից ստացված ողջույնի հեռագրերը։

***

Հոկտեմբերի 28-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում բացվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բաժանմունքների հոբելյանական սեսիան՝ նվիրված Հայաստանում Գիտությունների ակադեմիա հիմնադրելու 10-ամյակին։

Սեսիայի աշխատանքներին մասնակցում էին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի և եղբայրական ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների ներկայացուցիչները։

Ֆիզիկո-մաթեմատիկական բաժանմունքի ցերեկային նիստում զեկուցումներով հանդես եկան Բյուրականի աստրո-ֆիզիկական աստղադիտարանի աշխատողները։ Ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Բ. Մարգարյանը իր զեկուցման մեջ խոսեց աստղակույտերի էվոլյուցիայի մասին։ «Կրկնակի թաղանթով պլանետար միգամածությունների մասին» թեմային էր նվիրված ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Գ. Գուրզադյանի զեկուցումը։ «Լույսի ընտրողական ու չեզոք կլանումը միջաստղային տարածության մեջ» թեմայով զեկուցում կարդաց ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Լ. Միրզոյանը։

Երեկոյան նիստում լսվեցին ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Ն. Քոչարյանի, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ալիխանյանի, ավագ գիտաշխատող Վ. Քամալյանի, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Գ. Ղարիբյանի և գիտաշխատող Ա. Խրիմյանի զեկուցումները։

Բիոլոգիական բաժանմունքի նիստը բացվեց բիոլոգիական գիտությունների դոկտոր Ա. Փանոսյանի «Միկրոօրգանիզմների փոփոխականությունը, նպատակադիր դաստիարակումը և նրանց փոխհարաբերությունը» թեմայով զեկուցմամբ։ «Սննդի հայթայթման եղանակների ազդեցությունը գիշատիչ կաթնասունների շարժիչ սիստեմի կառուցվածքի վրա» թեմայով զեկուցում կարդաց բիոլոգիական գիտությունների թեկնածու Պ. Ղամբարյանը։ Լսվեցին նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Մնջոյանի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Բունիաթյանի և բիոլոգիական գիտությունների դոկտոր Տ. Մեշկովայի զեկուցումները։

***

Նոյեմբերի 24-ին կայացավ Հասարակական գիտությունների բաժանմունքի առաջին նիստը։ Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ա. Հովհաննիսյանը ներածական խոսքով համառոտ բնութագրեց բաժանմունքի կատարած գիտա-հետազոտական աշխատանքները՝ պատմության, լեզվագիտության, գրականության, արվեստի, էկոնոմիկայի և փիլիսոփայության բնագավառներում։

Առաջինը լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Մելիքսեթ-բեկի արժեքավոր զեկուցումը «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» թեմայով։ Նա մի շարք վառ փաստեր ու ապացույցներ բերեց, որոնք խոսում են ռուս մեծ ժողովրդի և հայ ժողովրդի բազմադարյան բարեկամության մասին։

«Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու դեմ արևմտա-եվրոպական պայքարի պատմությունից» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Հովհաննիսյանը։

Հասարակագիտական բաժանմունքի երեկոյան նիստը բացվեց ակադեմիկոս Հ. Օրբելու հանգամանալից զեկուցմամբ՝ «Վասպուրական տան 9—10-րդ դարերի պատմիչների քաղաքական նպատակադրությունը» թեմայով։

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մարիետտա Շահինյանը՝ «Նորագույն սովետական գրականության մի քանի հարցերի մասին» թեմայով։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտրովսկին հանգամանորեն զեկուցեց աուդիտորիային Հայաստանում կատարվող հնագիտական ուսումնասիրությունների արդյունքների և հեռանկարների մասին։

Հետաքրքիր էր Հասարակագիտական բաժանմունքի նիստում Գառնիի հնագիտական էքսպեդիցիայի պետ՝ պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանի հաղորդումը Գառնիում հայտնաբերված մոզաիկայի մասին։ Զեկուցողը ցուցադրեց մոզաիկայի գունավոր պատճեն բնական չափերով։

Հասարակագիտական բաժանմունքի եզրափակիչ նիստում լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանի զեկուցումը՝ «Պալա լեզուն» թեմայով։

***

Նոյեմբերի 26-ի նիստում զեկուցեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Նազարովը, քիմիական գիտությունների թեկնածու Ս. Վարդանյանը և գիտական աշխատող Մ. Մանվելյանը։

***

Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի նիստերում կարդացվեցին սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման հարցերին նվիրված թեմաներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Թամամշևի զեկուցումը նվիրված էր անասնաբուծության մթերատվության բարձրացման հարցերին։

Այնուհետև «Հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման ուղիները Հայաստանում» թեմայով զեկուցեց Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Գ. Աղաջանյանը։

«Հայաստանի ցորենների արժեքավոր պոպուլյացիաների նշանակությունը նոր սորտեր ստանալու տեսակետից» թեմայով զեկուցումով հանդես եկան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Գուլքանյանը և բիոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Սուրմենյանը։ Զեկուցման մեջ ընդգծվեց տեղական բարձր բերքատու ցորենի տեսակների աճեցման մեծ նշանակությունը գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում։

«Կարծր ցորենների մշակման հեռանկարների մասին Հայկական ՍՍՌ-ում» թեմայով զեկուցեց գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Մինասյանը։

Եզրափակիչ նիստում կարդացվեցին գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Վիրմիշյանի «Պտղատու կուլտուրաների բերքատվության բարձրացման ուղիները Արարատյան դաշտավայրում», բիոլոգիական գիտությունների դոկտոր Հ. Բատիկյանի «Բանջարանոցային կուլտուրաների վեգետատիվ և սեռական հիբրիդիզացիայի գործնական արդյունքները», գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Տ. Տեր-Սահակյանի «Կարտոֆիլի սերմնաբուծության հետագա բարելավումը Հայկական ՍՍՌ-ում» զեկուցումները։

***

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հոբելյանական սեսիան ցույց տվեց, որ իր հիմնադրման 10 տարվա ընթացքում ռեսպուբլիկայի գիտնականները մշակել են մի շարք գիտական պրոբլեմներ, մեծ աշխատանք են կատարել հետազոտությունների արդյունքները ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում ներդնելու ասպարեզում։ Ոտք դնելով իր գոյության երկրորդ տասնամյակին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան իր առաջ դրել է հետազոտական աշխատանքի մեծ ծրագիր ՍՄԿԿ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումի որոշումների լույսի տակ սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման, արդյունաբերության ընդլայնման ասպարեզում պարտիայի և կառավարության առաջադրած խնդիրների կատարման, մեր երկրում կուլտուրայի հետագա աճի համար։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հոբելյանական սեսիան անցավ եղբայրական ռեսպուբլիկաների գիտնականների հետ համագործակցության հետագա ամրապնդման նշանաբանով, սովետական գիտությունը ընդհանուր ուժերով մղելու առաջադիմության ուղիով։

***

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման 10-ամյակը լայնորեն նշվում է Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաների գիտնականների կողմից։ Դեպի Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասցեով երկրի տարբեր կողմերից ամեն օր ստացվում են տասնյակ հեռագրեր, որոնց մեջ եղբայրական ռեսպուբլիկաների գիտնականները հոբելյանի առթիվ շնորհավորում են Հայաստանի գիտնականներին, ցանկանում են նրանց ստեղծագործական նորանոր հաջողություններ, ի բարօրություն Սովետական Հայրենիքի։

Նիստերից ազատ ժամանակ հյուրերը, եղբայրական ռեսպուբլիկաների գիտնա-

կանները եղան ռեսպուբլիկայի մայրաքաղաքի հիշարժան վայրերում և շրջաններում։ Նրանք եղան Էջմիածնում, Ջվարթնոցում, այցելեցին Հայաստանի պետական պատկերասրահը, Մատենադարանը, Ա. Սպենդիարյանի անվան պետական օպերայի և բալետի թատրոնում տեսան «Խանդութ» բալետը։

* * *

Նոյեմբերի 27-ի երեկոյան տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տասնամյակին նվիրված՝ նրա ընդհանուր ժողովի վերջին նիստը։

Ընդհանուր ժողովի նիստում լսվեցին ակադեմիկոս Վ. Համբարձումյանի «Աստղագոյացման հարցերի վերաբերյալ Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանի աշխատանքների արդյունքները» զեկուցումը, ակադեմիայի իսկական անդամների մի շարք գիտական զեկուցումներ։

Ընդհանուր ժողովը գաղտնի քվեարկությամբ ընտրեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ և հաստատեց թղթակից-անդամներին։

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ Դերենիկ Կարապետի Դեմիրճյանը, Բիոլոգիական գիտությունների գծով՝ Արմենակ Լևոնի Մնջոյանը։

Ընդհանուր ժողովը թղթակից-անդամներ հաստատեց Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ Սուրեն Տիգրանի Երեմյանին, Էդուարդ Բագրատի Աղայանին, Ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի գծով՝ Սերգեյ Նիկիտի Մերգելյանին, Մխիթար Մկրտչի Ջրբաշյանին, Տեխնիկական գիտությունների բաժանմունքի գծով՝ Մարտին Վահանի Կասյանին, Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գծով՝ Գեղամ Խաչատուրի Աղաջանյանին։



# ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հայաստանում հինգ օր հյուր էր անգլիական բանվորական դելեգացիան։ Դելեգացիայի անդամները լայն հնարավորություն ստացան ծանոթանալու ռեսպուբլիկայի աշխատավորների կյանքին։*

*Երևանից մեկնելուց առաջ ՀՀԳ-ի թղթակիցը զրույց ունեցավ դելեգացիայի քարտուղար պարոն Կրիստոֆեր Էդվին Լոուի հետ, որը հայտարարեց.*

*— Մենք Հայաստան ժամանեցինք ոչ պատահականորեն։ Մենք գիտեինք, որ դեռևս մոտ անցյալում այդ երկիրը ցարական Ռուսաստանի կիսագաղութն էր։ Մենք լսել էինք, թե պատմական կարճ ժամանակամիջոցում ինչպես արտասովոր կերպով զարգացել, աճել են Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը, կուլտուրան։ Մեզ համար անչափ հետաքրքրական էր սեփական աչքերով տեսնել, իմանալ, թե ինչպես է ապրում, աշխատում, նոր կյանք կառուցում այդ հին երկրի ժողովուրդը, և մենք ձեռնարկեցինք այս ուղևորությունը։*

*Մենք տեսանք հիանալի ներկա և մեծ ապագա ունեցող մի երկիր։ Գլխավոր տպավորությունն այն է, որ մարդիկ այստեղ կլանված են խաղաղ, ստեղծարար աշխատանքով։ Ռեսպուբլիկան շարունակում է աճել, կառուցվել։ Այդ իմաստով ամենից առաջ ցանկանում եմ խոսել Երևանի մասին։ Դելեգացիային ուղեկցող մարդիկ մեզ ասում էին, ցույց տալով դեռևս մնացած մի հարկանի, հարթ տանիքներ ունեցող տնակները, որ տակավին երեք տասնամյակ առաջ ամբողջ քաղաքը այդպիսին էր։ Բայց պարզապես դժվար է հավատալ դրան, երբ տեսնում ես Լենինի անվան հոյակապ հրապարակը, մի հրապարակ, որը պատիվ կբերեր ամեն մի երկրի մայրաքաղաքի։ Այդ անցյալին դժվար է հավատալ, երբ անցնում ես լայն մագիստրալներով՝ եզերված գեղեցիկ շենքերով։ Կառուցող ճարտարապետները լայնորեն օգտվում են կլասիկ ժառանգության լավագույն նմուշներից, իրենց գեղեցկությամբ հիացմունք պատճառող շենքերի նախագծման և կառուցման գործում կիրառելով հնագույն ճարտարապետության արժեքավոր հուշարձանների գծերը։*

*— Երբ դելեգացիան այցելեց Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը,— այնուհետև ասաց պարոն Լոուն,— մենք զարմացանք, թե ինչպես այս, դեռևս մոտ անցյալում հետամնաց, ագրարային երկրում արագորեն ստեղծվել է ծանր արդյունաբերություն, թե ինչպես այստեղ հաջողությամբ լուծված է որակյալ մասնագետների պատրաստման պրոբլեմը։*

*Ընդհանրապես ամեն բանից երևում է, որ հայ ժողովուրդը միջոցներ չի խնայում երիտասարդ սերնդի ուսուցման համար։ Հազարավոր պատանիներ և աղջիկներ կարող են այստեղ ստանալ մասնագիտական կրթություն։ Մեզանում՝ Անգլիայում, բարձրագույն կրթություն ստանալու համար մեծ գումարներ են պետք։*

*Մենք եղանք շինարարական բանվորներից մեկի բնակարանում։ Նա ապրում է նոր տան մեջ, բարեկարգ բնակարանում։ Նրա տղան սովորում է մեխանիկ դառնալու, ուսումնասիրում է անգլերենը։ Պետք էր տեսնել, թե ինչպես էին վառվում այդ երիտասարդի աչքերը, թե ինչպես էր նա հպարտանում իր ապագա մասնագիտությամբ, որպեսզի հասկանայիք, թե ինչ երջանկություն է ձեռք բերել այդ ընտանիքը, որը, նրա ղեկավարի պատմածների համաձայն, մինչև ռևոլյուցիան ոչ միայն երազել չէր կարող երեխաներից որևէ մեկին կրթություն տալու*

մասին, այլև չունեն մարդկային կյանքի տարրական հարմարություններ։

Դելեգացիայի անդամների վրա հսկայական տպավորություն թողեց նրա այցելությունը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիա։ Հենց այն փաստը, որ ակադեմիայի պրեզիդենտը հանդիսանում է աստղագետների միջազգային մեծ կազմակերպության վիցե-պրեզիդենտը, վկայում է հայ գիտնականների հսկայական հաջողությունների մասին, Հայաստանում կուլտուրայի և գիտության չտեսնված աճի մասին։ Մեկ հանգամանք ևս, որը, ինձ թվում է,

Մեր դելեգացիային սրտագին, հյուրընկալորեն դիմավորեցին Հոկտեմբերյանի շրջանի Թամբակաշատ գյուղի գյուղացիները։ Մենք համոզվեցինք, թե որքան բեղմնավոր է նրանց աշխատանքը կոլեկտիվ տնտեսության մեջ։ Կոլտնտեսության էկոնոմիկայի ամրության մասին ամենից լավագույն կերպով վկայում է գյուղատնտեսական արտելի անդամների տներում եղած առատությունը։

Իր գեղեցկությամբ և հոյակապությամբ ապշեցնող համերգային մեծ դահլիճում մենք ներկա գտնվեցինք պրոֆմիութենական ակ-



Անգլիական բանվորական պատվիրակությունը Պետական օպերայի առաջ

նույնպես խիստ հատկանշական է, դա երիտասարդ գիտնական Ս. Մերգելյանի ընտրությունն է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, որը դեռ 30 տարեկան էլ չկա։ Դա նույնպես ռեսպուբլիկայի աճի խորհրդանիշն է։

Պիոներների պալատ կատարած մեր այցելությունը հնարավորություն տվեց ծանոթանալու երեխաների կյանքին ու դաստիարակությանը։ Մենք տեսանք ուրախ, առողջ տղաներ և աղջիկներ, տեսանք նկարներ, քանդակներ, ամեն տեսակ մակետներ, որ նրանց փոքրիկ ձեռքերով կերտվել են մեծ վարպետությամբ։

տիվի բազմամարդ ժողովում, նվիրված Պրոֆմիությունների երրորդ համաշխարհային կոնգրեսի արդյունքներին։ Սովետական Հայաստանի, ինչպես նաև ամբողջ սովետական երկրի կյանքում պրոֆմիությունների կարևոր դերը ակնհայտ է։ Մեզանում, Անգլիայում, պրոֆմիությունները ամբողջ ուշադրությունը դարձնում են աշխատանքի պայմանների բարելավման, աշխատավարձի բարձրացման համար մղվող պայքարին։ ՍՍՌՄ-ում պրոֆմիությունները մեծ ուշադրություն են նվիրում բանվորների և ծառայողների համար աշխատանքի լավագույն պայմաններ ստեղծելու գործին, ինչպես նաև

հնարավորություն ունեն լայնորեն զբաղվելու կուլտուրական և սպորտային աշխատանքով։ Այստեղ պրոֆմիութենական շարժմանը մասնակցում են միլիոնավոր ու միլիոնավոր աշխատավորներ։

Զրույցի վերջում պարոն Լոուն շնորհակալություն հայտնեց՝ հայ ժողովրդի կյանքին ծանոթանալու համար դելեգացիային տրված հնարավորության առթիվ և նոր հաջողություններ ցանկացավ Սովետական Հայաստանի աշխատավորներին։

(ՀՀԳ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 18 նոյեմբերի 1953 թ.)

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՎԵԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Օրերս Երևանից Մոսկվա մեկնեցին խաղաղության պաշտպանության Շվեդական ազգային կոմիտեի դելեգացիայի անդամները։ Հյուրերը մեր ռեսպուբլիկայում անցկացրին չորս օր։ Նրանք հետաքրքրվեցին Երևանում կատարվող բնակարանային մեծ շինարարությամբ, Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքով ու կոլտնտեսությունների կյանքով, գիտա-հետազոտական հիմնարկների գործունեությամբ, ժողովրդական կրթության գործի դրվածքով, արվեստի զարգացմամբ։*

*Երևանից մեկնելուց առաջ դելեգացիայի ղեկավար, Ստոկհոլմի կառուցող բանվորների պրոֆմիութենական կազմակերպության ականավոր գործիչ պարոն Յալմար Վեռները ՀՀԳ-ի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ հայտարարեց.*

*— Մեր ժամանման կարևորագույն նպատակներից մեկն էր օբյեկտիվորեն ծանոթանալ Սովետական Հայաստանի աշխատավորների կյանքին, խաղաղության համար մղվող նրանց պայքարին։ Մենք Հայաստանում եղանք կարճ ժամանակ, բայց շատ բան տեսանք։ Մենք այժմ կարող ենք մեր սեփական աչքերով տեսած փաստերի վրա հիմնվելով մերկացնել խաղաղության թշնամիների պրոպագանդան, որոնք նողկալի զրպարտություն են տարածում Սովետական Միության հասցեին։*

*Շփվելով Սովետական Հայաստանի աշխատավորների հետ, մենք հասկացանք, որ նրանց համար չկա ավելի նվիրական բառ, քան «խաղաղություն» բառը։ Հայ ժողովուրդը զբաղված է իր խաղաղ շինարարությամբ։ Եվ մենք շատ ուրախ ենք, որ մեզ, հյուսիսի բնակիչներիս, հաջողվեց կենդանի ու բարեկամական շփում հաստատել հարավային լեռների աշխատասեր բնակիչների հետ, որոնք մեզ ուրախացրին խաղաղության գործի նկատմամբ իրենց համակրանքով և ապշեցրին իրենց հյուրընկալությամբ։*

*Մեր դելեգացիայի կազմում կային մեծ թվով կառուցող բանվորներ, ուստի բնականաբար մեզ հետաքրքրում էր Հայկական ռեսպուբլիկայի մայրաքաղաքում կատարվող շինարարությունը։*

*Մենք միահամուռ կերպով Երևանում կատարվող շինարարական աշխատանքը համարում ենք բացառիկ ազնիվ աշխատանք։ Քաղաքը լավ պլանավորված է և հիանալի տեսք ունի բլուրների մեջ։ Այստեղ կառուցվում են մեծ թվով շենքեր, կառուցվում են գեղեցիկ, իրենց մասշտաբներով և հարդարման կատարելությամբ հիանալի շենքեր։ Հրաբխային տուֆը հիանալի շինանյութ է, որը կարող է շարժել ամեն մի այլ քաղաքի շինարարների նախանձը, երկրագնդի որ անկյունում էլ գտնվելու լինի այն։*

*Մեզ բախտ վիճակվեց լինել Երևանի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում, ծանոթանալ արտադրության կազմակերպմանը, բանվորների աշխատանքին ու կենցաղին։ Մենք տեսանք նաև բանվորական ճաշարաններ, ակումբներ։ Արևմտյան Եվրոպայի պայմաններում բանվորական ժողովներ անցկացնելու բարդ պրոբլեմը Սովետական Միությունում և մասնավորապես Հայաստանում հրաշալի կերպով լուծվում է բարեկարգ, համապատասխան ակումբների առկայությամբ, որոնք դրվել են պրոֆմիութենական և հասարակական զանազան կազմակերպությունների տրամադրության տակ։*

*Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայկական ռեսպուբլիկայի գինու-կոնյակի արդյունաբերության արտադրանքը։ Այն ոչնչով չի զիջում Ֆրանսիայի և Պորտուգալիայի հռչակ ստացած խմիչքներին, որոնք բերվում են մեզ մոտ՝ Շվեդիա, և առհասարակ բարձր է գնահատվում միջազգային շուկայում։*

*Արտաշատի շրջանի Փարիզյան կոմունայի անվան կոլտնտեսությունը շատ ուժեղ տպավորություն գործեց դելեգացիայի բոլոր մասնակիցների վրա։ Պետք է ասել, որ դա առաջին կոլտնտեսությունն էր, որ մեր կյանքում տեսանք սեփական աչքերով։ Մինչ այդ մենք կոլտնտեսությունների և կոլտնտեսային շինարարության մասին միայն լսել էինք։ Այդ կոլտնտեսությունում գյուղացիները բամբակ*

և խաղող են մշակում՝ տարեցտարի հասնելով բերքատվության զգալի ավելացման։ Հատկապես ուշագրավ է, որ Սովետական Հայաստանում գյուղացիների աշխատանքը զուգակցվում է գիտական մոտեցման հետ։ Հաջողությունը բացատրվում է ոչ միայն նրանով, որ կոլտնտեսությանը օգնում են մասնագետները։ Կոլտնտեսականներն իրենք են համառորեն տիրապետում գիտությանը։ Ահա թե ինչն է հիացնում։

Մեզ հետաքրքրում էր Սովետական Հայաստանի գիտական հիմնարկների գործունեությունը և մեզ հնարավորություն տրվեց գոհացնելու մեր հետաքրքրությունը։ Մեր դելեգացիայի մասնակից պրոֆեսոր-գեոլոգ Գուննար Բեսկովը հանդիպում ունեցավ Հայաստանի գեոլոգների հետ և հետաքրքրական շատ տեղեկություններ ստացավ, որոնք վկայում են ընդերքի հետազոտողների ստեղծագործական մեծ աշխատանքի մասին։ Անչափ բովանդակալից էր մեր դելեգացիայի այցելությունը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ջրաէներգետիկ գիտահետազոտական ինստիտուտ։ Մենք տեսանք հիանալի մոդելներ, հասկացանք, թե Սովետական Հայաստանում ինչպիսի թափով են լուծվում գյուղատնտեսությունը ոռոգման ջրով և արդյունաբերությունը էլեկտրաէներգիայով ապահովելու պրոբլեմները։

Երևանի Պիոներների պալատ, Շահումյանի անվան իգական միջնակարգ դպրոց և ծննդատներից մեկը մեր կատարած այցելությունը օգնեց պատկերացում ստանալու այն մեծ հոգատարության մասին, որով Հայաստանում շրջապատված են երեխաները, օրորոցից սկսած մինչև հասակ առնելը։

Մենք մեծ բավականությամբ ծանոթացանք հայ ժողովրդի օպերային և երաժշտական արվեստի նմուշներին։ Մեկ երեկոյի ընթացքում մենք եղանք Օպերայի և բալետի թատրոնում և Հայկական ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում։ Եվ ահա թե ինչը ապշեցրեց մեզ. պարզվում է, որ այնպիսի մի քաղաք, որպիսին է Երևանը, մեկ երեկոյում կարող է միաժամանակ ծայրեծայր զբաղեցնել երկու հսկայական հանդիսասրահներ։ Իսկ, բացի դրանից, չէ՞ որ կան նաև այլ թատրոններ, կրկես, կինոդահլիճներ. և դրանք միշտ էլ լեփ-լեցուն են հանդիսատեսներով։ Դեպի արվեստը այդպիսի հետաքրքրություն չի կարելի տեսնել բուրժուական Եվրոպայի և ոչ մի վայրում։

— Խորին գոհունակության զգացմունքով ենք մենք հիշում,— զրույցի վերջում ասաց դելեգացիայի ղեկավարը,— խաղաղության պաշտպանության Հայկական կոմիտեի նախագահ, սովետական ականավոր աստրոֆիզիկոս, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի հետ ունեցած մեր հանդիպումը։ Պրեզիդենտը մեզ տեղեկացրեց հայ ժողովրդի պատմությանը, խաղաղության պաշտպանությանն ուղղված նրա ջանքերի մասին։ Մենք մեր հերթին հաղորդեցինք Շվեդիայում խաղաղության կողմնակիցների աշխատանքի մասին և պատմեցինք մեր երկրում ժողովրդական կրթության գործի դրվածքի մասին։

Մեկնելով Սովետական Հայաստանից, մենք շնորհակալություն ենք հայտնում նրա ժողովրդին՝ հյուրընկալության համար, և նրան հաջողություններ ցանկանում խաղաղ շինարարության ասպարեզում, խաղաղության համար այն պայքարում, որ մղում են միլիոնավոր ազնիվ մարդիկ երկրագնդի բոլոր անկյուններում։

***

Խաղաղության պաշտպանության շվեդական ազգային կոմիտեի դելեգացիայի պատվին Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերությունում կազմակերպվեց ընդունելություն, որտեղ ներկա էին Երևանի հասարակայնության ներկայացուցիչներ։

(ՀԼԳ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 19 նոյեմբերի 1953 թ.)

## ԻՏԱԼԻԱՅԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեք օր Հայաստանում հյուր էր Իտալիայի կուլտուրայի աշխատողների և «Իտալիա—ՍՍՌՄ» ընկերության ղեկավար գործիչների դելեգացիան։

Հայաստանում եղած ժամանակ իտալացի հյուրերը մեծ հետաքրքրությամբ ծանոթացան ռեսպուբլիկայի աշխատավորների կյանքին։

Դելեգացիայի անդամները դիտեցին Երևանի տեսարժան վայրերը։ Նրանք եղան ժամացույցի գործարանում, գինու կոմբինատում և կուլտուրական շատ հիմնարկներում։ Պատկերասրահում դիտեցին ռուսական, հայկական և արևմտաեվրոպական գեղանկարչության սրահները։ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրո-

նում լսեցին «Անուշ» օպերան և դիտեցին «Խանդութ» բալետը։ Ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում ներկա գտնվեցին Հայկական երգի ու պարի պետական վաստակավոր անսամբլի ելույթին։

Իտալացի հյուրերը ուղևորվեցին դեպի Սևանա լճի ափերը, այցելեցին էջմիածին քաղաքը, ինչպես նաև Արտաշատի շրջանի Արևշատ գյուղի Միկոյանի անվան կոլտնտեսությունը։

րեն պատմենք, թե ինչ տեսանք Սովետական Միությունում և, մասնավորապես, Հայաստանում։ Դա անկասկած կծառայի մեր երկրում ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործին։

Քաղաքին ծանոթանալու առաջին իսկ պահից մեր ստացած հաճելի տպավորությունը իմ մեջ միշտ մնաց Հայաստանում եղած ամբողջ ժամանակամիջոցում։ Ես և իմ ընկերները համոզվեցինք, որ Հայաստանը



Իտալական պատվիրակությունը էջմիածնում

Նրանից մեկնելուց առաջ դելեգացիայի անդամ, իտալական նշանավոր հասարակական գործիչ Օնդեր Բոնին ՀԼԳ-ի թղթակցին հաղորդեց Հայաստանում ստացած իրենց տպավորությունները։

— Սովետական Միություն, ինչպես նաև ձեր ռեսպուբլիկա կատարած մեր այցելության նպատակն է մանրամասնորեն ծանոթանալ նրա ժողովրդի կյանքին, սեփական աչքով տեսնել այն ամենը, ինչի մասին մենք առաջ միայն լսել կարող էինք։ Լինելով Սովետական Միության հետ բարեկամության ամրապնդման իտալական ընկերության անդամներ, մենք մեր այցելությունից կօգտվենք, որպեսզի մեր երկրում մանրամասնո-

վարգացած էկոնոմիկա և բարձր կուլտուրա ունեցող մի երկիր է։

Մեզ հնարավորություն տրվեց լինելու ժամացույցի գործարանում։ Այստեղ մեզ շատ բան զարմացրեց։ Առաջին հերթին ցանկանում եմ խոսել այն պարզ, ընկերական հարաբերությունների, փոխադարձ ըմբռնման մասին, որոնք այստեղ շաղկապում են մարդկանց՝ ղեկավարներին, ինժեներներին ու բանվորներին։ Ինժեները, դիրեկտորը հպարտությամբ են խոսում բանվորի աշխատանքի, նրա հաջողությունների, նորմաների գերակատարման մասին, և նրանք բոլորը միասին սիրով են խոսում գործարանի մասին, որտեղ աշխատում են իրենք։ Մեզ համար

պարզ դարձավ, որ այդ կերպ աշխատելով կարելի է մեծ գործեր կատարել։ Երկրորդ բանը, որ աչքի է զարնում, դա ձեր ձեռնարկությունների աշխատանքային պայմաններն են։ Այստեղ մաքուր է, տաք ու լուսավոր։

Մենք ուղևորվեցինք դեպի Սևանա լիճը, դիտեցինք Հիդրոտեխնիկական հիանալի մի կառուցվածք՝ ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը, որը, ինչպես մենք իմացանք, հզոր էներգետիկ կասկադի մի մասն է, որ փորձում է լեռնային բարձրադիր լճի ջրերի ուժով։ Այդպիսի կատարելագործված սարքավորում կարող է ունենալ միայն առաջավոր, բարձր զարգացած տեխնիկա ու գիտություն ունեցող երկիրը։

Մենք մեծ հետաքրքրությամբ դիտեցինք հայկական հին ճարտարապետության հուշարձանները Էջմիածնում, ինչպես նաև Զվարթնոց տաճարը։

Մեզ համար պարզ դարձավ, որ Հայաստանը ոչ միայն զարգացած արդյունաբերության, այլև հարուստ, հին կուլտուրա ունեցող երկիր է։

Հայաստանում եղած ժամանակ մեր հիշողության մեջ անջնջելի տպավորություն թողեց մեր ուղևորությունը դեպի Արևշատ գյուղի կոլտնտեսությունը։ Տեղի բնակիչները ջերմ ու սրտագին ընդունելություն ցույց տվեցին մեզ։ Այցելելով այդ գյուղը, ես համոզվեցի, որ կոլեկտիվ տնտեսության մեջ, որի տարբերիչ գծերն են բարձր կազմակերպվածությունը և աշխատանքի մեքենայացումը, տնտեսության վարումը իրականացվում է դեմոկրատիայի հիման վրա։ Մարդիկ այստեղ աշխատում են ոչ միայն իրենց համար, նրանց շահերը իրենց կոլտնտեսության սահմաններից շատ հեռու են գնում, միաձուլվելով ռեսպուբլիկայի և ամբողջ Սովետական Միության շահերին։

Կոլտնտեսություններում մենք այնպիսի առատություն տեսանք, որ ի սրտե կցանկանար յուրաքանչյուր գյուղացի։

Այստեղ մենք բախտ ունեցանք անմիջականորեն տեսնել հայկական ժողովրդական ստեղծագործության պատճառած բավականությունը։ Մենք հիացած ենք հայկական ազգային պարերի և երգերի ինքնատիպությամբ ու ներդաշնակությամբ։ Մենք համոզվեցինք, թե երաժշտական ինչպիսի մեծ ընդունակություններ ունեն աշխատավոր հասարակ մարդիկ։

Մենք եղանք այն համերգում, ուր հանդես եկավ Հայաստանում լայն ժողովրդականություն վայելող պրոֆեսիոնալ կատարողական կոլեկտիվը՝ երգի ու պարի անսամբլը։ Ես հսկայական բավականությամբ լսեցի այդ համերգը և այն ավարտվելուց հետո իմ մեջ մնաց խոր ու հաճելի մի զգացմունք՝ ձեզանում արվեստը պատկանում է ժողովրդին։

Վերը ես խոսեցի այն մեծ հոգատարության մասին, որով Սովետական Հայաստանում շրջապատված են մարդիկ, բայց ես պետք է նորից վերադառնամ դրան, վերհիշելով ծննդատանն կատարած մեր այցելությունը։ Հաճելի էր տեսնել, որ այնտեղ կար բոլոր այն լավագույնն ու նորը, որ ունի ժամանակակից բժշկականությունը, որպեսզի երեխաները իրենց ծննդյան առաջին իսկ օրից առողջ լինեն։

Ձեր երկրում մարդու նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը, ինչպես ես համոզվեցի, ուղեկցում է նրան իր ամբողջ կյանքում։ Անչափ հաճելի է զգալ այդ։ Այստեղ հիանալի շատ ժամեր անցկացրինք մենք։ Գոհունակության զգացումը մեծ էր հատկապես այն գիտակցությունից, որ որտեղ էլ մենք եղանք՝ գործարաններում, բանվորների մոտ, կոլտնտեսություններում գյուղացիների մոտ, բժիշկների, արտիստների թե ուսանողների մոտ, ամենուրեք մարդկանց մեջ մենք տեսանք անհաղթահարելի ձգտում դեպի խաղաղությունը, բուռն ցանկություն՝ ամրապնդելու բարեկամական կապերը աշխարհի բոլոր ժողովուրդների հետ։

Մեկնելով Հայաստանից, ես դելեգացիայի անդամների անունից խորին շնորհակալություն եմ հայտնում այն հյուրընկալության և բարեկամական ընդունելության համար, որ մեզ ցույց տվեց ձեր ռեսպուբլիկայում հյուր եղած ամբողջ ժամանակամիջոցում։

(ՀՊ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 25 նոյեմբերի 1953 թ.)

# ԳԵՐՄԱՆԱ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոյեմբերի 20-ից մինչև 25-ը Հայաստանում հյուր էր Գերմանա-սովետական բարեկամության ընկերության դելեգացիան։ Նրա կազմում կային հասարակական գործիչներ, գիտության, արվեստի ներկայացուցիչներ, ժուռնալիստներ, արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարներ և ինժեներներ։

Հյուրերին լայն հնարավորություն տրվեց ծանոթանալու Սովետական Հայաստանի աշխատավորների կյանքին։ Երևանի գլխավոր ճարտարապետ Գ. Աղաբաբյանի ուղեկցու-

թյամբ դելեգացիան ուղևորություններ կատարեց քաղաքում, դիտեց ռեսպուբլիկայի մայրաքաղաքի տեսարժան վայրերը, նորակառույցները։ Դելեգացիայի անդամները եղան էլեկտրամեքենաշինական, կաշվի գործարաններում, «Արարատ» տրեստի գինու գործարանում, մետաքսագործվածքային ֆաբրիկայում, այցելեցին Պետական պատկերասրահը և Մատենադարանը։ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում հյուրերը լսեցին Հայ-

ժամանակ հաղորդեցին Հայաստանում ստացած իրենց տպավորությունները։

— Իհարկե, հեշտ չէ համառոտակի պատմել այն անջնջելի տպավորությունների մասին, որոնցով լի էր Սովետական Հայաստան կատարած մեր այցելությունը,— ասաց դելեգացիայի ղեկավար պարոն Ադոլֆ Ցեբրերը։

Մենք այստեղ քիչ ժամանակ անցկացրինք՝ ընդամենը հինգ օր, բայց շատ բան տեսանք։ Հայաստանի, այդ հնագույն երկրի,



Գերմանական պատվիրակությունը Զվարթնոցում

կական կլասիկ «Անուշ» օպերան, Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում ներկա գտնվեցին Հայկական երգի ու պարի վաստակավոր անսամբլի համերգին։

Դելեգացիայի անդամները մասնակցեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Պետական համալսարանի համատեղ գիտական նստային ու երեկոյին՝ նվիրված գերմանա-սովետական բարեկամության միամսյակին։ Գերմանացի հյուրերը մեկնեցին Արտաշատի շրջանի Դվին գյուղի կոլտնտեսությունը, Արզնի կուրորտը, ինչպես նաև Էջմիածին քաղաքը և Զվարթնոցը, որտեղ ծանոթացան պատմական հուշարձաններին։

Մեկնելուց առաջ դելեգացիայի անդամները ՀՀԳ-ի թղթակցի հետ ունեցած զրույցի

ժողովուրդը, որը իր հետև թողել է օտարերկրյա ճնշման ծանր հարյուրամյակներ, վերջապես իրականություն է դարձրել իր երազանքը։ Նա ազատ ու ինքնուրույն է դարձել, ընդմիշտ իր ճակատագիրը կապելով իր ազատագրողի՝ ռուս ժողովրդի հետ։ Սովետական իշխանության շնորհիվ վերածնված հայ ժողովրդի ամբողջ այսօրվա կյանքը լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի վառ վկայությունն է։

Մեզ ապշեցրին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության աճի տեմպերը, այդ աճի խորապես կշռադատական պլանայնությունը։ Բայց մեզ ամենից ավելի մեծ հիացմունք պատճառեց Երևանում կատարվող շինարարության թափը։ Այդ ամենը կառուցվում է մարդու բարօրության համար։

Նոր կյանքը ընդգրկել է ոչ միայն քաղաքները, այլև Հայաստանի գյուղերը։ Հետաքրքրական շատ բան տեսանք մենք Դվին գյուղի կոլտնտեսությունում։ Առաջին աչքի զարնող բանը այստեղ գյուղատնտեսական պրոցեսների մեքենայացումն էր, կոլտնտեսականների աշխատանքը հեշտացնելու նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը։ Նրանք հպարտությամբ պատմեցին մեզ իրենց աշխատանքի մասին, այն մասին, թե ինչպես, հենվելով գիտության նվաճումներին, նրանք վերափոխում են բնությունը, աճեցնում գյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերք։

«Խաղաղություն և բարեկամություն»—այս նվիրական բառերը շուրթերին մեզ դիմավորեց կոլտնտեսության նախագահը։ Յուրաքանչյուր ազնիվ մարդու համար այդ սրբազան բառերը Հայաստանում լսեցինք ամենուրեք։

Մենք շփում ունեցանք բազմաթիվ մարդկանց հետ։ Նրանք մեզ շրջապատեցին հյուրասիրական հոգատարությամբ և ուշադրությամբ։ Մեր ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող այդ հուզիչ բարեկամությունը մեզ ոգեշնչում, նոր ուժեր է տալիս պայքարելու համար միասնական, ազատ, անկախ և դեմոկրատական Գերմանիայի։

Քայլ առ քայլ ճանաչելով Հայաստանը, դելեգացիայի անդամները ուսանելի, օգտակար շատ բան գտան գերմանական ժողովրդի՝ նոր Գերմանիա կերտողի համար։ Վերադառնալով Հայրենիք, մենք մեր հայրենակիցներին մանրամասնորեն կպատմենք այն հոյակապ նվաճումների մասին, որ հայ ժողովուրդը ձեռք է բերել իր նյութական և հոգևոր կյանքում։

Սրտագին հյուրընկալությունը, որ հայ ժողովրդի բնորոշ գիծն է, մեզ հնարավորություն տվեց լինել սոցիալիստական ինդուստրիայի մի քանի ձեռնարկություններում,— ասաց դելեգացիայի անդամ, Բրանդենբուրգի պողպատա-գլանվածքային գործարանի դիրեկտոր պարոն Պետեր Գյոտցելը։— Երևանի կաշվի գործարանի դիրեկտորը մեզ պատմեց, որ մինչև ռևոլյուցիան այդ ձեռնարկությունը պատկանում էր կապիտալիստների և ոչնչով չէր տարբերվում տնայնագործական արհեստանոցից։ Այստեղ դաժանորեն շահագործվում էր բանվորների աշխատանքը։ Կաշեգործները, մինչև գոտկատեղը ջրի մեջ, ոտքերով մշակում էին կաշին։

Այժմ Երևանի կաշվի գործարանը լիովին ժամանակակից, առաջավոր տեխնիկայով լավ հագեցված մի ձեռնարկություն է։ Թե՛ այստեղ, թե՛ էլեկտրամեքենաշինական գործարանում աչքի է զարնում խելացի պլանավորումը, աշխատանքի լավ կազմակերպվածությունը, արտադրության ռիթմիկ աշխատանքը։

— Ես ցանկանում եմ նշել,— այնուհետև հայտարարեց պարոն Պետեր Գյոտցելը,— բանվորների կուլտուրական բարձր մակարդակը։ Մեզ բավականություն և զարմանք պատճառեց մի փաստ։ Բանվորական ակումբների գրադարաններում մենք գտանք Շիլլերի, ինչպես նաև մեր ժամանակակից գրողների՝ Աննա Զեգերսի, Յոհաննես Բեխերի գրքերը։ Շատ բանվորներ լավ ծանոթ են գերմանական գրականությանը։ Գերմանական գրականության կլասիկների գրքեր մենք տեսանք նաև Դվին գյուղի կոլտնտեսային գրադարանում։

— Մենք Հայաստանում եղանք գերմանա-սովետական բարեկամության միամսյակի օրերին,— ասաց ժուռնալիստ պարոն Ֆրանց Ֆելֆինգը։— Միամսյակին նվիրված գիտական սեսիան, սովետա-գերմանական բարեկամության երեկոն, Պատկերասրահում կազմակերպված գերմանական կերպարվեստի գործերի ցուցահանդեսը, որ այցելեցինք մենք, և բազմաթիվ այլ միջոցառումներ վկայում են, թե ինչպես հայ ժողովուրդը սովետական երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին բարձր է գնահատում գերմանա-սովետական բարեկամությունը, թե ինչպես մեծ նշանակություն է տալիս նա այդ բարեկամությանն ամեն կերպ ամրապնդելու գործին։

— Մենք Հայաստանից մեկնում ենք,— զրույցի վերջում ասաց պարոն Ադոլֆ Ֆերբերը,— հայ ժողովրդի նկատմամբ խորին հարգանքի զգացմունքով, բարեկամական, սրտագին ընդունելության համար խորին շնորհակալության զգացմունքով։ Մենք հայ ժողովրդին մեծ հաջողություններ ենք ցանկանում կոմունիզմի կառուցման գործում, որ իրականացվում է Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ։

(ՀՀԳ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 28 նոյեմբերի 1953 թ.)

# ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

*ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 36-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ.— Սովետական Հայաստանի աշխատավորները Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 36-րդ տարեդարձը նշեցին մեծ խանդավառությամբ։ Ամենուրեք, քաղաքներում և գյուղերում, տեղի ունեցան աշխատավորների հանդիսավոր ժողովներ, երեկույթներ, դասախոսություններ, տոնահանդեսներ։ Արդյունաբերական մի շարք ձեռնարկությունների աշխատողներ համաժողովրդական տոնը դիմավորեցին արտադրական նոր հաջողություններով՝ կատարելով իրենց տարեկան ծրագրերը։*

*Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում տեղի ունեցավ Երևանի քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը՝ մասնակցությամբ հիմնարկ-ձեռնարկությունների, գիտական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, կառավարության անդամների։ Նիստում լսվեց ընդարձակ զեկուցում Սովետական Միության տնտեսական և կուլտուրական նվաճումների մասին, որից հետո կայացավ ճոխ համերգ՝ մասնակցությամբ մայրաքաղաքի լավագույն արտիստական ուժերի։*

*ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Հայաստանի ոսկեզօծ աշունը առանձնել է իր իրավունքները։ Դաշտերում և այգիներում օրնիբուն չի դադարում ջանադիր աշխատանքը։ Հայ գյուղացին հավաքում է իր արդար աշխատանքի պտուղները։ Հանրային շտեմարանները լցվում են ընտիր ցորենով, մառանները՝ փրփրադեզ գինով, գործարանային պահեստները՝ բամբակի, ծխախոտի հումքով, շաքարի ճակնդեղով։*

*Այս տարի առանձնապես հարուստ էր գարնանացան հացահատիկների բերքը՝ հատկապես լեռնային շրջաններում։ Պետական մեքենա-տրակտորային կայանների լայն աջակցության շնորհիվ Զանգեզուրի, Սևանի ավազանի, Լոռվա բարձրավանդակի, Կոտայքի և այլ հացահատիկային շրջանների կոլտնտեսությունները կարողացան ժամանակին հավաքել բերքը և ձեռնամուխ լինել աշնանացանին։*

*Հիանալի բերք են աճեցրել Հայաստանի ծխախոտագործները։ Շամշադինի, Իջևանի, Նոր Բայազետի, Ղափանի, Բասարգեչարի շրջանների շատ կոլտնտեսություններ հեկտարից ստանում են գրեթե երկու անգամ ավելի շատ բերք քան անցյալ տարի։ Մոտավոր հաշիվներով ամբողջ ռեսպուբլիկայում ծխախոտի բերքը 50—60 տոկոսով կգերազանցի անցյալ տարվա բերքը։*

*Առատ է նաև խաղողի և բամբակի բերքը Արարատյան դաշտավայրում։ Ամենուրեք սկսվել է այգեկութը և բամբակի ջոկը։ Բարենպաստ եղանակները թույլ են տալիս այդ աշխատանքները առաջ տանել հաջողությամբ։ Ենթադրվում է յուրաքանչյուր հեկտարից հավաքել ոչ պակաս 28—30 ցենտներ բամբակ։*

*Անցյալ տարվա համեմատությամբ շատ ավելի բարձր է շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, հատապտուղների, բանջարեղենի բերքը։*

*ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Երևանում, Նկարիչների տանը, բացվել է նկարիչների ցուցահանդես, ուր ներկայացված են Երևանի, Լենինականի, Կիրովականի և մյուս քաղաքների թատրոնների նոր բեմադրություններին վերաբերող բեմական դեկորացիաների և հանդերձների շուրջ 260 տարբեր նմուշներ։ Ցուցահանդեսին մասնակցում են Սովետական Հայաստանի 15 թատերական նկարիչներ, որոնց մեծ մասը վերջին տարիներին ավարտել է Երևանի նկարչական-թատերական ինստիտուտը։ Ցուցահանդեսը հետաքրքրությամբ դիտվում է այցելուների կողմից։*

*ՆՈՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ.— Երևանում, Աբովյան փողոցի վրա, նորակառույց մի մեծ շենքի առաջին հարկում բացվել է նոր գրավաճառանոց, որն ամենամեծն է ռեսպուբլիկայում։ Այստեղ վաճառքի է հանված շուրջ 120.000 օրինակ գեղարվեստական, քաղաքական, բժշկական, մանկագիտական գրականություն և դասագրքեր։*

*Այժմ Սովետական Հայաստանի բոլոր շրջանային կենտրոններում, ինչպես նաև մի քանի տասնյակ խոշոր գյուղերում կան հատուկ գրավաճառանոցներ։*

*ՄԱՐԳԱՐԻՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ.— Երևանում սկսեց աշխատել մարգարինի նորակառույց գործարանը։ Մարգարինը բուսական յուղերի, կենդանական ճարպի և կաթի խառնուրդից պատրաստվող սննդարար ճարպանյութ է։ Գործարանը, որը առաջինն է Հայաստանում, տարեկան կտա ավելի քան 3.000 տոննա արտադրանք, որի զգալի մասը կարտահանվի ռեսպուբլիկայի սահմաններից դուրս։ Գործարանի կառուցման վրա ծախսված է մոտ 5.000.000 ռուբլի։ Այն կահավորված է նորագույն կատարելագործված մեքենաներով։*

*ՆՈՐ ԿՈՒՐՈՐՏ.— Հայաստանը հարուստ է հանքային բուժիչ ջրերի աղբյուրներով։ Այդպիսի աղբյուրների թիվը հասնում է մի քանի հարյուրի։ Դրանցից մի քանիսը գտնվում են Երևանից 86 կիլոմետր հեռավորության վրա, Ախտայի շրջանում, Հանքավանի (Մեխմանա) գետակի ձորում։ Հանքավանի աղբյուրներն իրենց հատկությամբ նման են Կովկասյան հռչակավոր հանքային ջրերին (Էսենտուկի), հարուստ են երկաթի և գազի բաղադրությամբ։ Մանրազնին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս ջրերն ունեն բուժիչ բարձր հատկություններ ստամոքսային տարբեր հիվանդությունների դեմ։*

*Ներկայումս այստեղ կառուցվում է հանքային ջրերի գործարան։ Հայաստանի առողջապահության մինիստրությունը հարց է հարուցել Հանքավանում կառուցելու կուրորտ։ Կառուցման նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսված են։ Մոտակա տարիներում, Արզնիից և Ջերմուկից բացի, Սովետական Հայաստանը կունենա հանքային ջրերի մի նոր կուրորտ։*

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ.— Հայ անվանի վիպասան Մուրացանի «Առաջյալը» պատմվածքը հանրածանոթ է հայ ընթերցողին։ Այստեղ նկարագրված է հայկական գյուղի անցյալի պատկերը, նրա հետամնացությունը, խավարամտությունը։

Մուրացանի նկարագրած գյուղը՝ Չիբուխլուն (այժմ Ծովագյուղ) ներկայումս ոչնչով նման չէ նախկինին։ Գետնափոր խրճիթները իրենց տեղը զիջում են նոր, քարաշեն, լուսավոր տներին։ Վերջին 5 տարում այստեղ, բնակելի տներից բացի, կառուցվել է հիվանդանոց, ուսուցիչների համար բնակելի տուն, տնկված են մեծ թվով ծառեր, անց է կացված ջրմուղ։ Այժմ գյուղի բոլոր տներն ունեն էլեկտրական լուսավորություն, ռադիո։ Գյուղում կա ակումբ, գրադարան, միջնակարգ դպրոց, բուժարան, փոստի բաժանմունք։

ԲԱՄԲԱԿԵՂԵՆ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ.— Լենինականի բամբակեղեն գործվածքների գործարանը տարեցտարի ընդլայնում է արտադրությունը։ Այժմ այստեղ բացի բյազից արտադրվում են նաև այլ գործվածքներ, ինչպես նաև կիսամետաքսաթելեր։ Շուտով կսկսի աշխատել լթեղենի արտադրության բաժանմունքը, որով գործարանը հնարավորություն կունենա առաջիկա 1954 թվականին թողարկել 17 տարբեր տեսակի բամբակեղեն գործվածքներ, այդ թվում գեղեցիկ ծաղկավոր չիթ և կիսամետաքսյա գործվածք։ Հիշյալ բաժանմունքի կառուցման և կահավորման վրա ծախսվել է ավելի քան 12.000.000 ռուբլի։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ.— Սկսած 1947 թվականից Աշտարակի շրջանի Թալիշ գյուղում կատարվում են հնագիտական պեղումներ։ Պեղումների նպատակն է ուսումնասիրել Հայաստանի 7-րդ դարի մարզպան՝ իշխան Գրիգոր Մամիկոնյանի պալատի մնացորդները։ Այդ պալատը վաղ միջնադարի հետաքրքիր և արժեքավոր աշխարհիկ կառուցումներից մեկն է։ Իր ճարտարապետական ոճով այն շատ նման է Դվինի Կաթողիկոսարանին։

Մինչև այժմ կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերված է պալատի դահլիճներից մեկը, որը կառուցված է եռակամար բազիլիկի ոճով։ Դահլիճին կից հայտնաբերված է փոքրիկ մատուռ։ Ներկայումս պեղումներ են կատարվում հայտնաբերելու գլխավոր սյունազարդ դահլիճը և նրան կից շենքերը։ Առանձին որահով այս դահլիճը կապված է եղել տաճարի հետ, որը մինչև այժմ կանգուն է։ Պեղումների ընթացքում հայտնաբերված են տնային գործածության ծաղկազարդ ամաններ, կանացի արդուզարդ, որոնք բոլորն էլ պատկանում են 10—18-րդ դարերին։

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ.— Ընթացիկ 1953 թվականին Երևանի քաղաքային Սովետի շինարարական գրասենյակը (չհաշված մյուս շինարարական կազմակերպությունները) կատարել է ավելի քան 30.000.000 ռուբլու հիմնական շինարարություն։ Այդ գումարի մեկ երրորդ մասը ծախսվել է բնակարանային և դպրոցական շինարարության վրա։ Կառուցվել և օգտագործման են հանձնվել երկու միջնակարգ դպրոց, մեկ մանկապարտեզ և չորս խոշոր բնակելի շենք՝ շուրջ 7.500 քառակուսի մետր բնակելի տարածությամբ։

Առաջիկա 1954 թվականի համար միայն նույն գրասենյակի գծով նախատեսված է հիմնական շինարարության գումարները ավելացնել երկու անգամ, ըստ որում բնակարանային շինարարության համար հատկացվող գումարը մոտ հինգ անգամ ավելի է լինելու, քան 1953 թվականին։

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՇՐՋԱՆՈՒՄ.— Հայաստանի Պետական պատկերասրահը Արտաշատում կազմակերպել էր սովետահայ կերպարվեստի ցուցահանդես։ Ցուցադրված էին անվանի նկարիչներ Մ. Սարյանի, Գ. Գյուրջյանի, Ա. Սարգսյանի, Հ. Զարդարյանի, Մ. Աբեղյանի և ուրիշների մոտ 100 լավագույն նոր գործերը։ Ցուցահանդեսը շրջանի աշխատավորների մեջ առաջ բերեց մեծ հետաքրքրություն։ Երկու շաբաթվա ընթացքում ավելի քան հազար գյուղացիներ, բանվորներ, ծառայողներ և գյուղական ինտելիգենցիայի ներկայացուցիչ դիտեցին այն։

Ցուցահանդեսը փոխադրվելու և ցուցադրվելու է նաև մյուս շրջաններում։

ՁԻԹԱՊՏՈՒՂԻ ԱՌԱՋԻՆ ԲԵՐՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Հայաստանում պահածոների արդյունաբերության տրեստը Ալավերդու շրջանում, Այրում երկաթուղային կայարանից ոչ հեռու, ունի մերձարևադարձային կուլտուրաների մշակության հատուկ տնտեսություն, որտեղ աճեցվում են ձիթապտուղ, թուզ, նուռ, կաքինի և այլն։ Ձիթենու տնկիները երեք տարի առաջ այստեղ բերվեցին Ղրիմից։ Լավ խնամքի և բարենպաստ կլիմայի շնորհիվ այդ բույսը ընտելացավ տեղի պայմաններին և հաջողությամբ սկսեց աճել։

Այս աշնանը ձիթենու բոլոր մայր ծառերը տվեցին իրենց առաջին բերքը։ Պտուղներն աչքի են ընկնում իրենց համով, յուղայնությամբ, իսկ որոշ տեսակներ իրենց մեծությամբ ավելի խոշոր են, քան Ղրիմում աճեցվածը։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԱՃԸ.— Սովետական Հայաստանում շարունակաբար աճում է առողջապահական հաստատությունների ցանցը։ Ընթացիկ 1953 թվականին, նախապատերազմյան 1940 թվականի համեմատությամբ, հիվանդանոցների և առողջապահական հիմնարկներում աշխատող բժիշկների թիվը կրկնապատկվել է։ Գյուղական բուժարանների կեսից ավելին ունեն 6—10 մահճակալով մշտական հիվանդանոցներ։ Ներկայումս Երևանում կառուցվում է երկու նոր հիվանդանոց՝ 176 մահճակալով։ Նոր հիվանդանոցներ են կառուցվում Էջմիածնում և Թալինում, ինչպես նաև Ախուրյանի շրջանի Ազատան և Թալինի շրջանի Մաստարա գյուղերում։

**ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.**— Արարատ (Դավալու) կայարանից ոչ հեռու գտնվում է Հայաստանի ցեմենտի գործարանը։ Անցյալ տարի այստեղ կառուցվեց մեկ ուրիշ գործարան, որը ցեմենտի և ազբեստի խառնուրդից պատրաստում է քառակուսի կարծր թերթեր՝ շենքերի կտուրները ծածկելու համար։ Երկու գործարանների բանվորների և ծառայողների համար կառուցված է ավան։

Վերջերս Սովետական Միության շինանյութերի արդյունաբերության մինիստրության համաձայնությամբ կազմվեց ավանի բարեկարգման և հետագա կառուցման ճարտարապետական նախագիծը։ Ըստ այդ նախագծի մինիստրությունը հիշյալ նպատակի համար հատկացրել է 16.000.000 ռուբլի։ Այժմ ավանում ծավալվել է նոր շինարարություն։ Կառուցվում են նոր բնակելի տներ, կուլտուրայի տուն, միջնակարգ դպրոցի նոր շենք, բուժարան, ծննդատուն, հիվանդանոց, անց է կացվելու կոյուղի։

**ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.**— Սովետա-գերմանական բարեկամության միամսյակի կապակցությամբ Հայաստանի Պետական պատկերասրահը կազմակերպել է գերմանական կերպարվեստի ցուցահանդես։ Ցուցադրված են ավելի քան 150 նմուշներ՝ նկարներ, փորագրություններ, հախճապակյա գեղարվեստական գործեր։ Խոշոր տեղ է հատկացված գերմանական մեծ գեղանկարիչ Ա. Դյուրերին (1471—1528 թ. թ.)։ Հարուստ է հախճապակյա գործերի բաժինը, որտեղ ցուցադրված նմուշների մեծ մասը հռչակավոր Սաքս-Մեյսեն գործարանի (18—19-րդ դ. դ.) արտադրությունն է։

# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

*Երկուշաբթի, 10 օգոստոս, ժամը 13.30-ին, Մոսկվայէն օդանավով Բուքրեշ ժամանեց Ռումանահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս, վերադառնալով Էջմիածնէն։ Հաջորդ օր երեքշաբթի երեկոյան, Վազգէն սրբազան ընդարձակ զեկույց մը ներկայացուց եկեղեցական ազգային իշխանություններու և կազմակերպությանց ներկայացուցիչներու առաջ, իր Սովետական Հայաստան և Էջմիածին կատարած ճանապարհորդության և աշխատանքներու կապակցությամբ։*

***

*«Ստեփան Շահումյան» Մշակույթի տան հրավերով Տ. Վազգէն սրբազան, հինգշաբթի 14 օգոստոսի երեկոյան, խուռն բազմության մը ներկայության, ավելի քան ժամ մը տևող դասախոսության ընթացքին վառ գույներով և ոգևորությամբ պատմեց մեր Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանի այսօրվան ծաղկյալ վիճակի և նորանոր հաջողություններու մասին, կյանքի բոլոր մարզերուն մեջ։*

*Դասախոսության բացումը կատարեց Հայ մշակույթի տան նախագահ դոկտ. Գր. Բամպուքճյան, ուրախությամբ ողջունելով Ռումանահայ թեմի առաջնորդի վերադարձը Մայր Հայրենիքէն, որ, բոլոր Սփյուռքի հայության կյանքի և ներշնչման աղբյուրն է եղած ու պիտի մնա միշտ։*

*Խոսք առնելով Տ. Վազգէն սրբազան, ըսավ.*

*«Սիրտս լեցուն հայրենական անուշ հույզերով ձեզ կբերեմ բոլորիդ խանդավառ ողջույններ մեր Սովետական Մայր Հայրենիքէն և օրհնությունը հայրապետական Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի։*

*Վերստին երջանկությունը ունեցա այցելելու մեր Մայր Հայրենիքը ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և տեսնելու մեր վերածնած ու ծաղկյալ Հայրենիքի պայծառ դեմքը։*

*Էջմիածին, մասնակցեցա աշխատանքներու և խորհրդակցություններու, մեր Եկեղեցվո հետ կապված խնդիրներու առնչությամբ։ Հինգ անգամ սուրբ պատարագ մատուցանեցի Մայր Տաճարի և Երևանի եկեղեցիներու մեջ։*

*Մեծ ուրախություն է ինձ համար ավետել ձեզ թէ՝ մեր ալեզարդ Վեհափառ Հայրապետը, իր 85 տարիներու բեռան տակ, քաջառողջ է և առույգ, կորովի ու լավատես, աննկուն իր հավատքին մեջ դեպի Հայաստանյայց Եկեղեցվո ու հայ ժողովրդի ոսկի ապագան։*

*Աղոթող է մանավանդ ի սփյուռս աշխարհի ապրող մեր ժողովուրդի զավակներուն պահպանման, բարօրության և խաղաղության համար։*

*Ամենայն Հայոց Հայրապետի ծրագիրն ու իղձն է, որ Մերձավոր Արևելք ուղևորվելով մեր հավատացյալ ժողովուրդին տանիմ հայրապետական օրհնություններու հետ միատեղ՝ սիրո և խաղաղության խոսքը Հայաստանյայց Եկեղեցվո միասնականության, առաջնորդված՝ վերածնած Մայր Հայրենիքի լույս գաղափարներով։*

*Մայիս 15-ին, օդանավով Մոսկվա ժամանելով, երեք օր հետո իմ ճանապարհս դեպի Երևան շարունակեցի շոգեկառքով, որ օժտված է ամեն հարմարություններով, չորս օրերու ճամբան, ըստ կարելվույն հանգստավետ դարձնելու համար։*

*Եվ իրոք այդ չորս օրերը անցան հանգիստ ու հաճելի։ Իմ վագոնին մեջ որպես ուղեկից ունեցա մեր երկրի լավագույն գի-*

տական աշխատողներեն՝ պրոֆ.—դոկտ. Արաքսի Թաքայան (քիմիկոս), պրոֆ. Գեորգյան՝ Լենինականի Մանկավարժական ինստիտուտի տնօրենը, շինարարության գծով աշխատող անվանի ինժեներներու խումբ մը, իրենց գլուխը ունենալով ինժեներ Լեոն Երզնկյանը, և ուրիշներ։

Ավելորդ է ըսել, թե անմիջապես մեր մեջ մտերմական հարաբերություններ ստեղծվեցան հետզհետե աճող խանդավառությամբ։ Սա ինծի համար անմոռանալի դրացիություն մը եղավ մինչև Երևան։

Երբ շոգեկառքը կմտներ Երևանին, մեր ձայնասփյուռը սկսավ երգել ցնծագին և հաղթական՝ «Գարո՜ւն Երևան, սիրո՜ւն Երևան»։

Ահա և Երևանը 1953-ին։ Նորանոր բազմաթիվ կառուցումներ կտեսնեմ, կատարված վերջին երկու տարիներու ընթացքին։ Ասֆալտապատ նոր շոսե մը Զանգուի ափին Մանկական երկաթգիծեն դեպի Արզնի տանող, հոյակավոր ծածկված շուկա, Ֆիլհարմոնիայի դահլիճը, զմայլելի կերպով հորինված ու լուսավորված, և այլն և այլն։

Հրաշալի է Բաղրամյան պողոտան, որ կբարձրանա դեպի Արաբկիր։ Հարյուրավոր նոր շենքեր՝ գիտական, մշակութային կամ պետական հաստատություններ ու բնակելի շենքեր, բոլորը գունավոր տուֆով շինված մեկը մյուսեն տարբերվող գույներով ու ձևերով, մեկը մյուսեն գեղեցիկ։

Բաղրամյան պողոտայեն անցնելով, կխորհիս թե ճարտարապետական ցուցահանդես մըն է որ կայցելես։ Ամեն մեկ նոր շինություն ճարտարապետական գլուխ մըն է։ Ամեն մեկը՝ նոր և հաջող համադրություն մը՝ հայկական հին ճարտարապետական ոճի և սովետական նորագույն կառուցողական ըմբռնումներու։

Ի պատիվ իրենց, Սովետական Հայաստանի ճարտարապետները լավագույն կերպով կրցած են լուծել ազգային հին ոճը նորագույն գաղափարներու հետ ներդաշնավորելու խնդիրները։ Ինչպես մեր հին շրջաններուն, այսօր ալ հայ ճարտարապետության մեջ գեղեցիկի գաղափարը կիրականանա՝ այլազանության (անկրկնելիության) մեջ ներդաշնակության սկզբունքով։

Երևանի հոյակապ կառուցումներեն մին պիտի դառնա Մատենադարան-ձեռագրատուն շենքը, որ ավարտելու վրա է։ Կկառուցվի բազալտ քարե և իր մուտքին զետեղված պիտի ըլլան մեր հին մեծ մատենագիրներու և գիտնականներու ինը արձանները, որոնց շարքին՝ Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին, Մխիթար Հերացին և ուրիշներ։ Իմ այնտեղ եղած ատեն, մրցության մասնակցող քանդակագործները պատրաստած էին արդեն այս արձաններու մակետները, պետական հանձնաժողովին ներկայացնելու համար իրենց գործերը։

Այս անգամ առիթը ունեցա տեսնելու Սևանի ստորերկրյա հիդրոկայանը, որ կգտնվի Սևանա լճի ափին։ Լիֆտով իջանք և տեսանք սովետական տեխնիկայի այդ հրաշալիքը։ Ընդարձակ սրահներու մեջ զետեղված հսկա մեքենաներ — տուրբիններ, գեներատորներ, տրանսֆորմատորներ, խողովակներ և հազարումեկ այլևայլ մեքենական կազմվածքներ գիշեր ու ցերեկ անդադար շարժման մեջ են և առասպելական վիշապի նման գետնին տակեն կխմեն Սևանա լճին ջուրերը։

Այդ ջուրի զանգվածը շարժման մեջ դնելե հետո տուրբինները ու գեներատորները, որով ծնունդ կառնե էլեկտրական հոսանքը, իր փոթորկահույզ ճամբան կշարունակե լեռան տակեն, և դուրս գալով լույս աշխարհ իր վազքը կշարունակե Զանգու գետի հունով։

Սևանգէսի այս հսկայական և բարդ մեքենաները կաշխատին ավտոմատ կերպով, առանց մարդկային ձեռքի միջամտության։ Ամբողջ հիդրոկայանին մեջ միայն 2—3 մարդիկ տեսանք, մեքենաներու կեդրոնական սրահին մեջ, որոնք հարյուրավոր տեսակ ժամացույցներու առջև կանգնած կհետևին սլաքներու ցուցմունքներուն, արձանագրելու համար ջուրին քանակը, հոսանքին ուժը և այլն։

Սևանեն մինչև Երևան, Զանգուի ափին, կառուցված են արդեն 4 հիդրոկայաններ։ Պիտի կառուցվին ևս 4 նման հիդրոկայաններ, մեր երկրին պիտի տան առատ լույս, ջերմություն և շարժիչ ուժ, ու միաժամանակ պիտի ոռոգվին հարյուր հազարավոր հեկտար հողեր։

Այցելեցինք նաև Գյումուշգէսը։ Այստեղ, Զանգուի ջուրերը բերված են լեռան մը կատարը, և 4 հսկայական խողովակներով կիջեցվին հիդրոկայան։

Ջուրի այս հսկա զանգվածը, բարձրութենեն վար նետվելով, հոսանքի ուժով մը շարժման մեջ կդնե կայանին տուրբինները՝ ծնունդ տալով էլեկտրական էներգիայի։ Ապա ջուրը էլեկտրակայանեն դուրս գալով Զանգուի բնական հունին մեջ կմտնե և իր փրփրալի վազքը կշարունակե դեպի Երևան։

Սրբազան հայրը ապա մանրամասնորեն պատմեց մեր հայրենադարձ հայրենակիցներու բարգավաճ ու երջանիկ կյանքի մասին, ընդգծելով հատկապես փայլուն հաջողությունները երիտասարդ սերունդին և ուսանողության։ Այս խոստումնալից երիտասարդ մտավորականության մեջ, իրենց ձեռք բերած գիտական կոչումներով և աշխատանքի արդյունքներով, առաջին շարքին վրա կգտնվին Գեորգ Տիրացյանը և Սուրեն Քոլանչյանը պատմագիտության մեջ, Տիգրան և Մասիս Մանուկյան եղբայրները, Կայծակ Աթանասյանը, Հակոբ Առաքելյանը որպես ուսուցիչներ ֆրանսերեն և սպաներեն լեզվի, Անահիտ Աթանասյան, Թորոսմանյան, Գալայճյան Բ. և Գարիպյան գեղարվեստի գծով, Վահե Դանիելյան, Հակոբ Պարտիզպանյան, Սամսոն Պողոսյան որպես ինժեներներ, Հարություն Հակոբյան, Արամ Հովակիմյան՝ սպորտի չեմպիոնական տիտղոսներով և շատ ուրիշներ։

Սրբազան հայրը իր խոսքերը վերջացուց, ըսելով. «Հայրենադարձ երիտասարդի մը փայլուն հաջողությունը առանձնապես հուզում և ուրախություն պատճառեց ինձ։ Մոսկվայի հոյակավոր «Կոլոննի սալոն» մեջ, անվանի ռուս արվեստագետներու շարքին, երգեց նաև Բեյրութեն հայրենադարձ, Մոսկվայի կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանող՝ Լևոն Կեօզլանյանը։ Համերգին ծանուցողը երկու խոսքով ներկայացուց ներկա գտնվող ռուս մտավորական ունկնդիրներուն՝ տաղանդավոր հայ երգիչը, շեշտելով թե Լևոնը Թյուրքիո մեջ հալածված ժողովուրդի մը զավակ, ապաստան գտնելով Լիբանանի մեջ, հազիվ կարողացած է իր ապրուստը ճարել բանվորությամբ, բայց 1947-ին Մայր Հայրենիք գալով գտած է լավագույն պայմաններ՝ ուսանելու և իր բնատուր տաղանդը արժեքավորելու։ Եվ իրոք երիտասարդ հայ երգիչը իր երգերով հմայեց բոլորին և արժանացավ խելահեղ ծափահարություններու։

Լևոն Կեօզլանյանի կյանքի պատմությունը և իր այսօրվա փառքը կխորհրդանշեն հայ ժողովուրդի վերածնունդը և բարգավաճ ու հառաջադեմ կյանքի ընթացքը՝ շնորհիվ ռուս մարդասեր և մեծահոգի ժողովուրդի եղբայրական անվերապահ աջակցության և Սովետական իշխանության ստեղծած օգտաշատ պայմաններուն։

(Բուխարեստ, «ՆՈՐ ԿՅԱՆՔ», 23 և 30 օգոստոսի 1953 թ.)

## ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԵՋ

Երուսաղեմի միաբաններեն Բաբգեն վարդապետ Ապատյան, որ Պատրիարքարանի ներկայացուցիչն է Իսրայելի մեջ, հետևյալ տեղեկությունները կհաղորդե այդ գաղութի մասին («Հայ Եկեղեցի»ի մեջ)։

Իսրայելի մեջ 950 հայեր կապրին, 500 Հայֆայի և շրջականներում, 400 Յաֆայի և շրջականներում և մաս մըն ալ հրեական Երուսաղեմի մեջ։ Նախապես Պաղեստինի հայերը բարգավաճ գաղութ մըն էին (մոտավորապես 5.000 հոգի), մեծ մասը այժմ Հին Երուսաղեմի և Հորդանանի կցված Պաղեստինի մեջ կընակին։

Պատրիարքարանի հաստատությունները ամփոփված են Սիոն լեռան վրա, քաղաքի պարիսպներեն ներս, հոն, ուր ատեն մը կանգնած էր Հերովդեսի պալատը։ Այստեղ է վանքը, Ս. Հակոբյանց հրաշալի Մայր Տաճարը իր պատմական գանձերով, ժառանգավորաց վարժարանը, դպրոցներ, 500 ուխտավորներու բավելու չափ դարբասները։ Պատրիարքարանը ունի նաև բազմալեզվյան տպարան մը, ուր իր պաշտոնաթերթը «Սիոն» կհրատարակվի, և ճոխ մատենադարան մը, որ Եբրայական Համալսարանի և Ազգային մատենադարաններեն ետք երկրորդ տեղը կգրավե։ Մատենադարանը կպարունակե 4.000 ձեռագիրներ, մեծ մասը կիլիկյան շրջանեն։ Ասոնցմե մեկն է հնագույն երկաթագիր ավետարանը, հավանաբար ութերորդ դարեն։

Մեր Եկեղեցվո փառքի օրերեն մնացած վեց հայ վանքերեն երեքը Իսրայելի մեջ են. Յաֆայի Ս. Նիկողայոսը, ուր դարերե ի վեր կիջևանին հայ ուխտավորները, Ռամլեի Ս. Գեորգ զորավարին մենաստանը, որ 1927-ի երկրաշարժին կիսավեր եղած ու միայն եկեղեցին անխախտ մնացած է, և Սիոնի բարձունքին վրա Ս. Փրկչի վանքը, որ Կայափա քահանայապետին տանը տեղվույն վրա շինված է, հոն, ուր մեր Փրկիչը բանտարկվեցավ և ուր Ս. Պետրոս երեք անգամ իր Վարդապետը ուրացավ։ Այս վանքը հայ սուրբ տեղյաց ամենեն նվիրականներեն մեկն է, որովհետև դարերե ի վեր Երուսաղեմի պատրիարքներուն դամբարանները կպարունակե։

1948-ի կռիվներու ժամանակ չափազանց վնասված է, ճիշտ պատերազմի ճակատին վրա, հին քաղաքի պարիսպեն անմիջապես

*դուրս գտնվելուն համար։ Ապահովության համար, Իսրայելի բանակը պատերազմը սկսելու օրեն, վանքին մեջ գտնվող Ս. Հակոբյանց միաբանները տեղափոխեց։ Այդ շենքին մեջ կգտնվի, բացի կրոնական արժեք ներկայացնող առարկաներեն, մեր Փրկիչի գերեզմանաքարեն կտոր մը, որ միակն է սուրբ տեղյաց մեջ։*

*Անցյալի մեջ տասնյակ հազարավոր ուխտավորներ Հայաստանեն կուգային իրենց բարեպաշտիկ նվերներով։ Համաշխարհային առաջին պատերազմեն ի վեր այլևս չկան անոնք և Ս. Հակոբյանց վանքին հասույթի գլխավոր աղբյուրը կկազմեին իր հին ու նոր ստացվածքները, որոնք մեծ արժեք կներկայացնեին գլխավորաբար Նոր Երուսաղեմի ընդարձակվելու պատճառավ։ Սակայն, անոցմե մեծ մասը Իսրայելի սահմաններուն մեջ կգտնվի և անոնց հասույթը կարելի չէ փոխանցել Պատրիարքարանին։*

*Հրեական Երուսաղեմի 50-ի մոտ հայերուն համար պատահական պաշտամունքներ կկատարե հոգեշնորհ Տ. Հայկազուն վարդապետ Աբրահամյան, երկու կառավարություններու բարեհաճ արտոնությամբ։*

*Այդ պաշտամունքները կկատարվին նախկին լութերական եկեղեցիին մեջ, որ գերմանական գաղութին կպատկաներ։ Իսրայելի կառավարությունը զայն տրամադրած է հայերուն։*

(Բուենոս-Այրես, «ՇԱՐԺՈՒՄ», 5 սեպտեմբերի 1953 թ.)



# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Կ. ՍԻՏԱԼ, «ՊԱՅՔԱՐԻ ԵՐԳԵՐ»

(Հայպետհրատ, Երևան, 1953 թ.)




Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսավ սփյուռքահայ անվանի բանաստեղծ Կարապետ Սիտալի «Պայքարի երգեր» վերնագրով գրական-բանաստեղծական ժողովածուն։

Բանաստեղծի լույս տեսած այս գիրքը ընտիր հավաքածու է նրա զանազան ժամանակներում հրատարակած գործերի։ Գիրքն ամփոփ և սույն գաղափար է տալիս բանաստեղծի անցած ուղու և ստեղծագործական վերելքի մասին։

Ժողովածուն սկսում է բանաստեղծությունների մի շարանով, որն ունի «Պայքարի երգեր» ընդհանուր վերնագիրը։ Սիտալը իր այս բանաստեղծությունների մեջ խոշոր ընդհանրացումներ է անում՝ բանաստեղծության նյութ դարձնելով կյանքի առօրյա հրատապ հարցերը։ Այս բաժնում են տեղավորված նրա խաղաղական և չին հերոսական ժողովուրդներին նվիրված հրաշալի մարտական բանաստեղծությունները։

Ժողովածուի բանաստեղծությունների երկրորդ բաժինը վերնագրված է «Իմ ժողովրդին նաղրապատճ»: Նա այստեղ բանաստեղծական խոսքի գեղեցիկ համարությունններով տալիս է իր Հայրենիքի թշվառ անցյալի և նրա երջանիկ ու խաղաղ սէսօրսի տպավորիչ պատկերը։ Այս բաժնի բանաստեղծություններից ուշագրավ է մանավանդ նրա «Հայ ժողովրդին» խորագրված բանաստեղծությունը, որը նվիրված է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 25-րդ տարելիցին։ Լիրիկական գեղեցիկ համեմատություններով է գրված նմանապես նրա «Գովք Երևանի» բանաստեղծությունը։

Հատորի սովար մասն է կազմում նրա «Հաղթանակի երգեր» խորագրով բանաստեղծությունների շարքը, որի մոտիվն է աշխարհի ժողովուրդների, մանավանդ Սովետական Միության պայքարը ֆաշիստական ոհ հորդաների դեմ և առաջավոր ուժերի տարած փառավոր հաղթանակը։

Ժողովածուում ընդարձակ տեղ է բռնում նրա «Գյուղն իմ հեռավոր» պոեմը, որն էպիկական շընչով գրված մի պոեմ է, ուր առանձին դրվագների ձևով տեղ են գտել Արևմտյան Հայաստանում կանգնող հին հայ գյուղի սրտաճմլիկ պատկերները։ Ամենացայտուն տողերով նկարագրված են հայ և քուրդ ժողովուրդների գյուղացիների ու տառապանքները։

«Դյուցազնական» բաժնում տեղ է գտել Սիտալի «Պզտիկ Մհեր» և «Կայծի թաչեր» ավանդավեպերի մշակումը (վերջինից հատվածներ են տեղավորված ժողովածուում)։

Կ. Սիտալը մեր այն բանաստեղծ գրողներից է, որոնք իրենց ստեղծագործություններում մեծ ու պատվավոր տեղ են տվել ժողովրդական ավանդավեպերի, դյուցազնավեպերի (էպոսի) մշակմանը։ Իր հիշողություններում նա պատմում է, որ դեռ մանկուց լսելով իր մոտ ամբ-արել է հայ ժողովրդի բազմազգիս ստեղծագործություններից։

Սիտալը այդ ավանդավեպերը մշակելիս հանդես չի եկել լոկ սահմանափակ սիրող արվեստագետի դրչով. նա իսկական գեղագետի ստեղծագործական շնորհքով օգտվել, հանել է այդ ավանդավեպերից այն հիմնական կմախքն ու սյուժեն, որ յուրահատուկ է նրանց։ Նրա մշակած ավանդավեպերը խարսխված են ժողովրդի արդար պայքարի հողի վրա, պայքար, որ ուղղված էր իր հարստահարիչների դեմ։ Նրանց մեջ դրսևորված է ժողովրդի վառ հավատը՝ գալիք շեն ու պայծառ ապագայի նկատմամբ։

Բանաստեղծը «Սասնա ծռերը» գրել էր դեռ 1939 թվականին, երբ Հայկական ՍՍՌ-ում նշվում էր «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակը. 1946 թվականին նա իր գրած «Սասնա ծռերը» ենթարկեց վերամշակման, օգտվելով «Սասունցի Դավիթ» համահավաք տեքստից։

Լույս տեսած ժողովածուի վերջին մասն է կազմում Սիտալի արձակով գրված «Տեսա իմ երկրի արևածագը» հրապարակագրական ժանրի գործը։ Այս գրքում ամփոփված են բանաստեղծի տպավորությունները Սովետական Հայաստանից, ուր նա առաջին անգամ եղավ 1946 թվականին՝ մասնակցելով Հայաստանի

սովետական գրողների միության 2-րդ համագումարին։

Սիտալը աներկբայելի հմտությամբ և ջերմ հայրենասիրական շնչով կենդանացնում է վարպետ գրչով այն բոլորը, ինչ նա տեսել է Մայր Հայրենիքում, ուր ժողովուրդը նվաճել է ազատ կյանք, ուր ոչ շահագործում կա և ոչ երկյուղ։

Կ. Սիտալի «Ցեստ իմ երկրի արևածագը» գիրքը հայրենաբաղձ, հայրենակարոտ հայ մարդու հուզումնալից, ճշմարտապատում, խանդավառ խոսքն է։ Ամեն քայլափոխում նա հին, անցյալի գիրկը անցնողի կողքին տեսնում է այն նորն ու վերընթացը, որ աճում է հեքիաթային արագությամբ. և Սիտալը հենց Սովետական Հայաստանի այդ հարաճուն վերելքը համեմատում է մանուկ Սասունցի Դավթի հետ, «Երբ ուրիշները տարին տարի են մեծանում, նա ժամից ժամ էր ճառակ քայլում, ուժավոնում»:

Հայրենակարոտ պոետ քաղաքացին սրտի անհուն ջերկրանքով է դիտում իր Հայրենիքի նոր առօրյան, նրա բազմարեղուն կյանքը, արվեստը, մշակույթը։

Չկա իր նոր Հայրենիքի մի անկյուն, մի դպրոց, մի գործարան, մի նվիրական վայր, որ չայցելի բանաստեղծը։ Հայրենասեր բանաստեղծի համար միանգամայն պարզ է, որ Հայաստանը, ռունակոխ եղած արյունաքամ Հայաստանը, իր սեփական ուժով, իր ժերկ և արյունոտ բռունցքով անզոր էր իր հողից, իր հանդից, իր հնձանից, իր սրբավայրերից, իր դռնից, իր տնից և անգամ իր առասպելի նվիրականությունից հեռու պահել ընչաքաղց, բռնակալ, վանդալ, ոճրագործ և վայրենի թշնամուն։ «...Սովետական ռուս մեծասիրտ ու բարի ժողովրդի օգնությունն էր, Սովետական Միության եղբայրական ժողովուրդների անխարդախ բարեկամությունն ու հզոր պաշտպանությունն էր, որ հաց, նյութ, մեքենա և խաղաղություն տվեց, որ գործիք և բարեկեցություն ապահովեց հայ ժողովրդի համար...»։

Իրականացել է հայ ժողովրդի դարերի երազանքը։ Հեղինակը գեղեցիկ այլաբանությամբ վերջում տալիս է այդ իրականացումը. «Հզոր է հայ ժողովուրդը և իմաստուն ու պտղաբերական։ Ահավոր ու անվերջ արկածներից հետո նա գտել է այն կախարդական հավքը, այն կենսապարգև ճոզարան բլբուլը — արհեստավորի ու գյուղացու այն նոր աշխարհը, որին նա սպասել էր կալանավոր Փոքրիկ Մհերի ործից ի վեր՝ վառ հույսով և անխախտ հավատքով»,— և ապա բանաստեղծական բարձր պաթոսով վերլուծում. «Լուսաբեր և հզոր մի հրեղեն արծվի նման մեր ժողովուրդը կանգնել է իր վեհափառ և վարդածիծաղ արևածագի դեմ։ Նրա առաջ բացվում են ցնծությամբ, սիրով և արևներով բոցավառ՝ անծայրածիր և անպարփակ հորիզոններ»։

Սիտալն իր այս վերջին գործով հանդես եկավ որպես լավագույն արձակագիր հրապարակագիր։

Ժողովածուի լեզուն մաքուր գրական է՝ համեմված ժողովրդական պատկերավոր դարձվածքներով։

Կ. Սիտալի բանաստեղծությունների ներկա հատորյակի հրատարակումով Հայաստանի Պետական հրատարակչությունը գնահատելի գործ է կատարել. նա մեր ընթերցող հասարակության լայն խավերին հնարավորություն է ընձեռել ծանոթանալու հայրենասեր գրողի ստեղծագործությունների լավագույն նմուշների հետ։

Գիրքը կազմված է խնամքով և գեղարվեստական նուրբ ճաշակով։

Ռ. Ս.



# ՌՈՍՏՈՎԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՎ ՁԵՌԱԳՐԵՐ

*Ռոստովի հայոց եկեղեցական խորհուրդը հանգուցյալ Հովակիմ Բեդելյանի ընտանիքից ստացել և Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ուղարկել Մասեհ Բաբաջանյանի կտակի շուրջը եղած դրագրության գործը, որը կազմված է հարյուրավոր վավերագրերից։ Գործը վերնագրված է՝* «Հանգուցեալ Մասեհ Բաբաջանեանի կալուածքի արդեանց ստացման եղանակը կարգաւորելու և յարակից խնդիրները յարդարելու համար բուսաբանութեան դոկտոր Յովակիմ Բեդելեանի առաքելութիւնն ի Կալկաթա»։ *Գործի կազմումը սկսվել է 1912 թվականի նոյեմբերի 6-ին և վերջացել 1913 թվականի մարտի 26-ին։ Սակայն գործի կազմման ժամանակ, այն ամբողջացնելու նպատակով, բերվել են այդ խնդրի շուրջը անցյալում եղած կարևոր վավերագրերի պատճենները, օրինակ՝ Բենգալիայի Ֆորտ-Ուիլյամի գերագույն դատարանի 1861 թվականի սեպտեմբերի 26-ի դատավարության վճռաթերթը, որի մեջ Միքայել Նալբանդյանը հանդես է եկել որպես պահանջատեր (այս վավերագրի հայերենն է թարգմանված անգլերենից), Նոր-Նախիջևանի եկեղեցական խորհրդի 1907 թվականի մարտի 9-ի գրության պատճենը Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցու քահանա Տ. Սահակ Հակոբջանյանին, նշված քահանայի պատասխան գրությունը (բնագիրը) և բազմաթիվ այլ վավերագրեր։*

*Ռոստովի հայոց եկեղեցական խորհրդի ուղարկած վավերագրերի մեջ, բացի Մասեհ Բաբաջանյանի գործերին վերաբերող վավերագրերից, կան մի շարք արժեքավոր վավերագրեր (բնագրերով), որոնք գրված են Խրիմյան Հայրիկի, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքների կողմից Ռոստովի հայոց եկեղեցական խորհրդին։ Այս վավերագրերի մեջ են նույնպես 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի առաջին քսանամյակում գրված ժամանակի աչքի ընկնող հայ հասարակական ու եկեղեցական գործիչների նամակները։ Վերջինների մեջ են գտնվում մի քանի գրություններ, որոնք ուղղված են ներկայիս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, նրա այնտեղ որպես առաջնորդ պաշտոնավարած ժամանակ, ինչպես նաև Վեհափառ Հայրապետի նույն ժամանակ գրած մի քանի նամակները տեղի հայ քահանաներին, որոնք արժեքավոր են Վեհափառ Հայրապետի անցյալի մեղվաջան գործունեությունը պատկերացնելու տեսակետից։*

*Ռոստովի հայոց եկեղեցական խորհուրդը Մայր Աթոռ է ուղարկել նաև հայերեն չորս ձեռագրեր, որոնց բովանդակությունը մանրամասն կտրվի Մայր Աթոռի ձեռագրաց ցուցակում և կտպագրվի մեր ամսագրի առաջիկա տարվա համարներից մեկում։*

*Այս վավերագրերի և ձեռագրերի ձեռքբերման գործում առանձնապես մեծ աշխատանք է կատարել Նոր-Նախիջևանի քահանաներից Տեր Գևորգ Դարբինյանը, որը արժանի է գնահատանքի և խրախուսման։*

*Ցանկալի է, որ մեր թեմերի բոլոր հոգևորականները և աշխարհական գիտակից հավատացյալները անեն իրենց կարգին՝ հավաքելու և Մայր Աթոռ ուղարկելու հին հայկական բոլոր վավերագրերը և ձեռագրերը, փրկելով կորստից մեր նախահայրերից մեզ ժառանգություն մնացած հիշատակարանները։*

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ Մ. Վ., «Ստեփան Շահումյան»: *Կյանքի և գործունեության համառոտ ակնարկ։ Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի գլխավոր վարչության կենտրոնական դասախոսական բյուրո, Երևան, 1953 թ., 45 էջ, տպաքանակ՝ 3.000։*

ԳՆՐՑԵՆ Ա. Ի., «Եղելություններ և խոհեր». *երեք գրքով. գիրք Գ. Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 644 էջ, տպաքանակ՝ 4.000։*

ԳՈԳՈԼ Ն. Վ., «Երկերի ժողովածու», *վեց հատորով, 1-ին հատոր։ (Բովանդակություն՝ Ն. Ստեպանով— Ն. Վ. Գոգոլը (քննադատական-կենսագրական ակնարկ), Երեկոներ Դիկանկայի մերձակա խուտորում, Հավելված, Ծանոթություններ)։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 481 էջ, տպաքանակ՝ 5.000։*

ԳՈՆՉԱՐՈՎ Ի. Ա., «Ջարդարար», *վեց հինգ մասից։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 683 էջ, տպաքանակ՝ 6.000։*

ԻՈՑՖԵ Ի. Ս., «Օրգանական քիմիա» *(համառոտ դասընթաց)։ ՍՍՌՄ բարձրագույն կրթության մինիստրության կողմից թույլատրված է իբրև դասագիրք ոչ մասնագիտական բուհերի և բնագիտական ու բիոլոգիական մասնագիտությունների ֆակուլտետների համար։ Հայկական ՍՍՌ Պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, Երևան, 1952 թ., 439 էջ, տպաքանակ՝ 2.000։*

ՀՅՈՒԳՈ ՎԻԿՏՈՐ, «Փարիզի Աստվածամոր տաճարը»: *Թարգմանեց Վահե Միքայելյան։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 543 էջ, տպաքանակ՝ 5.000։*

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, «Հատընտիր»: *Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 198 էջ, տպաքանակ՝ 5.000։*

ՄԱԼՑ ԱԼԲԵՐՏ, «Պատմվածքներ»: *Անգլերենից թարգմանեց Ս. Ալեմյան։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 151 էջ, տպաքանակ՝ 5.000։*

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ Վ. Վ., «Արտասահմանյան բանաստեղծություններ և ակնարկներ»: *Կազմեց և խմբագրեց Հրաչյա Գրիգորյան։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 289 էջ, նկարազարդ, տպաքանակ՝ 3.000։*

ՄԱՐՇԱԿ Ս., «Մանուկներին»: *(Բովանդակություն՝ Կլոր տարի, Նախշուն գիրքը, Կաբուսել, Մեր բակի երեխաները, Հեքիաթ և եղելություն, Հերոսական, Դպրոցական ընկերներ)։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 168 էջ, տպաքանակ՝ 10.000։*

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ, «Յասվա», *վիպակ։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 214 էջ, տպաքանակ՝ 5.000։*

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, «Ընտիր երկեր»: *(Բովանդակություն՝ Բանաստեղծություններ, Արձակ, Քննադատություն և հրապարակախոսություն, Նամակներ, Ծանոթություններ)։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչության, Երևան, 1953 թ., 538 էջ, տպաքանակ՝ 6.000։*

ՇԵՔՍՊԻՐ ՎԻԼՅԱՄ, «Ընտիր երկեր», *2-րդ հատոր։ Բնագրից թարգմանեց Խաչիկ Դաշտենց։ (Բովանդակություն՝ Սխալների կոմեդիան, Անսանձ կնոջ սանձահարումը, Վերոնացի երկու ազնվականները, Սիրո ապարդյուն ճիգերը, Տասներկուերորդ գիշեր կամ ինչ որ կամենաք, Վինձորի զվարճասեր կանայք, Միջամառնային գիշերվա երազ, Իզուր տեղը մեծ աղմուկ, Ծանոթություններ)։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 575 էջ, տպաքանակ՝ 5.000։*

ՇՉԵՐԲԱԿՈՎ Դ. Ի., «Ա. Ե. Ֆերսմանը և նրա ճանապարհորդությունները»: *Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 243 էջ, տպաքանակ՝ 3.000։*

ՉԵԽՈՎ Ա. Պ. «Ընտիր երկեր», *երեք հատորով, 1-ին հատոր։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 596 էջ, տպաքանակ՝ 5.000։*

ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻ Ն. Գ., «Ինչ անել»: *Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 509 էջ, հեղինակի նկարով, տպաքանակ՝ 5.000։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» *(19-րդ դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը)։ Հայկական ՍՍՌ Պետգրապալատ, Երևան, 1953 թ., 401 էջ, տպաքանակ՝ 1.500։*

ՔՈՒՌՇՅԱՆ ՊԵՐՃ, «Երկերի ժողովածու», *2-րդ հատոր։ (Բովանդակություն՝ Ցեցեր, Բզզե, Հունտո)։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 628 էջ, տպաքանակ՝ 10.000։*

ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Ս., «Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը 19—20-րդ դարերում»: *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1953 թ., 178 էջ, տպաքանակ՝ 4.000։*

ՏՈԼՍՏՈՅ Լ. Ն., «Պատմվածքներ»: *(Բովանդակություն՝ Սևաստոպոլյան պատմվածքներ, Երկու հուսար)։ Հայպետհրատ, Երևան, 1953 թ., 298 էջ, տպաքանակ՝ 10.000։*

# ՑԱՆԿ

## «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1953 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

### I. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Լիոնի և շրջակայքի ազգային միության կենտրոնական վարչության և հայ ժողովրդին, VI՝ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Կալիֆորնիո հայոց թեմի առաջնորդ բարձրապատիվ Տ. Շնորհք վարդապետ Գալուստյանին և համայն հոտին, V՝ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Կոստանդնուպոլսի Պատրիարքին և բյուրքանայ ժողովրդին, IX՝ 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ձեռագիրը Թավրիզի թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կարապետ ավագ քահանային, I՝ 7:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական գրությունը Մայր Հայրենիքի և Սփյուռքի բոլոր թեմերին, XI–XII՝ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ցավակցությունը ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի մահվան առթիվ. V՝ 7:

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ.ի շրջաբերական ձեռագիրը բոլոր թեմերին և վեհափառի անունով ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները, I՝ 8:

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ.ի շրջաբերական ձեռագիրը քույր եկեղեցիներին և Վեհափառի անունով ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները, I՝ 12:

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ.ի անվանակոչության տոնի առթիվ ստացված շնորհավորական հեռագրերը. IX՝ 6:

Բուլղարական Ուղղափառ եկեղեցու Նորընտիր Պատրիարք և Սոֆիայի Միտրոպոլիտ Նորին Ս. Օծություն Կիրիլի գրությունը Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսին իր ընտրության և գահակալության առթիվ և Վեհափառի պատասխանը. VII–VIII՝ 3:

Փրկչի Հրաշափառ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ.ի հեռագրերը և Վեհափառ Հայրապետի անունով ստացված շնորհավորական հեռագրեր և գրություններ, IV՝ 3:

### II. Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական հեռագիրը Սովետական Միության Մինիստրների Սովետի Նախագահ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի հիվանդության առթիվ. III՝ 5:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ցավակցական հեռագիրը ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին՝ ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի Նախագահ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի մահվան առթիվ. III՝ 11:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շրջաբերական հեռագիրը Սովետական Միության և Սփյուռքի թեմական առաջնորդներին՝ ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի Նախագահ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի մահվան առթիվ, III՝ 12:

Կառավարական հաղորդագրություն ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի Նախագահ և ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի քարտուղար Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի հիվանդության մասին, III՝ 3:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի և ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության կողմից՝ պարտիայի բոլոր անդամներին, Սովետական Միության բոլոր աշխատավորներին, III՝ 6:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի որոշումը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի աճյունն ամփոփող սարկոֆագի տեղի մասին, III՝ 8:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի որոշումը Սովետական երկրի մեծ մարդկանց հավերժ փառքի հուշարձան՝ պանթեոն կառուցելու մասին, III՝ 9:

ԱԼԹՈՒՆՅԱՆ Լ. (ԴՈԿՏ.)— Ստալինը անմահ է. III՝ 20:

ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ.)— Իմ ջլ խոսքը, III՝ 17:

ԳԵՈՐԳՅԱՆ ՔԱՋԻԿ ՍԱՐԿԱՎԱԳ— Համաժողովրդական վիշտը, III՝ 28:

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ— Մեր օրերի առաջնորդը մեզ հետ է, III՝ 17:

ՂԱՓԱՆՑՅԱՆ Գ.— Մտքի տիտանը, III՝ 18:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ— Մայր Աթոռը սգում է, III՝ 27:

ՄԵԼԻՔ-ԻԱՋԱՏՐՅԱՆ Ս.— Հայ ժողովրդի սգո օրերը. III՝ 31:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՂԱՎՆԻ— Հավերժ փա՜ռք Ստալինի հիշատակին, III՝ 19:

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ— Վշտի խոսք, III՝ 21:

ՓԱՅԼԱԿ ՄԻԱԾԱՆ— Հանգչող սիրտը, III՝ 22:

## III. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ամանորի բարեմաղթություններ, I՝ 3:
Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, X՝ 3:
Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու 125-ամյակը, V՝ 8:
«Արծաթագին տողեր», VII–VIII՝ 8:
Գանձ ու Գանձակարը, IX՝ 11:
Հայ ժողովրդի ազատության և անկախության փառապանծ տոնը, XI–XII՝ 4:
Հավերժ փա՜ռք Ի. Վ. Ստալինին, III՝ 18:
Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի սպասավորության քսանամյակը, XI–XII՝ 8:
Սրբոց թարգմանչաց տոնը, VI՝ 6:
Սուրբ Հարության տոնը, IV՝ 12:
Օրմանյան պատրիարքի «Հայոց եկեղեցին» և կարդինալ Աղաջանյանը, II՝ 3:

## IV. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԹՂԹԱԿԻՑ— Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի պատասխանները մեր հարցումներուն, XI–XII՝ 19:
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ— Ավագ շաբաթը և զատկական տոները Մայր Աթոռում, IV՝ 18:— Ծննդյան տոները Ս. Էջմիածնում, I՝ 35:
ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՂԱՎՆԻ— Ս. Էջմիածնի տոնը, VII–VIII՝ 36:
ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ— Գրական-գեղարվեստական հանդես Ս. Էջմիածնում՝ նվիրված սրբոց թարգմանչաց սրբազան հիշատակին, X՝ 17:— Մի օր Մայր Աթոռում, VII–VIII՝ 15:— Տեսակցություն Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսի հետ, I՝ 16:
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ (լուրեր Մայր Աթոռից). III՝ 35, IV՝ 21, VI՝ 35, VII–VIII՝ 14, IX՝ 27, X՝ 14, XI–XII՝ 54:

## V. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ պատասխանը Դերենիկ եպիսկոպոսին, X՝ 10:
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Ս.— Ծննդյան տոնակատարությունները Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցում, I՝ 38:
ԴՐԱՄԲՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ— Սուրբ Էջմիածին, VI՝ 10:
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ— Ուխտագնացություն դեպի Օշական, VI՝ 39:
ՄԻԱԲԱՆ— Ամանոր և Ս. Ծնունդ, I՝ 21:
ՎԱԹՅԱՆ ԳՆՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ— Մեր Հայրենիքի տոնը, XI–XII՝ 11:— Սիրո պատվիրանը Հիսուսի վարդապետության մեջ, X՝ 11:
ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Տյառնընդառաջ, II՝ 21:
ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ.— Ս. Էջմիածնի խորհուրդը, VII–VIII՝ 11:
ՓՈԼԱՏՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Տոն Կաթողիկե Ս. Էջմիածնի, IX՝ 18:— «Ուխտս դի՛ք և կատարեցէ՛ք», X՝ 8:

## VI. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. (ՊՐՈՖ.-ԴՈԿՏ.)— Դավիթ Ալավկա որդու կանոնները, I՝ 50, II՝ 53, III՝ 51:— Վավերագրեր 17-րդ դարի հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, V՝ 21:
ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ.)— Հայերենից փոխառյալ բառեր պարսկերենում, IV՝ 23:— Հայոց անձնանունները, X՝ 21, XI–XII՝ 25:
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ— Հայոց դերը բյուզանդական կայսրության մեջ, XI–XII՝ 15:
ԵՐԵՄՅԱՆ Ա.— ԺԷ դարի մի նորահայտ գրչագիր ավետարան, IV՝ 44:— Մանրանկարիչ Սարգիս Պիծակ, IX՝ 45, X՝ 30, XI–XII՝ 30:— Ստեփանոս Երեցի մեծարժեք ձեռագիր մատյանը, VII–VIII՝ 26:
ՄԱՐՏԻՐՅԱՆ ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ— Ջեբել-Մուսայի բարբառը, II՝ 33, VI՝ 27, VII–VIII՝ 38:
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ— Հռիփսիմեի տաճարը, II՝ 26:— Ներսես Աշտարակեցու կատարած խոշոր դերը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում, V՝ 31:
ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՂԱՎՆԻ— Կոմիտաս վարդապետի դերը խազագրության և հայ եկեղեցական երաժշտության ասպարեզին մեջ, X՝ 36:
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ կոթողը Արևելյան Հայաստանի ազատագրության առթիվ, V՝ 15:
ՍԱՐԳՍՅԱՆ Գ.— Դեղձնուտի վանքը և նրա վիմագրությունը, IV՝ 39:— Հուշարձանների պահպանությունը և վերանորոգությունը Սովետական Հայաստանում, XI–XII՝ 41:
ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Ս.— Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյան, XI՝ 51:
ՍԵՄՅՈՆՈՎ Լ. (ՊՐՈՖ.).— Ամանոր, I՝ 25:— Անանիա Շիրակացին որպես աստղաբաշխ, VI՝ 21, VII–VIII՝ 22:— Զատկի տոնի տոմարական սահմանումը, VI՝ 60:
Մայր աթոռի վիճակը պարսկա-թուրքական տիրապետության տակ, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման նախօրյակին (1828 թվականի վավերագիր), V՝ 12:

## VII. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ.)— Հուշեր Կոմիտասի մասին. VI· 18:
ԴԱՐԲԱՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ— Հիշողություններ Արուսյակի մասին, VII—VIII· 51:

## VIII. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԱՄՅԱՆ Հ.— Մեր Հայրենիքի լավագույն որդիների և դուստրերի շարքում, III· 40:— Վարպետը. X· 40:
ԲՈՌՉԱՆՅԱՆ Տ.— Արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Դանիել Ղազարյանը, VII—VIII· 55:
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.— Նոր ուսումնական շենքեր Երևանում, X· 47:
ՄԱՐՏՈՒՆԻ Ա.— Նոր ճամայրում Միութենական ակադեմիայում, XI—XII· 60:
ՄԵԼԻՔ-ԽԱՉԱՏՐՅԱՆ Ս.— Աշխարհի հնագույն որսանոցը, VII—VIII· 48:
ՄՆՍՐՈՔՅԱՆ ԱՂԱՎՆԻ— Տպավորություններ Թալինից, IX· 42:
ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ— Աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները, III· 37:— Երևանյան տպավորություններ, II· 40, IV· 50:— Հայկական ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճը, VI· 49:— Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը, V· 42:
Գիտական սեսիաներ՝ նվիրված Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելու 125-ամյակին, V· 39:
Կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի մահվան 25-ամյակը, VI· 50:
Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 50-ամյակը, VI· 52:
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տասնամյակը, XI—XII· 69:
Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի ծննդյան 75-ամյակը, VI· 51:
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, II· 44, IV· 55, VI· 54, X· 55, XI—XII· 81:
ԷԼԻԶԱ ԲՐԱՆԿՈ— Երջանիկ հանդիպումներ, I· 51:
ԺՈՐԺԻ ԱՄԱԴՈՒ— Սովետական Հայաստանը խաղաղության ու բերկրանքի երկիր է. I· 47:
Անգլիական բանվորական դելեգացիան Հայաստանում, XI—XII· 73:
Անգլիական դելեգացիան Հայաստանում, IX· 88:
Ավստրո-սովետական ընկերության դելեգացիան Երևանում, I· 43:
Արգենտինյան բանվորական դելեգացիան Հայաստանում, VII—VIII· 40:
Գերմանական գիտնականների դելեգացիան Հայաստանում, X· 53:
Գերմանական ճարտարապետների Հայաստան այցելության առթիվ, I· 41:
Գերմանա-սովետական բարեկամության ընկերության դելեգացիան Հայաստանում, XI—XII· 78:
Դանիա-սովետական ընկերության դելեգացիան Հայաստանում, VII—VIII· 45:
Իտալիայի կուլտուրայի գործիչների դելեգացիան Հայաստանում, XI—XII· 76:
Լեհական ճարտարապետները Հայաստանում, VII—VIII· 42:
Լեհ-սովետական բարեկամության ընկերության դելեգացիան Հայաստանում, I· 45:
Խաղաղության համաշխարհային խորհրդի անդամ, նորվեգական պաստոր Ռագնար Ֆորբեկը Հայաստանում, IX· 30:
Խաղաղության պաշտպանության Շվեդական կոմիտեի դելեգացիան Հայաստանում, XI—XII· 75:
Կանադա-սովետական բարեկամության ընկերության նախագահ Դայսոն Կարտերը Հայաստանում, IX· 32:
Հնդկական երիտասարդական դելեգացիան Հայաստանում, IX· 35:
Ճապոնական կանանց դելեգացիան Հայաստանում, VII—VIII· 40:
«Նիդեռլանդներ—ՍՍՌՄ» ընկերության դելեգացիան Հայաստանում, VII—VIII· 39:
Շվեյցարական կանանց դելեգացիան Հայաստանում, IX· 39:
Ռումինական գիտության և կուլտուրայի գործիչների դելեգացիան Հայաստանում, X· 51:
«Ֆրանսիա—ՍՍՌՄ» ընկերության դելեգացիան Հայաստանում, IX· 37:

## IX. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Բ.— Երանաշնորհ Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցը Անթիլիասի մեջ, IX· 58:
ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ՇՆՈՐՀՔ Ծ. ՎՐԴ.— Ուղերձ Կալիֆորնիո թեմի երեսփոխանական ժողովը, VII—VIII· 56:
ԵՂԻՎԱՐԴ— Հող հայրենի, IV· 47:
ԷՍԿԻՃՅԱՆ Մ.— Կարոտ հայրենի, VII—VIII· 61:
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Ողջույնի խոսք. III· 48:
ՊԱԼՃՅԱՆ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Նոթեր ռումանահայ կյանքի մասին, VI· 57:
ՌԱՋԳՐԱՏԼՅԱՆ Դ. Հ.— Բուլղարահայերը, V· 47:
ՍԻՄՈՆՅԱՆ ՍԻՄՈՆ— Զեկույց Երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի ձեռագիրներուն մասին, IX· 56:
Արժեքավոր նկարների նվիրումը Երևանի Պետական գեղարվեստական թանգարանին, II· 52:
Արտասովոր մի դեպք 20-րդ դարում, II· 52:
Դպրոցասեր տիկնանց ընկերակցության ընդհանուր քարտուղարուհի տիկին Ա. Բոյաջյանի ուղերձը՝ Դպրոցասեր տիկնանց ընկերության 75-ամյա հոբելյանի առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի ուղարկած կոնդակի ընթերցման հանդիսության ընթացքում, IV· 59:

եկեղեցական ժողով Սոֆիայի մեջ, IV՝ 58։
Կաթողիկոսական պատվիրակ Սիոն եպիսկոպոս Մանուկյան Հարավային Ամերիկայում, II՝ 49։
Կյանքը Ինդոնեզիայի հայ գաղութում, VI՝ 61։
Հայագիտական աշխատանքներ Ռումինիայում, II՝ 51։
Հայ գաղութը Իսրայելի մեջ, XI—XII՝ 88։
«Մեղանչե՛, ապա խոստովանի՛ր», I՝ 54։
Նորայր Բյուզանդացու ձեռագրերի մասին», VI՝ 62։
Պապական Եկեղեցին և Հայոց Եկեղեցին, I՝ 54։
Տպավորություններ Սովետական Հայաստանից, XI—XII՝ 84։
Փարիզի Հայաստանյայց Եկեղեցու կրոնական ընկերակցության վարչական ժողովի նամակը Ամենայն Հայոց Հայրապետին՝ Նորին Ս. Օծության Դպրոցասեր տիկնանց միության 75-ամյա հոբելյանի առթիվ ուղարկած կոնդակի ստացման մասին, IV՝ 58։
«Ցրիկի դիվանը», VI՝ 61։

## X. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ— Խաղաղության պաշտպանության շարժումը և Հայ Եկեղեցին, IX՝ 16։
Ժողովուրդների կոնգրեսի կոչը, I՝ 32։
«Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեում, I՝ 34։
Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի բանաձևը, IX՝ 23։
Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոյի կոմյունիկեն, VI՝ 18։
Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիան, VI՝ 14։
Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիայի դեկլարացիան՝ բանակցությունների օգտին համաշխարհային կամպանիա սկսելու մասին, VI՝ 16։
Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիայի կոչը, VI՝ 16։
Խաղաղության Համաշխարհային խորհրդի ընդհանուր բանաձևը, XI—XII՝ 57։
Խաղաղության Համաշխարհային խորհրդի Վիեննայի սեսիան, XI—XII՝ 55։
Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսը, I՝ 29։
Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի դիմումը հինգ մեծ տերությունների կառավարություններին, I՝ 29։
Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի համաժողովի կոչը ուղղված հասարակայնությանը, IV՝ 17։
Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի համաժողովի նիստը, IV՝ 16։
Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի պլենումը, IX՝ 24։
Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումը, IX՝ 22։
ՍՍՌ Միությունում գտնվող բոլոր եկեղեցիների և կրոնական միավորությունների խաղաղության պաշտպանության հարցին նվիրված կոնֆերենցիայի արձագանքները, II՝ 7։
Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրիի հայտարարությունը, IX՝ 21։

## XI. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ— Նոր տարի, I՝ 52։
ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ— Ծխնելույզներ, IV՝ 48։— Նոր տարի, I՝ 58։— Ռուս մեծ ժողովրդին, VI՝ 48։

## XII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՆՈՏԱՑԻԱՆԵՐ, ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ ԵՎ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Բ.— «Կիլիկյան հայկական պետության պատմություն», պրոֆ. Գ. Գ. Միքայելյան, IX՝ 61։
ԲԱՆԱՍԵՐ— Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» ռուսերեն, X՝ 61։
ՄԻՆԱՍՅԱՆ Ա.— «Հին հայկական մանրանկարչություն» (Ալբոմ), IV՝ 63։
Ռ. Ս.— Կ. Սիտալ, «Պայքարի երգեր», XI—XII՝ 88։— «Հայ գրականության բիբլիոգրաֆիա» (XIX դարից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը)։ Կազմեց՝ Հովհ. Պետրոսյան, VII—VIII՝ 62։— «Հուշարձան հայ ավետարանականաց և Ավետարանական Եկեղեցվո» (Քննական ծանոթություններով)։ Գրեց՝ Վեր. Կ. Գ. Առանձյան, II՝ 62։
Բիբլիոգրաֆիա Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Հրաչյա Աճառյանի տպագրված և անտիպ աշխատությունների (գրքեր և հոդվածներ), V՝ 57։
Գիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ, XI—XII՝ 91։
Ռոստովից ստացված արժեքավոր վավերագրեր և ձեռագրեր, XI—XII՝ 90։

## XIII. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանի մահը, V՝ 30։
Հանգիստ արժանապատիվ Տ. Վարդան Քահանա Վարդերեսյանի, II՝ 61։
Հանգիստ Տ. Հովհաննես ավագ Քահանա Տեր-Մինասյանի, IV՝ 60։
Հանգիստ Տ. Վարդգես ավագ Քահանա Գրիգորյանի, I՝ 63։
Պրոֆեսոր Արսեն Հարությունի Տերտերյան, X՝ 59։
Տարագրոս Սանփանի Տեր-Վարդանյան, IV՝ 61։